Эти принципы указывают основные направления проникновения логики в педагогику математики и являются фундаментальными для методики обучения математике. При несоблюдении их в процессе обучения математике последняя утрачивает свои основные черты как наука, т.е. те качества, которые собственно и выделяют её из системы прочих наук. В итоге обучаемый получает искажённое представление как об общей картине математики, так и об отдельных её деталях.

Подготовка учителей математики в соответствии с принципами логики

В силу той роли, которую играет логика в математике как науке и в процессе обучения математике, логическая подготовка будущих учителей математики наиболее важна во всей системе их подготовки. Эта подготовка должна быть профессионально-педагогически направлена. Для этого в ней выделяются две составные части: собственно логическая подготовка и логико-дидактическая подготовка.

В фундаменте собственно логической подготовки лежит профессионально-педагогически ориентированный курс математической логики [2], [3], [4]. Предлагается концепция системообразующей роли этого курса в системе подготовки будущих учителей математики в педвузах. Существо концепции состоит в том, что, во-первых, в профессионально ориентированном курсе математической логики студенты приобретают такие знания и вырабатывают такие умения по логике, которые будут необходимы им в их будущей педагогической работе. В этом состоит этап логической подготовки будущих учителей математики. Во-вторых, от основополагающего курса математической логики понятия, идеи и методы математической логики проникают во все математические курсы педвуза – геометрии, алгебры и теории чисел, математического анализа, числовых систем, дискретной математики, теории алгоритмов [5], [6], [7]. В этих курсах акцентируется внимание студентов на тех вопросах, которые имеют принципиальное логическое значение. Тем самым завершается этап логической и начинается этап логико-дидактической подготовки будущего учителя математики [1]. В-третьих, через педвузовские математические курсы понятия, идеи и методы математической логики будут естественным образом простираться в основания соответствующей школьной учебной математической дисциплины, которую предстоит преподавать будущим учителям. В методических же курсах педвуза демонстрируется, как именно знания логики используются в процессе преподавания конкретных разделов и тем школьного курса математики. При этом, исключительно важно проанализировать с логических позиций весь школьный курс математики как в глобальном аспекте, так и в отдельных его частностях и деталях.

Именно при таком подходе к вопросам логики студенты наиболее отчётливо и зримо ощутят всепроникающее влияние логики на математику и логические знания будут заложены в фундамент научно-педагогического мировоззрения будущего учителя математики. Такой подход к логической подготовке, конечно, требует высокой профессиональной готовности преподавателей педвузов, значительных усилий с их стороны и координации их действий, но эти усилия приведут к улучшению качества подготовки специалистов.

ЛИТЕРАТУРА

1. *Игошин В.И.* Математическая логика в обучении математике. Логико-дидактическая подготовка учителя математики. (Научная монография). – Saarbruken, Deutschland / Германия: Palmarium Academic Publishing, 2012. – 517 с. [ISBN: 978-3-659-98033-6].
2. *Игошин В.И.* Математическая логика и теория алгоритмов: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Владимир Иванович Игошин. – М.: Изд. центр «Академия», 2004; 2008 (2-е изд.), 2008 (3-е изд.), 2010 (4-е изд.). – 448 с.
3. *Игошин В.И.* Задачи и упражнения по математической логике и теории алгоритмов Учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Владимир Иванович Игошин. – М.: Изд. центр «Академия», 2005, 2006 (2-е изд.), 2007 (3-е изд.), 2008 (4-е изд.). – 304 с.
4. *Игошин В.И.* Математическая логика: Учебное пособие. – М.: ИНФРА-М, 2012. – 399 с. + CD-R. – (Высшее образование).
5. *Игошин В.И.* Теория алгоритмов: Учебное пособие. – М.: ИНФРА-М, 2012. – 318 с. – (Высшее образование).
6. *Игошин В.И.* Теория алгоритмов: Учебное пособие для студ. учреждений сред. проф. образования. – М.: Издат. центр «Академия», 2013. – 320 с.
7. *Игошин В.И.* Курс числовых систем для педагогического вуза // Математика в высшем образовании, 2010, № 8, с. 19 – 36.

THE ROLE OF MATHEMATICAL LOGIC IN THE TRAINING OF MATHEMATICS TEACHERS

Igoshin V. I.

Summary

As you know, since the ancient Greeks the concept of mathematics is closely connected with the notion of logical reasoning and evidence. Indeed, during its centuries of development mathematics is most closely associated with logic. Consequently, in the process of teaching mathematics and learning mathematics logic cannot be avoided: in this process the mathematics and logic prove to be inseparable, also interact closely. But this interaction is of didactic and training purposes here. After analyzing different aspects of this interaction, the author singles out and substantiates four principles of logic in mathematics and in education of teachers of mathematics [1].

ШКОЛЬНОЕ МАТЕМАТИЧЕСКОЕ ОБРАЗОВАНИЕ В СОВРЕМЕННОМ СОЦИУМЕ

Лодатко Е. А.

доктор педагогических наук, профессор

Черкасский национальный университет имени Богдана Хмельницкого (Украина)

Функционирование образования всегда обуславливается ключевыми факторами и условиями общественного бытия: идеологическими, экономическими, социокультурными. Под их влиянием формируется образовательная парадигма и определяется содержание образования, в котором отражается уровень интеллектуального развития общества, его стратегические приоритеты и ценностные ориентиры.

Изменения в структуре рынка труда в последние десятилетия, приведшие к замещению знаниевоемких видов деятельности такими, которые либо вовсе не содержат математической составляющей, либо она представлена на уровне оперирования таблицами сложения–умножения однозначных чисел, обусловили стойкое падение интереса школьников к изучению математики.

Не последнюю роль в этом сыграли и традиционно бытующие в социуме представления о математике как средстве, препятствующем развитию творческого начала личности школьника, а также непонимание значения математики для умственного развития учащихся.

Социальные установки, сформированные под влиянием такого рода представлений, стали причиной смены ценностных ориентиров и личностных предпочтений, что повлекло за собой хроническую нехватку абитуриентов высших учебных заведений на специальности, где математика относится к разряду необходимых профессиональных инструментов.

Не являются исключением в этом отношении и математические специальности в педагогических университетах, куда на обучение приходят выпускники общеобразовательных школ с математической подготовкой, оставляющей желать лучшего, и неразвитой математической культурой. По окончании университета часть таких студентов, не нашедших работу в IT-секторе и торговле бытовой техникой, вынуждена идти в школу и вносить свою лепту в примитивизацию обучения математике – от начального до старшего звена, – методично убивая в учащихся желание заниматься математикой и приобщаться к математической культуре человечества.

Следует сказать, что воспроизводство математически малограмотных учителей математики (как и начальных классов) досталось в наследство от позднего совкового социума, ценностные ориентиры которого не предполагали умственного и культурного развития простых граждан, а тем более учителей общеобразовательных школ.

Как справедливо отмечал Е. В. Ковалев, «ценностные ориентиры играют одну из ключевых ролей существования общества, начиная с античности и заканчивая сегодняшним днем … Вместе с развитием человечества, научной мысли, техники и культуры ценности являются движущим фактором изменений в мире, который становится все более сложным и противоречивым. В обществе <все чаще> происходит трансформация системы ценностных ориентаций, что имеет экзистенциальное значение для выбора личностью той или иной поведенческой стратегии, определяющей будущее общества» [1, с. 43] и ее будущее в этом обществе.

Исключительно важным является то, что ценностные ориентации общества влияют на определение образовательной парадигмы, разработку концепции системы образования, отбор его содержания, а также формирование ценностей, позиционирующих образование как:

– ценность государственную;

– ценность общественную;

– ценность личностную [2].

Основываясь на такой ценностной триаде, можно говорить о выделении уровней и соответствующего им содержания мер (акций), в контексте которых целесообразно разрабатывать долгосрочные механизмы влияния на сознание учащихся, их родителей и общества в части изменения отношения к школьной математике и осмысления ее как основы умственного развития молодежи. При этом основной акцент должен делаться на том, что математика «… представляет собой элемент системы, называемой культурой. Что математика, представляющая собой мир абстракций, в котором царствует рассудочный принцип формальной непротиворечивости, … глубоко погружена в общекультурный контекст деятельности человека» [3, с. 4] и без нее немыслимо социокультурное развитие общества.

Позиционирование математической составляющей образования как ценности государственной определяет возможные инструменты, с помощью которых достигается формирование общественного мнения: привлечение государственных институтов к популяризации математики; совершенствование стандартов школьной и профессионально-педагогической математической подготовки; повышение квалификационных требований к учителям математики.

Осмысление математической составляющей образования как ценности общественной предполагает задействование в процессе определения социокультурных ориентиров таких инструментов, как повышение внимания к математической деятельности как неотъемлемой части национальной культуры, достижения которой обусловливают уровень интеллектуального развития общества; формирование предпочтений для квалифицированных кадров, обладающих развитой умственной культурой.

Если рассматривать математическую составляющую образования как ценность личностную, то в этом случае среди основных инструментов, способствующих достижению индивидом позитивных результатов в процессе изучения математики, следует отметить формирование мотивации; системность и систематичность занятий; готовность к преодолению трудностей и др.

В заключение следует отметить, что обозначенный разноуровневый инструментарий требует консолидированных, комплексных мер, направленных на приобщение молодежи к математической деятельности, и согласующихся с ценностными ориентирами общества, заинтересованного в интеллектуальном и технологическом развитии.

ЛИТЕРАТУРА

1. Ковальов Є. Інтерпретація поняття цінностей: історичний аспект / Є. Ковальов // Світогляд – Філософія – Релігія: збірник наукових праць / ДВНЗ «Українська академія банківської справи Нац. банку України» ; Ін-т філософії ім. Г. С. Сковороди НАН ; [за заг. ред. І. П. Мозгового]. – Суми, 2012.– С. 43–53.

2. Никифоров О. В. Представления о ценности образования [Электронный ресурс] / О. В. Никифоров // Relga : науч.-культуролог. журнал. – 2006. – № 2(124). – 11.01.2006. – Режим доступа: http://www.relga.ru/Environ/ WebObjects/tgu-www.woa/wa/Main?textid=868 &level1=main&level2=articles. Заголовок с экрана.
3. Яшин Б. Л. Математика в контексте философских проблем:Учебное пособие. – М. : МПГУ, 2012. – 110 с.

SCHOOL MATHEMATICAL EDUCATION IN MODERN SOCIETY

Lodatko E.

Summary

The article deals with issues related to the influence of society on the value orientation of school education and determination therein places for mathematical component.

ВЫЯВЛЕНИЕ ОТНОШЕНИЯ СТУДЕНТОВ ПЕДАГОГИЧЕСКОГО ВУЗА К ИСПОЛЬЗОВАНИЮ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ САМООЦЕНКИ И ВЗАИМООЦЕНКИ

Харитонова Е.А.

Соликамский государственный педагогический институт (филиал) федерального государственного бюджетного образовательного учреждения высшего образования «Пермский государственный национальный исследовательский университет»

Оценка сформированности компетенций студентов педагогического вуза осуществляется посредством различных видов оценочных средств, которые представляют собой контрольные задания, а также описания форм и процедур, предназначенных для определения качества освоения обучающимися учебного материала, учебной дисциплины, профессионального модуля, направленные на измерение степени сформированности компетенции как в целом, так и отдельных ее компонентов.

Но оценки компетенций преподавателем становится недостаточно. Полезной с позиции осознанного использования приобретенных знаний и умений оказывается самооценка и взаимооценка компетенций обучающихся педагогического вуза. Под самооценкой в рамках статьи будем понимать оценку обучающимся себя, своих знаний, умений, имеющегося опыта, возможностей, качеств, достоинств, недостатков и места среди других людей. Как отмечает О.П. Керер [3], она является важным регулятором поведения, от нее зависят взаимоотношения с окружающими, критичность и требовательность к себе, отношение к своим успехам и неудачам.

Самооценка как один из компонентов деятельности более всего связана с характеристикой процесса выполнения заданий, его плюсами и минусами. При самооценке студент даёт содержательную и развернутую характеристику собственных результатов, анализирует свои достоинства и недостатки, а также ищет пути устранения последних.

Взаимооценка относится к оценке другого обучающегося (это может быть как студент из своей группы, так и другой). Взаимооценка важна, как тому, кого оценивают, так и тому, кто оценивает. Для выявления отношения студентов к использованию самооценки и взаимооценки было проведено анкетирование. Студенты-педагоги 2, 4 курсов ответили на шесть вопросов (табл. 1).

Таблица 1

Результаты анкетирования студентов

Вопрос	**Ответы студентов**
Считаете ли Вы важным знать, какие профессиональные компетенции должны формироваться изучаемой дисциплиной? Почему?	* Считаю, что важно знать, для того чтобы в будущем было легче работать по специальности (2 курс); * Да, считаю, так как данное знание является примером того к чему нужно стремится (2 курс); * Да, это дает возможность оценить себя, насколько хорошо я изучаю дисциплину (4 курс); * Важно, так как студент должен знать какие требования к качеству работы ему будут предъявляться по данной дисциплине (4 курс).
Что дает Вам самооценка владения компетенциями?	* Возможность саморазвития (2 курс); * Уверенность в себе, знание того, что ты будешь полезен в профессиональном плане (2 курс); * Позволяет узнать уровень сформированности компетенций, наглядно показывает сильные и слабые стороны, повышает мотивацию к самосовершенствованию по средствам создания и реализации личностного развития (4 курс); * Возможность оценить себя, что в свою очередь показывает моменты, в которых нужно себя развивать (4 курс).
Что дает взаимооценка?	* Опыт (2 курс); * Позволяет подчеркнуть пробелы в знаниях, особенности, которые ранее были не замечены (4 курс);

	* Оценить насколько компетентен и профессионален преподаватель и студент в профессиональной деятельности (4 курс); * Возможность сравнить себя с одногруппниками, что в свою очередь увеличивает мотивацию к саморазвитию (4 курс).
Можно ли самооценку и взаимооценку рассматривать как средство активизации?	* Да можно, данные способы позволяют совершенствоваться в сфере профессии (2 курс); * Да, так как, сравнивая себя с другими, повышается мотивация к саморазвитию (4 курс); * Можно, так как они дают возможность взглянуть на себя со стороны и сравнить с другими (4 курс).
Можно ли самооценку и взаимооценку рассматривать как средство мотивации и повышения интереса студентов?	* Да можно, оценивая себя, повышается интерес к саморазвитию (4 курс); * Можно, при самооценке студент сам анализирует свои работы, выступление, а затем планирует задачи для самосовершенствования. При взаимооценке студент сделает работу качественнее и интереснее (4 курс); * Можно, так как позволяет заинтересовать учеников в поддержании качества своей работы, мотивировать к самосовершенствованию (4 курс).
Можно ли самооценку и взаимооценку рассматривать как средство профессионального становления?	* Данные процессы – необходимый компонент профессионального становления, так как, оценивая себя и других, можно увидеть недочеты в своей работе и исправлять их (4 курс); * Да, можно, так как оценивание профессиональных компетенций раскрывает процесс их формирования, что помогает достичь студенту профессионального становления (4 курс); * Да, так как, усваивая педагогический опыт, мы имеем возможность развиваться, самостоятельно анализировать и корректировать свою деятельность (4 курс).

Таким образом, обучающиеся педагогического вуза отмечают значимость применения оценочной деятельности (самооценку, взаимооценку) в образовательном процессе, так как она позволяет узнать уровень сформированности компетенций, наглядно показывает сильные и слабые стороны, повышает мотивацию к самосовершенствованию по средствам создания и реализации личностного развития студента-педагога.

ЛИТЕРАТУРА

1. Грабчук К.М., Филатова Е.В. Профессиональная компетентность и оценка ее сформированности / К.М. Грабчук, Е.В, Филатова // Вестник КемГУ. – 2011. – №1(45).
2. Дыбкова Л.Н. Активизация оценочной деятельности студентов вуза в процессе обучения / Л.Н. Дыбкова // Открытое и дистанционное образование. – 2014. – №4 (56).
3. Керер О.П. Совершенствование оценочной деятельности педагогов в свете реализации компетенстностных стандартов / О.П. Керер // Инновационное развитие профессионального образования. – 2014. – №1 (05).
4. Контрольно-оценочные средства как условие формирования общих и профессиональных компетенций обучающихся: Материалы II педагогической научно-практической конференции «Грани сотрудничества» (21 марта 2013 года) / под ред. Т. Н. Ковалевой, Н. В. Коньковой, Т. А. Палагута. – Курск: ОБОУ СПО «КАТК», 2013.
5. Шестакова Л.Г., Харитонова Е.А. Использование самооценки и взаимооценки для формирования профессиональных компетенций обучающихся педагогического вуза / Л.Г. Шестакова, Е.А. Харитонова // Проблемы современного педагогического образования. – Ялта: РИО ГПА, 2016. – Вып.50.–Ч.3.

IDENTIFYING THE ATTITUDE OF STUDENTS TO USE IN EDUCATIONAL PROCESS OF SELF-EVALUATION AND WAIMAIRI

Kharitonova E. A.

Summary

The article presents the results of the questionnaire on attitude of students to use self-evaluation and waimairi in the organization of the educational process. Some of the causes are the direct reproduction of the acquired knowledge, the wrong application of Information Technology, falling behind the subject-matter, the cost of the textbooks, etc. The effect is that the students interest towards mathematics decreases and they think that it is a good for nothing, boring and incomprehensible subject.

ԷՔՍՏՐԵՄՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հակոբյան Ն.Ս.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, ֆ. մ. գ. թ

Էքստրեմումի խնդիրները երկրաչափության մեջ հայտնի են հնագույն ժամանակներից [1, 3]: Այժմ էքստրեմումի խնդիրները հիմնականում ուսումնասիրվում են «Վարիացիոն հաշիվ» և «Օպտիմալ կառավարում» առարկաների շրջանակներում: Կան խնդիրներ, որոնք կարելի է լուծել և՛ երկրաչափության ժամին, և՛ վերը նշված առարկաների: Այդպիսի խնդիրների ուսումնասիրումը ամբողջացնում է մաթեմատիկայի իմացությունը: Կրթական համակարգը տվյալ հասարակարգի ծնունդն է, որը սպասարկում է այդ հասարակարգը, դաստիարակում քաղաքացիներ դրա համար: **Ուսուցման ավանդական տեխնոլոգիայի** միատեսակ կառուցվածքը, աշակերտների ինքնուրույնության թույլ արտահայտվածությունը, արդյունավետ չեն **էքստրեմումի խնդիրներ** լուծելիս: **Ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների** մեծ մասը կրում է անձնակողմնորոշված ուսուցման բնույթ, առանցքային նպատակներն են անհատի ֆիզիկական, մտավոր զարգացումը, ապագայում առաջացող խնդիրների լուծմանը պատրաստ անհատների պատրաստումը [2]: **Շերտավորված ուսուցման մանկավարժական տեխնոլոգիայի** գործնական կիրառումը բերում է առավելագույն-նվազագույն ծրագրին, որի էությունն անհրաժեշտ է ուսուցանել այնպես, որ բոլոր աշակերտները յուրացնեն նվազագույն ուսումնական նյութը, իսկ ավելի օժտվածներից յուրաքանչյուրը կարողանա լիովին բավարարել ուսումնական նյութը [2]: Եթե դասարանի աշակերտները բաժանված են երեք խմբի, ապա ուսուցիչը կարող է կիրառել **շերտավորված ուսուցման մանկավարժական տեխնոլոգիան** և նրանց տրամադրել հետևյալ աշխատանքը:

Առաջին խումբ: Ուղղի միևնույն կողմում տրված են A և B կետեր, ուղղի վրա նշել C կետ այնպես, որ ACB բեկյալն ունենա **նվազագույն** երկարություն (**նկ. 1, ա**):

Երկրորդ խումբ: Տրված են d_1 և d_2 զուգահեռ ուղիղներ, այդ ուղիղներով սահմանափակված շերտի տարբեր կողմերում A և B կետեր: Տրված զուգահեռ ուղիղների վրա ուղիղներին ուղղահայաց ուղղությամբ կառուցել CD հատված այնպես, որտեղ $C \in d_2$ **և** $D \in d_1$, որ ACDB բեկյալն ունենա **նվազագույն** երկարություն (**նկ. 1, բ**):



Նկ. 1

Երրորդ խումբ: Տրված է երկու զուգահեռ ուղիղների զույգ, այդ երկու զույգ զուգահեռ ուղիղներով սահմանափակված շերտի տարբեր կողմերում **A** և **B** կետեր: Տրված զուգահեռ ուղիղների վրա տրված ուղղություններով կառուցել այնպիսի **CD** և **EF** հատվածներ, որտեղ $C\in d_4$, $D\in d_3$, $E\in d_2$, $F\in d_1$, որ **ACDEFB** բեկյալն ունենա **նվազագույն** երկարություն:

Առաջին և երկրորդ խմբերի խնդիրների լուծումները պարզ են (**նկ. 2, ա) և բ)**), ներկայացնենք երրորդ խմբի խնդրի լուծումը:

Նկ. 2

Լուծում: <u>**Վերլուծություն:**</u> Ենթադրենք խնդիրը լուծված է (**նկ. 3, ա)**): Նկատենք, որ **CD** և **EF** հատվածների երկարությունները **հաստատուն են,** կախված չեն համապատասխան զուգահեռ ուղիղների վրա ընտրված կետերից և հավասար են **NM** և **LK** վեկտորների երկարությանը: Կատարենք հարթության զուգահեռ տեղափոխում **KL**, այնուհետև **MN** վեկտորներով: Նկատենք, որ $CDB'B''$ և $EFBB'$ քառանկյունները զուգահեռագծեր են: Այդ դեպքում հեշտ է տեսնել, որ **ACDEFB** բեկյալն ունի **նվազագույն** երկարություն:



Նկ. 3

<u>**Կառուցում:**</u> **1.** Կառուցենք **B** կետի **B´** կերպարը հարթության **KL** վեկտորով զուգահեռ տեղափոխման դեպքում, այնուհետև **B´** կետի **B´´** կերպարը հարթության **MN** վեկտորով զուգահեռ տեղափոխման դեպքում (**նկ. 3, բ)**): **2.** Կառուցենք **AB´´** ուղիղը, այնուհետև **AB´´** ուղղի և d_4 ուղղի հատման **C** կետը, այնուհետև հարթության **MN** վեկտորով զուգա-

հեռ տեղափոխման դեպքում **C** կետի **D** նախակերպարը (**նկ. 4, ա**)): **3.** Կառուցենք **DB′** ուղիղը, այնուհետև **DB′** ուղղի և **d₂** ուղղի հատման **E** կետը, այնուհետև հարթության **KL** վեկտորով զուգահեռ տեղափոխման դեպքում **E** կետի **F** նախակերպարը (**նկ. 4, բ**)):

4. Կառուցենք **FB** ուղիղը (**նկ. 4, ա**)): **CD** և **EF** հատվածները որոնելի հատվածներն են:





Նկ. 4

<u>**Ապացուցում:**</u> Ըստ կառուցման առաջին քայլի՝ **BB′=KL=EF, B′B′′=NM=CD**: Կառուցման երկրորդ և երրորդ քայլերից հեշտ է տեսնել, որ **AC, DE, FB** վեկտորները համուղղված են և զուգահեռ են **AB′′** ուղղին: Հետևաբար, **ACDEFB** բեկյալն ունի **նվազագույն** երկարություն:

<u>**Հետազոտում**</u>**:** Քանի որ կառուցման բոլոր քայլերը միշտ իրագործելի են, ապա խնդիրն ունի միակ լուծում:

Խնդրահարույց ուսուցման (պրոբլեմային) մանկավարժական տեխնոլոգիան ենթադրում է ուսուցչի կողմից այնպիսի իրադրության ստեղծում, երբ աշակերտը հանդիպում է իմացական հակասության կամ դժվարության և սովորում է այն հաղթահարել, ուսուցչի հուշող հարցերի շնորհիվ: Այս համակարգը զգալիորեն զարգացնում է աշակերտների ինքնուրույն մտածելու, դատողություններ կատարելու ունակությունը [2]: Մասնագիտացված հոսքերում ուսուցիչը կարող է կիրառել **խնդրահարույց մանկավարժական տեխնոլոգիան** և նրանց տրամադրել հետևյալ աշխատանքը:

Խնդիր: Շրջանագծի տրված աղեղը բաժանել երկու մասի այնպես, որ առաջացած լարերի երկարությունների գումարը լինի առավելագույնը:

Եթե աշակերտները դժվարանում են խնդրի լուծման հարցում, ապա ուսուցիչը կարող է կիրառել մտավոր գրոհ (ուղեղի փոթորիկ) տեխնոլոգիան [2] և տալ հուշող հարցեր. **ա)** տրված խնդրում ինչե՞րն են հայտնի; **բ)** ո՞ր հայտնի թեորեմը կարելի է այս խնդրում կիրառել, **դ)** ի՞նչ բան է ֆունկցիայի էքստրեմում և այլն:



Նկ. 5

Լուծում: Տրված աղեղի ծայրակետերը նշանակենք **A** և **B** տառերով, աղեղի կամայական **M** կետը միացնենք աղեղի ծայրակետերին: Որպեսզի առաջացած լարերի երկարությունների գումարը լինի առավելագույնը, անհրաժեշտ է, որ **AMB** բեկյալն ունենա առավելագույն երկարություն:

Նկատենք, որ **AB** հատվածն աղեղի ցանկացած կետից երևում է միևնույն անկյան տակ. լարերի կազմած անկյունը հաստատուն է: **AMB** եռանկյան համար կիրառենք կոսինուսների թեորեմը՝ $\mathbf{AB^2=AM^2+MB^2-2AM{\cdot}MB{\cdot}\cos M}$: Այս հավասարությունից **AM** և **MB** կողմերից մեկն արտահայտենք մյուսով, օրինակ **MB**-ն՝ **AM**-ով: Կստանանք՝

$$MB = AM\cos M + \sqrt{AB^2 - AM^2\sin^2 M}\,, \qquad (1)$$

$$MB' = AM\cos M - \sqrt{AB^2 - AM^2\sin^2 M}\,: \qquad (2)$$

Նախ նշենք **AM**-ի որոշման տիրույթը՝ $\mathbf{0<AM\le AB/\sin M}$: Սկզբից դիտարկենք այն դեպքը, երբ **MB**-ն որոշված է (1) առնչությամբ: **AM** և **MB** լարերի գումարը ներկայացնենք **F(AM)** ֆունկցիայի տեսքով հետևյալ կերպ.

$$F(AM) = AM + MB = AM + AM\cos M + \sqrt{AB^2 - AM^2\sin^2 M}\,: \qquad (3)$$

Գտնենք **F(AM)** ֆունկցիայի էքստրեմումի կետերը.

$$F'(AM) = 1 + \cos M - \frac{AM\sin^2 M}{\sqrt{AB^2 - AM^2\sin^2 M}} = 0\,: \qquad (4)$$

Օգտվելով եռանկյունաչափական նույնություններից կստանանք՝ $\mathbf{AM=AB/}\ 2\sin \mathbf{M/2}$:



Նկ. 6

Հեշտ է տեսնել, որ **F(AM)** ֆունկցիան իր առավելագույն արժեքը ընդունում է, երբ **AM=AB/**

2sin**M/2**: Տեղադրելով AM –ի արտահայտությունը (2) առնչության մեջ կստանանք. **MB=AB/**2sin**M/2**: Ստացվեց, որ **AMB** եռանկյունը հավասարասրուն է: Այսինքն՝ որոնելի **M** կետը **AB** հատվածի միջնուղղահայացի և տրված աղեղի հատման կետն է: Ինքնուրույն կարելի է համոզվել, որ (3) առնչությամբ որոշված **MB** հատվածը չի բավարարում այս երկրաչափական խնդրի պայմաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Тихомиров В. М., Рассказы о максимумах и минимумах, Москва, Наука, 1986, 202 с.
2. Селевко Г.К, Современные образовательные технологии. Учебное пособие, Народное образование, Москва, 1998, 256 с.
3. Протасов В.Ю., Максимумы и минимумы в геометрии, “Математическое просвещение”, выпуск 31, Москва, 2002, 56с.

EXTREMUMS IN GEOMETRY

Hakobyan N.S.

Summary

Present work is devoted to the application of educational technologies in problems of extremums in geometry. In each problem is noted which method was using.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՐԳՈՒՄ

Հակոբյան Ս.Է.

փ. գ. թ., դոցենտ, ԿԱԻ

Ինչպես հայտնի է, հանրային քննարկման է ներկայացվել հանրակրթության նոր կրթակարգի նախագիծը: Քննարկումների ելակետն այն համոզմունքն է, ըստ որի՝ կրթակարգի ներդրման արդյունավետությունը կախված է այն բանից, թե ինչ չափով է այն համապատասխանում անհատի, հասարակության և պետության շահերի փոխադարձ համաձայնությանը:

Մաթեմատիկական կրթության հարցերը բազմակողմանիորեն արտացոլված են կրթակարգում: Դրանց էությունը լիարժեք ընկալելու համար՝ հարկավոր է նախ ընդհանուր պատկերացում ունենալ նախագծում տեղ գտած մոտեցումների մասին:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել առկա իրողություններն ու հիմնախնդիրները, կրթակարգ և չափորոշիչ մշակելու հայրենական ու միջազգային փորձը, հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման կարիքների գնահատման հետազոտությունների արդյունքները, վերջին տարիներին կատարված ՀՀ օրենսդրական փոփոխությունները և կրթության զարգացման պետական ծրագրի հիմնադրույթները, մանկավարժության բնագավառում կատարված ժամանակակից հետազոտությունները և ձևավորված նոր մոտեցումները:

Կրթակարգի նախագծի մշակմանը նախորդել է հանրակրթության պետական կրթակարգի և պետական չափորոշչի բարելավման հայեցակարգի մշակումը, որում, ի թիվս այլ սկզբունքային հիմնադրույթների, մասնավորապես հիմնավորվել է Կրթակարգում արտացոլված հետևյալ փոփոխությունների անհրաժեշտությունը՝

ա/ «Հանրակրթության պետական կրթակարգ» և «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթերը վերակազմավորել որպես մեկ միասնական փաստաթուղթ՝ անվանելով «Հանրակրթության ազգային կրթակարգ»,

բ/ հանրակրթության բովանդակությունը և սովորողների ուսումնական ձեռքբերումները ներկայացնել առանցքային և ուսումնական բնագավառների կոմպետենցիաների որոշակիացման միջոցով,

գ/առարկայական չափորոշիչների կիրառական նշանակությունը մեծացնելու նպատակով՝ դրանց գործառույթը ներառել առարկայական ծրագրերում և դարձնել միասնական մեկ փաստաթուղթ՝ «Առարկայական համալիր ծրագիր»,

դ/ սկզբունքային փոփոխություններ կատարել գնահատման համակարգում՝ շեշտադրումը կատարելով հատկապես ուսուցանող՝ բնութագրական գնահատման վրա,

ե/ որակական փոփոխություններ կատարել հենքային ուսումնական պլանի և առարկայացանկի կազմավորման սկզբունքներում, հատկապես ավագ դպրոցում առավել մեծ հնարավորություններ ստեղծել, մի կողմից՝ սովորողի համակողմանի զարգացման, իսկ մյուս կողմից՝ նրա նախասիրությունների, հակումների լիարժեք բավարարման և ուսումնական հաստատության ներուժի ազատ դրսևորման համար,

գ/ առավել որոշակիացնել կրթական միջավայրին և ռեսուրսներին ներկայացվող պահանջները՝ ներկայացնելով, մասնավորապես, ուսուցման և դաստիարակության նոր հարացույցը, ուսուցիչներին ներկայացվող նոր պահանջները, ներառական կրթության և բազմահամակազմ դասարաններում ուսուցման առանձնահատկությունները:

Այժմ անդրադառնանք մաթեմատիկական կրթության հարցին: Կրթակարգում մաթեմատիկային անմիջականորեն վերաբերող հարցերը ներկայացված են առանցքային կոմպետենցիաների, կրթական ծրագրերին ներկայացվող պահանջների նկարագրություններում և հեքային ուսումնակա պլանում: Այստեղ կանգ առնենք մի քանի ուշագրավ պահերի վրա:

- Մաթեմատիկական գրագիտությունը դիտվում է որպես առանցքային՝ համապիտանի կոմպետենցիա (կարողունակություն), ընդ որում, ըստ կրթակարգի՝ կոմպետենցան գիտելիքների, կարողությունների, պրակտիկ փորձի և անձնային որակների այնպիսի ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն լուծելու տարբեր՝ ծանոթ և անծանոթ իրավիճակներում ծագող խնդիրները և պատշաճ կատարելու առաջադրված աշխատանքը: Որպես առանցքային կոմպետենցիայի՝ մաթեմատիկական գրագիտությանը նպաստելու է ոչ միայն զուտ «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը, այլև բոլոր ուսումնական բնագավառները: Քանի որ մաթեմատիկական գրագիտության համար կարևոր ցուցանիշ է այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու փորձը օգտագործվի տարբեր բովանդակություն ունեցող համատեքստերում, ուրեմն այդ տարբեր համատեքստերի բովանդակության բացահայտմանը ծառայելու են բոլոր ուսումնական առարկաները: Իսկ դա նշանակում է, որ մաթեմատիկական գրագիտությունը փոխկապակցված է առանցքայի մյուս կոմպետենցիաների հետ:
- Կրթակարգում մաթեմատիկան՝ որպես ուսումնական բնագավառ, ներկայացվում է ըստ կրթական աստիճանների որակական պահանջներով, որոնք վերաբերում են տվյալ բնագավառի նպատակ-ներին և ծրագրի բովանդակությանը: Որպես լուսաբանող օրինակ վկայակոչենք ավագ դպրոցի ծրագրին վերաբերող պահանջները:

Ավագ դպրոցի ծրագրի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի՝ կշռադատված մտածելու, դեդուկտիվ և ինդուկտիվ մտահանգումներ կատարելու, պնդումները հիմնավորելու, երևույթներն ու փաստերը վերլուծելու, կշռադատությունները լեզվական ճշգրիտ ձևերով արտահայտելու կարողությունների զարգացմանը,

2) սովորողի կողմից մաթեմատիկան որպես իրական աշխարհը նկարագրելու և գիտական օրինաչափություններ արտահայտելու լեզու գործածելուն, այն որպես համամարդկային մշակույթի բաղկացուցիչ մաս ընկալելուն,

3) առօրյա՝ կենսական նշանակության խնդիրները լուծելու, հետագա կրթությունը շարունակելու կամ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը:

Ծրագիրը պետք է ներառի համակարգված գիտելիքներ և պատկերացումներ՝

1) թվային համակարգերի և դրանցում գործողությունների ընդլայնման, այդ թվում՝ աստիճան, արմատ, լոգարիթմ հասկացությունների,

2) տարրական ֆունկցիաների, դրանք հետազոտելու մեթոդների, գրաֆիկների և դրանց պարզ ձևափոխության,

3) մաթեմատիկական անալիզի տարրերի և դրանց պարզ կիրառությունների,

4) տարբեր տեսակի հավասարումների, անհավասարումների, համակարգերի և համախմբերի լուծման տարբեր եղանակների,

5) տարածաչափական հիմնական հասկացությունների և առնչությունների, բազմանիստերի ու պտտական մարմինների, դրանց հատկությունների, մակերևույթների մակերեսների ու ծավալների հաշվման եղանակների,

6) եռաչափ կոորդինատային համակարգի, վեկտորների ու դրանց կիրառությունների,

7) մաթեմատիկական վիճակագրության, միացությունների և հավանականության տեսության տարրերի,

8) տրամաբանության տարրերի, բազմությունների և տրամաբանական գործողությունների միջև կապերի,

9) մտահանգումներ և ապացուցումներ կատարելու եղանակների,

10) մաթեմատիկական մտքի զարգացման պատմության որոշ փաստերի մասին:

Կրթակարգում ներկայացված այս պահանջները որոշակիացվելու և կոնկրետացնելու են առարկայական համալիր ծրագրերում:

- Նոր կրթակարգի հենքային ուսումնական պլանում մաթեմատիկային հատկացվող ժամաքանակի փոփոխություն չի նախատեսվում, սակայն ուսպլանի պարզաբանումների առարկայացանկում կատարված է մի մասնակի, խմբագրական բնույթի անվանափոխում: Բանն այն է, որ հանրակրթական դպրոցի ողջ առարկայացանկում ամենաերկար անվանումն ունի «Մաթեմատիկա» բնագավառի առարկաներից մեկը՝ ավագ դպրոցի «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկան: Այդ առիթով ծագում էին մի շարք հարցեր: Նախ, անհասկանալի է, թե ինչո՞ւ հանրակրթական առարկայի (այդ թվում և հումանիտար հոսքի) համար ընտրվել է այդպիսի երկարաշունչ անվանումով առարկա, և այն էլ լեզվական հակիրճ արտահայտչաձևերը խրախուսող ուսումնական բնագավառի համար: Մյուս հարցն առավել էական է. Տվյալ առարկայի բովանդակության մեջ ներառված են նաև գիտելիքներ մաթեմատիկական վիճակագրության և հավանականությունների տեսության հիմուքների մասին, ինչո՞ւ է անվանման մեջ շեշտադրվել միայն մաթեմատիկական անալիզը: Այս և այլ հանգամանքներ հաշվի առնելով՝ Կրթակարգում տեղ է գտել հետևյալ ձևակերպումը. «Ավագ դպրոցում «Մաթեմատիկա» բնագավառը ներկայացվում է «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաներով. հանրահաշվի բովանդակության մեջ ներառվում են նաև գիտելիքներ մաթեմատիկական անալիզի, վիճակագրության և հավաականությունների տեսության տարրերի մասին»:
- Կրթակարգում կարևորվում է ինտեգրված թեմատիկ միավորների և նախագծային հետազոտական աշխատանքների նշանակությունը: Այդ նպատակով, առարկայական համալիր ծրագրերի բաժնում շեշտվում է, որ ընդհանուր ժամաքանակի 10-15 %-ը՝ հիմնական դպրոցում, և 15-20 %-ը՝ ավագ դպրոցում տրամադրվելու է նախագծային հետազոտական աշխատանքների կատարմանը: Դա կարևոր գործիք է, որը ծառայելու է կոմպետենցիաների զարգացմանը:

MATHEMATICS IN NATIONAL CURRICULUM
Hakobyan S.E.

Summary

The article presents the conceptual provision of a new curriculum, examines approaches reflected in it related to mathematics education, conducted analysis of issues is of fundamental importance.

ԹԵՅԼՈՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայրապետյան Գ.Ս., Սարգսյան Ս.Հ.
Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Մաթեմատիկական անալիզում Թեյլորի բանաձևին համարում են դիֆերենցիալ հաշվի բարձրակետը: Թեյլորի բանաձևի հասկացությանը կարելի է հանգել նաև դպրոցական մաթեմատիկայի շրջանակում [2]: Անգլիացի մաթեմատիկոս Բրուկ Թեյլորի անունը ընդմիշտ իր ուրույն տեղն ունի մաթեմատիկայի պատմության մեջ՝ ի շնորհիվ իր այդ հայտնագործության, որը նա կատարեց 1715 թվականին, 29 տարեկան հասակում: Ֆունկցիայի Թեյլորի բանաձևի հիմնական կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ նրա օգնությամբ կարելի է հաշվել այդ ֆունկցիայի արժեքները ուզած ճշտությամբ՝ համապատաս-խան ամբողջ բազմանդամի արժեքների հաշվման միջոցով:

Այս աշխատանքում, դպրոցական մաթեմատիկայի շրջանակում, կներկայացնենք Թեյլորի բանաձևի կառուցումը՝ y=sinx, y=cosx, $y=e^x$ և y=ln(1+x) հիմնական տարրական ֆունկցիաների համար:

1. **y=sinx և y=cosx ֆունկցիաների Թեյլորի բանաձևը**:_Որևէ կերպ սևեռենք արգումենտի $x > 0$ արժեքը: Ստորև օգտագործելու ենք ինտեգրալ հաշվի հիմնական (Նյուտոն-Լեյբնիցի) բանաձևը [1]՝

$$\int_a^b f(x)dx = F(x)|_a^b = F(b) - F(a), \quad (1)$$

որտեղ $f(x)$ֆունկցիան անընդհատ է [a,b] հատվածում, իսկ F(x)-ը՝ այդ հատվածում նրա նախնական ֆունկցիան է: Որոշյալ ինտեգրալի երկբաչափական իմաստից ելնելով, կարելի է ասել, որ $\int_a^b f(x)dx \geq 0$ անհավասարությունը տեղի ունի,երբ

$$f(x) \geq 0: \tag{2}$$

Այստեղից կարող ենք անել հետևյալ եզրակացությունը, որ երբ $f(x) \leq g(x), x \in [a,b]$ ($կամ\, f(x) - g(x) \leq 0$), ապա

$$\int_a^b f(x)dx \leq \int_a^b g(x)dx \tag{3}$$

Դիցուքt փոփոխականը փոփոխվում է $[0,x]$հատվածում: Քանի որ$cost \leq 1$, հետևաբար կիրառելով (3) բանաձևը, երբ $g(t) \equiv 1$, կունենանք՝

$$\int_0^x costdt \leq \int_0^x 1dt: \tag{4}$$

Քանի որ $cost$-ի համար՝ $(sint + c)$ֆունկցիան (c-ն հաստատուն է) հանդիսանում է նախնական ֆունկցիա, իսկ $t + c$ ֆունկցիան նախնական ֆունկցիա է $g(t) \equiv 1$ ֆունկցիայի համար (c-ն հաստատուն է), հետևաբար (4)-ից կունենանք հետևյալ անհավասարությունը՝

$$sinx \leq x: \tag{5}$$

Այս անհավասարությունը գրենք $[0,x]$ հատվածի համար՝ $sint \leq t, t \in [0,x]$ և, այնուհետև, կիրառելով (3) բանաձևը կունենանք՝

$$1 - cosx \leq \frac{x^2}{2} \text{կամ } cosx \geq 1 - \frac{x^2}{2}: \tag{6}$$

Այստեղ նշենք, որ $sint$ ֆունկցիայի նախնական ֆունկցիան $(-cosx + c)$ ֆունկցիան է, իսկ t-ի համար՝ $\frac{t^2}{2} + c$ ֆունկցիան: (6) անհավասարության համար նորից կիրառելով (3) բանաձևը, կունենանք՝

$$sinx \geq x - \frac{x^3}{3!}: \tag{7}$$

Շարունակելով այս գործընթացը և կիրառելով մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը, կունենանք հետևյալ անհավասարությունները՝

$$x - \frac{x^3}{3!} + \cdots - \frac{x^{4n+3}}{(4n+3)!} \leq sinx \leq x - \frac{x^3}{3!} + \cdots + \frac{x^{4n+1}}{(4n+1)!}, \tag{8}$$

$$1-\frac{x^2}{2!}+\cdots-\frac{x^{4n+2}}{(4n+2)!}\leq cosx\leq 1-\frac{x^2}{2!}+\cdots+\frac{x^{4n}}{(4n)!}: \qquad (9)$$

(8) և (9) անհավասարությունների բնույթից ելնելով, կարող ենք $sinx$ կամ $cosx$ ֆունկցիաները ներկայացնել հետևյալ կերպ՝

$$sinx=x-\frac{x^3}{3!}+\cdots-\frac{x^{4n+3}}{(4n+3)!}+R_n(x)\,, \qquad (10)$$

$$cosx=1-\frac{x^2}{2!}+\cdots-\frac{x^{4n+2}}{(4n+2)!}+R_n(x)\,, \qquad (11)$$

որտեղ $R_n(x)$-ը իր բացարձակ մեծությամբ փոքր է քան (8) կամ (9)-ի աջ և ձախ կողմերում կանգնած ամբողջ բազմանդամների տարբերության մոդուլը: Հեշտ է համոզվել, որ $cosx$ –ի համար կունենանք՝

$$|R_n(x)\,|<\frac{x^{4n+2}}{(4n+2)!},x>0, \qquad (12)$$

իսկ $sinx$ –ի համար՝

$$|R_n(x)\,|<\frac{x^{4n+3}}{(4n+3)!},x>0: \qquad (13)$$

Նկատի ունենալով, որ $\left\{\frac{x^n}{n!}\right\}$ հաջորդականությունը, որտեղ $x>0$ սևեռված արժեք է, իրենից ներկայացնում է անվերջ փոքր հաջորդականություն՝

$$\lim_{n\to\infty}\frac{x^n}{n!}=0\,, \text{երբ}\, x>0, \qquad (14)$$

հետևաբար տվյալ սևեռված $x>0$-ի համար և՛ (10)-ում և՛ (11)-ում, կարող ենք n –ը այնքան մեծ վերցնել, որ $R_n(x)$ –ը մոդուլով լինի ինչքան ասես փոքր:

(10) և (11) բանաձևերին անվանում են $\sin x$ և $cosx$ ֆունկցիաների Թեյլորի բանաձև:

(10) և (11) բանաձևերի կիրառման ժամանակ կարող ենք առաջադրել n-ը և հաշվման ճշտությունը (այսինքն ինչ ճշտությամբ ենք ուզում, որ $R_n(x)$-ը անտեսել (10) և (11) բանաձևերում), այդ դեպքում (12) կամ (13)-ից կարող ենք որոշել x -ի փոփոխման վերին սահմանը: Տվյալ n-ի համար այդ ճշտությամբ՝ $R_n(x)$-ը՝ (10) և (11) բանաձևերում կարող ենք անտեսել և, $sinx$կամ$cosx$ ֆունկցիաների արժեքները այդպիսի x-երի

համար հաշվել սահմանված ճշտությամբ՝ համապատասխան աստիճանի ամբողջ բազմանդամի արժեքների հաշվման միջոցով (հասկանալի է, որ հաշվումների համար կարելի է սահմանափակվել $0 \leq x \leq \frac{\pi}{4}$ արժեքներով)։ Հեշտ է նկատել, որ (10) (կամ (11)) բանաձևում, երբ տվյալ ճշտությամբ արհամարհվում է $R_n(x)$-ը, ապա պահվող համապատասխան ամբողջ բազմանդամի և $sinx(cosx)$ ֆունկցիայի արժեքները ու նրանց հերթական ածանցյալների արժեքները (տվյալ n-ին համապատասխան) $x = 0$ կետում համընկնում են։

2. $y = e^x$ ֆունկցիայի Թեյլորի բանաձևը։ Քանի որ $(e^x + c)' = e^x$ (c-ն հաստատուն է) և, որ $e > 1(e = 2{,}718 \ldots)$,կունենանք $1 \leq e^t \leq e^a$, $(a > 0), t \in [0, a]$։ Այս անհավասարությունը ինտեգրենք $[0, x]$ հատվածի վրա, օգտվելով (3) բանաձևից կունենանք

$$1 + x < e^x < 1 + e^a x\text{։} \tag{15}$$

Այժմ այս անհավասարությունները ինտեգրելով և նորից օգտվելով (3)-ից, կարող ենք գրել

$$1 + x + \frac{x^2}{2!} < e^x < 1 + x + e^a \frac{x^2}{2!} (0 \leq x \leq a) \tag{16}$$

Շարունակելով այս գործընթացը կհանգենք հետևյալ անհավասարություններին՝

$$1 + x + \frac{x^2}{2!} + \cdots + \frac{x^n}{n!} \leq e^x \leq 1 + x + \frac{x^2}{2!} + \cdots + \frac{x^{n-1}}{(n-1)!} + e^a \frac{x^n}{n!}, \tag{17}$$

որտեղ՝ $0 \leq x \leq a$։ Այս արտահայտության աջ և ձախ կողմերի բազմանդամների տարբերությունն է՝

$$(e^a - 1) \frac{x^n}{n!} \tag{18}$$

(այստեղ $a > 0, e^a > 1, e^a - 1 > 0$)։ Այսպիսով կարող ենք գրել՝

$$e^x = 1 + x + \frac{x^2}{2!} + \frac{x^3}{3!} + \cdots + \frac{x^n}{n!} + R_n(x)\,, \tag{19}$$

որը e^x ֆունկցիայի Թեյլորի բանաձևն է, որտեղ $R_n(x)$ լրացուցիչ անդամի հետ կապված կարող ենք տալ հետևյալ գնահատականը (օգտագործելով (15) արտահայտությունների աջ և ձախ կողմերում կանգնած ամբողջ բազմանդամների տարբերությունը)՝

$$R_n(x) \le (e^a - 1)\frac{x^n}{n!} \tag{20}$$

Ինչպես տեսնում ենք $0 \le x \le a$հատվածի ամեն մի սևեռված արժեքի համար, $R_n(x)$լրացուցիչ անդամը, երբ$n \to \infty$, ձգտում է զրոյի, հետևաբար առաջադրվող ճշտությամբ կարելի է որոշել n-ը, որի դեպքում $R_n(x)$-ը կարելի է արհամարհել, այդ դեպքում $0 \le x \le a$ միջակայքի ցանկացած x-ի համար, e^x ֆունկցիայի արժեքները այդ ճշտությամբ կարող ենք հաշվել

$$1 + x + \frac{x^2}{2!} + \frac{x^3}{3!} + \cdots + \frac{x^n}{n!} \tag{21}$$

ամբողջ բազմանդամի արժեքների հաշվման միջոցով:

3. $y = ln(1 + x)$ֆունկցիայի Թեյլորի բանաձևը: Քանի որ $[ln(1 + +x)]' = \frac{1}{1+x}$ $, x > -1$ բոլոր x-երի համար, հետևաբար $\frac{1}{1+x}$ ֆունկցիայի համար՝ $\ln(1 + x) + c$ ֆունկցիան նախնական ֆունկցիա է՝ $(-1, +\infty)$ միջակայքի համար:

Նկատենք, որ $t \ge 0$ համար ճիշտ են հետևյալ անհավասարությունները՝

$$1 - t + \cdots + t^{2n-2} - t^{2n-1} \le \frac{1}{1+t} \le 1 - t + \cdots - t^{2n-1} + t^{2n} : \tag{22}$$

(22) անհավասարությունները ինտեգրելով $[0, x]$հատվածում, որտեղ $x \ge 0$ և կիրառելով (3) բանաձևը կունենանք

$$x - \frac{x^2}{2} + \cdots - \frac{x^{2n}}{2n} \le \ln(1 + x) \le x - \frac{x^2}{2} + \cdots - \frac{x^{2n}}{2n} + \frac{x^{2n+1}}{2n+1}, x \ge 0: \tag{23}$$

(23) արտահայտության աջ և ձախ կողմերում կանգնած ամբողջ բազմանդամների տարբերությունն է՝ $\frac{x^{2n+1}}{2n+1}$: Այսպիսով կարող ենք գրել հետևյալ բանաձևը՝

$$\ln(1 + x) = x - \frac{x^2}{2} + \frac{x^3}{3} - \cdots + (-1)^{n+1}\frac{x^n}{n} + R_n(x), \tag{24}$$

որտեղ $0 \le x \le 1$: (24)-ը՝ $ln(1 + x)$ ֆունկցիայի Թեյլորի բանաձևն է, որտեղ լրացուցիչ անդամի համար կունենանք հետևյալ գնահատականը

$|R_n(x)| \leq \frac{x^{2n+1}}{2n+1}$ ։

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ երբ $0 \leq x \leq 1$, ապա $\left\{\frac{x^{2n+1}}{2n+1}\right\}$ հաջորդականությունը անվերջ փոքր հաջորդականություն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա. Հանրահաշիվ և մաթ.անալիզի տարրեր: Ավագ դպրոց, 12-րդ դասարան (բնագիտամաթեմատիկական հոսք). Երևան, «Տիգրան Մեծ» հրատ. 2011. 208 էջ:
2. Рубинов А.М., Шапиев К.Ш. Элементы математического анализа. Пособие для учителей. М.: «Просвещение». 1972. 280 с.

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հարությունյան Ա.Ս.

«Բյուրակն» կրթահամալիր

Ինչպես հայտնի է, խմբային ուսումնական պարապմունքները, որոնք հիմա գերաշխռում են կրթական հաստատությունների ճնշող մեծամասնությունում, բնութագրվում են ընդհանուր ճակատի (դաս-դասարանային համակարգի) առկայությամբ: Խմբային ուսումնական պարապմունքների մյուս հատկանիշները պարապմունքները ընդհանուր ճակատով կազմակերպելու հետևանք են: Օրինակ՝ այն, որ բոլորի համար ուսումնական ծրագրի յուրացման երթուղին (ուսումնական ծրագրի բաժինների ու թեմաների ուսումնասիրման որևէ ենթադրելի հաջորդականություն) միևնույնն է, ուսումնական պարապմունքներն ունեն ընդհանուր սկիզբ և վերջ, ուսումնական խմբի անդամների ընդմիջումների ու հանգստի համար հատկացված է ընդհանուր ժամանակահատված (մանրամասն տես [1]):

Ենթադրվում է, որ աշակերտները յուրացրել են ուսումնական ծրագրի նույն հատվածը, բայց նրանց որոշակի մասը, փաստորեն, մնում է ուսումնական գործընթացից դուրս, քանի որ չի կարողանում ժամանակին ընկալել և յուրացնել ուսումնական նյութը: Մյուս կողմից, բավարար և ավելի բարձր ընդունակությունների տեր աշակերտների դեպքում դպրոցական դասընթացի հաղթահարումը ոչ բարդ խնդիր է: Սակայն նույնիսկ այդպիսի աշակերտների զգալի մասը ավանդական ուսուցման ժամանակ կորցնում է իր ընդունակությունների որոշակի մասը, քանի որ այդ ուսուցումն աչքի չի ընկնում աշակերտների ինքնուրույն աշխատանքի առատությամբ. բոլոր անդամների համար առջևում է յուրացման ենթակա ծրագրի միևնույն հատվածը:

Այդ պարագայում առաջանում է ուսումնական նյութի՝ ավելի ռացիոնալ եղանակներով մատուցելու խնդիրը (մանրամասն տես [2]):

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին հատուկ է ընդհանուր ճակատի բացակայության իրավիճակը, այսինքն՝ ուսումնական խմբի անդամները, որպես կանոն, իրականացնում են տարբեր նպատակներ, ուսումնասիրում են ուսումնական նյութի տարբեր հատվածներ, տարբեր եղանակներով ու միջոցներով: Դրա հետևանքով տարբեր աշակերտներ ուսումնական դասընթացը յուրացնում են տարբեր երթուղիներով (մանրամասն տես [1]):

Կարծիքներ կան այն մասին, որ մաթեմատիկայի դասընթացում հնարավոր չէ կազմել արդպիսի երթուղիներ, քանի որ թեմաների միջև տրամաբանական կապերը շատ խիստ են դրված: Սակայն, եթե ուսումնասիրենք երկրաչափության դպրոցական դասընթացի դասագրքերը, ապա կնկատենք առկա թերությունները՝ կապված բաժինների, թեմաների բաշխվածության հետ: Մենք կարող ենք ընդհանրացնել որոշ թեմաներ և դրանց համար կազմել նոր երթուղիներ, չխախտելով բաժինների և առանձին թեմաների միջև եղած տրամաբանական կապերը, ընդ որում ինչպես յուրաքանչյուր աշակերտի համար, այնպես էլ ընդհանուր սովորողների համար:

Քննարկենք մասնավոր մի դեպք՝ «Եռանկյուններ» թեման: Այս թեմայի ուսուցումը երկրաչափության դպրոցական դասընթացում սկսվում է յոթերորդ դասարանում: Նշենք, որ «Եռանկյուններ» թեման ներմուծելուց առաջ նպատակահարմար է, որ ուսումնասիրվեն երկրաչափության հիմնական աքսիոմները, նախադրույթները, ուղղահայաց ուղիղները, երկու ուղիղների զուգահեռության հայտանիշները, զուգահեռ ուղիղների աքսիոմը, որպեսզի աշակերտները ամբողջական պատկերացում կազմեն եռանկյան մասին: Որոշ թեմաներ անիմաստ հաջորդում են մեկը մյուսին, ինչպես օրինակ՝ սկզբում տրվում է եռանկյան հասկացությունը, որին հաջորդում է եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը, որից հետո տրվում են ուղղին ուղղահայաց, եռանկյան միջնագծեր, կիսորդներ և բարձրություններ հասկացությունները, այնուհետև հավասարասրուն եռանկյան հատկությունները, որին հաջորդում են եռանկյունների հավասարության երկրորդ և երրորդ հայտանիշները (մանրամասն տես [3]): Այստեղ մենք կարող ենք որոշ թեմաներ համակարգել և կազմել երթուղիներ:

Մասնավոր դեպքով քննարկենք եռանկյունների հավասարության հայտանիշները:: Այս դեպքում ունենք հետևյալ թեմաները՝

Թ1-Եռանկյուն, հիմնական հասկացությունները

Թ2-Եռանկյունների հավասարության I հայտանիշը

Թ3-Եռանկյունների հավասարության II հայտանիշը

Թ4-Եռանկյունների հավասարության III հայտանիշը

Նշենք, որ կան որոշ թեմաներ, որոնք պետք է առաջնային ուսումնասիրվեն բոլոր երթուղիներում: Պարզ է, որ բոլորը առաջնային պետք է ուսումնասիրեն Թ1-ը: Դասագրքում տրված երթուղին ենթադրում է հետևյալ տեսքը՝ Թ1→ Թ2→ Թ3→ Թ4 : Եթե հաշվի առնենք, որ Թ2-ը, Թ3-ը, Թ4-ը անկախ են մեկը մյուսից, ապա կարելի է կազմել նաև հետևյալ տեսքի երթուղիներ՝ Թ1→ Թ2→ Թ4→ Թ3,

Թ1→ Թ3→ Թ2→ Թ4,

Թ1→ Թ3→ Թ4→ Թ2,

Թ1→ Թ4→ Թ2→ Թ3,

Թ1→ Թ4→ Թ3→ Թ2:

Այս տեսքի երթուղիները հնարավորություն են տալիս ոչ միայն լուծել աշակերտների անհատական պլանների խնդիրը, այլ նաև՝ ուսուցման գործընթացի կազմակերպման խնդիրը: Այսինքն, հաշվի առնելով վերը նշված խնդիրները և կոլեկտիվ պարապմունքների առանձնահատկությունները, այս երթուղիներից օգտվելով կարելի է ուսումնական գործընթացը կազմակերպել թեմաների փոխհաղորդման մեթոդիկայով:

Հանգունորեն կարելի է կազմել ընդհանուր թեմայի համար երթուղի: Օրինակ՝ հավասարասրուն, հավասարակողմ, ուղղանկյուն եռանկյուն թեմաներով, ինչպես նաև՝ եռանկյան մակերեսի հաշվման բանաձևի, եռանկյան միջին գծի և այլ թեմաներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտչյան Մ.Ա. Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացմա մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը // Երևան, 2011թ.-148էջ:
2. Աթանասյան Լ.Ս., Բուտուզով Վ.Ֆ., Կադոմցեվ Ս.Բ., Պոզնյակ Է.Հ., Յուդինա Ի.Ի., Երկրաչափություն 7// Երևան, «Զանգակ-97» 2011թ.:

THE OPPORTUNITIES OF FORMING ROUTINES IN THE PROCESS OF TRAINING „TRAINGLES”.

Harutyunyan A.S.

Summary

In this article we have discussed some sequences of themes during maths lessons at school. As a particular case we have discussed a topic „Triangles”. We formed several routines and considered its opportunities during the teaching process.

«ԼՈԳԱՐԻԹՄԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղազարյան Ն.Ա.

Քաջարանի թիվ 2 դպրոց, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

«Լոգարիթմական ֆունկցիա» թեմայի ուսուցման ժամանակ կարևորում եմ գեղեցիկի՝ բարդը պարզին հանգեցնելու հատկանիշի առկայությունը: Լոգարիթմական ֆունկցիան ներմուծում եմ որպես ցուցչային ֆունկցիայի հակադարձ ֆունկցիա, այնուհետև որպես փոխհակադարձ ֆունկցիաներ կառուցում եմ գրաֆիկը և դրա հիման վրա արտածում եմ ֆունկցիայի հատկությունները: Այս ընթացքում լոգարիթմական ֆունկցիան դիտարկվում է գեղեցիկի իր արտաքին և ներքին դրսևորումներով (տես [1]): Արտաքին գեղագիտությունը վերաբերում է ֆունկցիայի գրաֆիկի տեսքին, գրաֆիկների համաչափու-թյանը, իսկ ներքին գեղագիտությունը կրում է բովանդակային բնույթ, այն արտահայտվում է ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաների հատկությունների միջև առկա փոխհարաբերությունների և կապերի տեսքով:

Այժմ ներկայացնեմ «Լոգարիթմական ֆունկցիա» թեմայի մատուցման իմ մոտեցումը: Նախ հարցնում եմ աշակերտներին, թե ինչպես ենք գտնում տրված թվի հակադարձ թիվը, բերում ենք օրինակներ: Այնուհետև հարցնում եմ. իսկ ինչպե՞ս գտնել ֆունկցիայի հակադարձ ֆունկցիան: Աշակերտները հիմնականում կարծում են, որ $f(x)$ ֆունկցիայի հակադարձը կլինի $\frac{1}{f(x)}$: Հաջորդ հարցը այն է, թե արդյո՞ք բոլոր ֆունկցիաները կունենան հակադարձ: Այստեղ նույնպես հնչում են տարբեր կարծիքներ: Այս քննարկումից հետո ես անցնում եմ ոչ ակնհայտ ճշմարտության բացահայտմանը: Նշում եմ, որ ֆունկցիան ունի հակադարձ ֆունկցիա, եթե այն մոնոտոն է: Որպես մոնոտոն ֆունկցիայի օրինակ նշում եմ ցուցչային ֆունկցիան: Դիտարկելով օրինակ $y = 2^x$ ցուցչային ֆունկցիան՝ հանձնարարում եմ կատարել հետևյալ ձևափոխությունները:

ա) Գտնեք x – ը. $x = \log_2 y$,

բ) Փոխեք x –ի և y -ի տեղերը. $y = \log_2 x$:

Այնուհետև բացատրում եմ, որ f ֆունկցիայի հակադարձը գտնելու համար անհրաժեշտ է.

ա) $y = f(x)$ հավասարումից գտնել x – ը,

բ) ստացված բանաձևում փոխել x – ի և y - ի տեղերը:

Ստացվում է, որ վերը կատարված քայլերով մենք գտել ենք $y = 2^x$ ֆունկցիայի հակադարձ ֆունկցիան: Ընդհանրացնելով կասենք, որ $y = a^x$ ցուցչային ֆունկցիայի հակադարձը $y = \log_a x$ ֆունկցիան է, որը կոչվում է լոգարիթմական ֆունկցիա:

Այստեղ իր դրսևորումն է ունենում գեղեցիկի անսպասելիության հատկանիշը, քանի որ աշակերտների պատկերացումները ֆունկցիայի հակադարձը գտնելու վերաբերյալ խիստ տարբերվում են թվերի հակադարձի վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումներից: Իսկ մատուցման նմանատիպ ընթացքը՝ հարց ու պատասխանի միջոցով համապատասխան գիտելիքի բացահայտումը ուղեկցվում է գեղեցիկի ինտելեկտուալ որոնման, ջանքերի գործադրման հատկանիշների դրսևորմամբ [1]:

Այնուհետև ձևակերպում եմ լոգարիթմական ֆունկցիայի սահմանումը, որը աչքի է ընկնում իր հստակությամբ, հակիրճությամբ, պարզությամբ:

$y = \log_a x$ բանաձևով տրված ֆունկցիան, որտեղ a – ն մեկից տարբեր դրական թիվ է, կոչվում է լոգարիթմական ֆունկցիա [2]:

Այժմ դիտարկենք $y = \log_2 x$ ֆունկցիան: Լոգարիթմի սահմանումից արդեն գիտենք, որ $x > 0$, այսինքն՝ դիտարկվող ֆունկցիայի որոշման տիրույթը դրական իրական թվերի բազմությունն է: Հանձնարարում եմ աշակերտներին կատարել հետևյալ ձևափոխությունները :

ա) Գտեք x – ը: $x = 2^y$ (*ընդ որում* x *–ը միակն է* $(0,\infty)$ *միջակայքում, հակառակ դեպքում ֆունկցիան հակադարձ չէր ունենա*):

բ) Փոխեք x – ի և y - ի տեղերը: $y = 2^x$:

Ի՞նչ եք նկատում: Ստացվում է, որ $y = 2^x$ ֆունկցիայի հակադարձը $y = \log_2 x$ լոգարիթմական ֆունկցիան է, իսկ $y = \log_2 x$ ֆունկցիայի հակադարձը՝ $y = 2^x$ ֆունկցիան: Այստեղ նույնպես իր դրսևորումն է ունենում գեղեցիկի սուբյեկտիվ բաղադրիչներից անսպասելիության հատկանիշը, որը աշակերտների մոտ զարմանք արտահայտող հույզեր է առաջացնում:

Այնուհետև ես ընդհանրացնելով այս ամենը նշում եմ, որ ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաները փոխհակադարձ ֆունկցիաներ են: Ֆունկցիաների մեջ առկա այս փոխհարաբերությունը իրենից ներկայացնում է գեղեցիկի ներքին դրսևորում: Իսկ այն փաստը, որ փոխհակադարձ ֆունկցիաների գրաֆիկները համաչափ են $y = x$ ուղղի նկատմամբ, արդեն գեղեցիկի արտաքին դրսևորում է: Նշեմ, որ համաչափությունը արտաքին գեղեցիկի կարևոր հատկանիշ է: Այսպիսով, օգտվելով ցուցչային ֆունկցիայի գրաֆիկից՝ կառուցենք դրա համաչափ գրաֆիկը $y = x$ ուղղի նկատմամբ: Ստացված գրաֆիկը կլինի լոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկը:





Համաչափության հատկանիշի մեկ այլ դրսևորում է այն, որ լոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկները $a > 0$, $0 < a < 1$ դեպքերում համաչափ են աբսցիսների առանցքի նկատմամբ:



Լոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկը կառուցելուց հետո աշակերտների հետ միասին բացահայտում ենք լոգարիթմական ֆունկցիայի հատկությունները, ապա զուգահեռներ տանում ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաների հատկությունների միջև:

Գծում ենք T – աձև աղյուսակ, մի սյունակում գրառում ենք ցուցչային ֆունկցիայի արդեն հայտնի հատկությունները, իսկ մյուս սյունակում՝ գրաֆիկի հիման վրա ներկայացնում ենք լոգարիթմական ֆունկցիայի հատկությունները: Այս երկու ֆունկցիաների հատկությունների համեմատության ընթացքում ի հայտ են գալիս գեղեցիկի ներքին դրսևորման լավ օրինակներ: Իսկ ընդհանուր առմամբ հատկությունների արտածման, երկու ֆունկցիաների հատկությունների համեմատման ընթացքում օրինաչափությունների բացահայտման այս ընթացքում երևան են գալիս մաթեմատիկական գեղեցիկի ոչ ակնհայտ ճշմարտության բացահայտման, ինտելեկտուալ որոնման, անպասելիության հատկանիշները [1]:

Ցուցչային ֆունկցիա $f(x) = a^x, a > 0, a \neq 1$	*Լոգարիթմական ֆունկցիա* $f(x) = log_a x, a > 0, a \neq 1$
1. Որոշման տիրույթ՝ $(-\infty, +\infty)$ 2. Արժեքների բազմություն՝ $(0, \infty)$ 3. Ֆունկցիան դրական է ամբողջ թվային առանցքի վրա: Ֆունկցիայի գրաֆիկը գտնվում է առաջին և երկրորդ քառորդներում: 4. Ֆունկցիան մոնոտոն է ամբողջ թվային առանցքի վրա: Ընդ որում, այն աճող է, եթե $a > 1$ և նվազող՝ եթե $0 < a < 1$: 5. Ֆունկցիան սահմանափակ է ներքևից զրո թվով և սահմանափակ չէ վերևից: Այն չունի մեծագույն և փոքրագույն արժեքներ:	**6.** Որոշման տիրույթ՝ $(\mathbf{0}. \infty)$ 7. Արժեքների բազմություն՝ $(-\infty, \infty)$ 8. $a > 1$ դեպքում Ֆունկցիան բացասական է (0,1) և դրական՝ $(1, \infty)$ միջակայքերում, իսկ $0 < a < 1$ դեպքում ֆունկցիան դրական է (0,1) և բացասական՝ $(1, \infty)$ միջակայքերում: 9. Ֆունկցիան մոնոտոն է իր որոշման տիրույթում: Ընդ որում, այն աճող է, եթե $a > 1$ և նվազող՝ եթե $0 < a < 1$: 10. Ֆունկցիան 0 արժեքն ընդունում է $x = 1$ կետում:

Աշակերտներից շատերը կնկատեն, որ ցուցչային ֆունկցիայի որոշման տիրույթը լոգարիթմական ֆունկցիայի արժեքների տիրույթն է, իսկ արժեքների տիրույթը՝ լոգարիթմական ֆունկցիայի որոշման տիրույթը: Բացի այդ թե՛ ցուցչային, թե՛ լոգարիթմական ֆունկցիաները աճող են, եթե $a > 1$ և նվազող՝ եթե $0 < a < 1$: Ընդ որում սրանք հատուկ են բոլոր փոխհակադարձ ֆունկցիաներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միքայելյան Հ.Ս., Գեղեցիկը, մաթեմատիկան և կրթությունը. Մաս II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթության ներուժը/ Հ.Ս. Միքայելյան Եր.: Էդիթ Պրինտ, 2015, 440 էջ:
2. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա. Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր: Հանրակրթ. դպր. 11-րդ դաս. դասագիրք (ընդհանուր և հումանիտար հոսքերի համար) – Եր.: Էդիթ Պրինտ. 2010 – 128 էջ:

THE AESTHETICALLY APPEALING OF THE LEARNING OF «LOGARITHMIC FUNCTION»

Ghazaryan N. A.

Summary

I explain the logarithmic function as the inverse function of the exponential function, and then draw the graph functions and reveal the properties of functions**.** This function was observed in sliding its internal and external displays beauty. Exterior aesthetics in the graph format, schedule proportionality and aesthetics of the interior of a substantial nature and it is expressed in exponential form relationships and connections between the sliding properties of functions**.**

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղուշչյան Ա.Խ.

մ.գ.թ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Յուրաքանչյուր առաջադրանք ուսուցման այս կամ այն փուլում իր մեջ կրում է տարատեսակ գործառույթներ, որոնցից մեկը համարվում է առաջատար: Մաթեմատիկայի ուսուցման կրթական, զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներն արդյունավետ իրականացնելու միջոցներից են տեքստային խնդիրները: Դրանց միջոցով հանրահաշվի դպրոցական դասընթացի հիմնական հասկացություններն ուսումնաճանաչողական գործունեության տարբեր փուլերում /վերարտադրողական, որոնողական, հետազոտական/ յուրացվում և ամրապնդվում են, ինչը ենթադրում է այդ խնդիրների դասակարգման և լուծման ընդհանուր մեթոդների որոնման անհրաժեշտություն, առանձին թեմաների և հասկացությունների ուսումնասիրման անհրաժեշտության հիմնավորում, նոր հասկացությունների ներմուծման նախապատրաստում, ծանոթացում վերացական տեսության կոնկրետ մոդելների հետ, լուծման տարբեր մեթոդների արդյունավետության համեմատություն և այլն:

Այս ամենն իրագործվում է սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ: Կարևորվում են բարդությունների հաղթահարման, սեփական ուժերի փորձարկման, աշխատանքին լրաժեքորեն տրվելու՝ սովորողների ձգտումները, աշխատանքով լիարժեք կլանման զգացողության առաջացումը: Բազմաթիվ սովորողներ նման զգացողություն ունենալով դասարանում, հավանական է, որ այն կփոխանցեն նաև ինքնուրույն աշխատանքում: Աշակերտը պետք է ցանկանա լուծել խնդիրները, նրա համար պետք է հետաքրքրական լինի լուծման գործընթացը և ոգևորող՝ ստացված արդյունքը:

Չնայած մեթոդական բազմաբովանդակ և բազմաքանակ հետազոտությունների առկայությանը, մինչ այժմ, փաստորեն, չկան այնպիսիք, որոնցում լիարժեք մշակված լինի տեքստային խնդիրների լուծման ընդհանուր մեթոդիկա: Առանձին տեսակների լուծման որոշակի ցուցումներ մշակվել են, սակայն դրանց հետ ծանոթացումը հանգեցնում է սովորողների մտածողության սահմանափակմանը, արդյունքում չեն ձևավորվում անծանոթ խնդիրների լուծման դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողություններ:

Տեքստային խնդիրների լուծման գործընթացը հիմնականում իրականացվում է հետևյալ փուլերով. *խնդրի բառային բովանդակության վերլուծություն, համառոտագրում, մոդելի կառուցում, լուծման եղանակի որոնում, խնդրի լուծման իրականացում, խնդրի լուծման ստուգում, խնդրի հետազոտում, անդրադարձ խնդրի բովանդակությանը, խնդրի պատասխանի ձևակերպում:* Յուրաքանչյուր փուլի իրականացում, խնդրի բովանդակությունից կախված, ենթադրում է որոշակի նպատակ:

Շարժման վերաբերյալ խնդիրների լուծման ուսուցման հիմնական նպատակը արագություն, ժամանակ, ճանապարհ հասկացություններից յուրաքանչյուրի ճիշտ մեկնաբանությունն ու նրանց միջև և ֆունկցիոնալ, և չափական առնչությունների վերհանումն է: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել անհայտի ներմուծմանն ու խնդրի համառոտագրմանը: Եթե ներմուծված անհայտի միջոցով կազմված հավասարումների, դրանց համակարգերի լուծումները չեն հանգեցնում ցանկալի արդյունքի, անհրաժեշտ է լուծումները փնտրել այլ նշանակումներով: Սա նպաստում է սովորողների կամային հատկանիշների ձևավորմանն ու նպատակին հասնելու ուղիների որոնման ձգտմանը:

Համատեղ աշխատանքի վերաբերյալ խնդիրների համար առանցքային են աշխատանք, ժամանակ, արտադրողականություն հասկացությունները: Դրանց իմաստային մեկնաբանությունները հուշում են, թե տվյալ խնդրի լուծման ժամանակ ի՞նչն է նպատակահարմար նշանակել որպես անհայտ, հենվելով չափայնությունների վրա հավասարումները կազմել այնպես, որ դրա առանձին բաղադրիչներն արտահայտված լինեն միևնույն չափման միավորով:

Մեթոդական տեսանկյունից արդյունավետ է շարժման և համատեղ աշխատանքի վերաբերյալ խնդիրների լուծման ուսումնասիրման ընթացքում զուգահեռներ անցկացնել ճանապարհ և աշխատանք, արագություն և արտադրողականություն հասկացությունների միջև, նշելով, որ այս դասերին պատկանող խնդիրները լուծվում են համանման տրամաբանությամբ:

Լուծույթների և խառնուրդների վերաբերյալ խնդիրների համար առաանցքային են խտություն, զանգված, ծավալ, խառնուրդում կամ լուծույթում նյութի տեսակարար կշիռ, տոկոսային կշիռ և այլ հասկացություններ: Այս դասի խնդիրների լուծումներն իրականացնում են տարբեր ուսումնական առարկաներից ստացած գիտելիքների համակարգման և ընդհանրացման գործառույթներ:

Մասերի, տոկոսների ու դրանց աճերի վերաբերյալ խնդիրների լուծումները հանգեցվում են հետևյալ օժանդակ խնդիրների լուծման. Թվի մասի գտնելը, թվի գտնելը դրա մասով, տրված թվի տոկոսները գտնելը, թիվը գտնելը նրա տոկոսներով, երկու թվերի տոկոսային հարաբերությունների գտնելը, մեծությունների տոկոսային փոփոխությունը, ամբողջի բաժանումը համեմատական մասերի, բացարձակ և հարաբերական աճ և այլն:

Դիտարկենք մաթեմատիկական և հոգեբանական առումներով դժվարություն ներկայացնող հետևյալ խնդիրները.

1. *Իրար հաջորդող երկու հավասար ժամանակամիջոցներում* ավտոբուսը շարժվել է համապատասխանաբար 60 կմ/ժ և 90 կմ/ժ արագություններով: Որոշել ավտոբուսի *միջին արագությունն* ամբողջ շարժման ընթացքում:

2. *Ճանապարհի առաջին և երկրորդ կեսերն* ավտոբուսը շարժվել է համապատասխանաբար 60 կմ/ժ և 90 կմ/ժ արագություններով: Որոշել *ավտոբուսի միջին արագությունն* ամբողջ շարժման ընթացքում:

Խնդիրների լուծման ընթացքում սովորողների կողմից թույլ է տրվում շատ հաճախ հանդիպող վրիպում. երկու խնդիրներում էլ անհայտ մեծության որոնումը հանգում է հայտնի արագությունների միջին թվաբանականի, մինչդեռ միջին արագության հասկացության ճիշտ մեկնաբանման դեպքում սխալը կարելի է կանխարգելել: Միջին արագությունը հաշվվում է $v_{միջ} = \frac{s_{ըն}}{t_{ըն}} = \frac{s_1+s_2+s_3+\cdots}{t_1+t_2+t_3+\cdots}$ բանաձևով: Առաջին խնդրում երկու՝ իրար հավասար t_1 և t_2 ժամանակամիջոցներում V1 և V 2 արագություններով շարժվելիս կիրառվում է $v_{միջ} = \frac{s_{ըն}}{t_{ըն}} = \frac{v_1t_1+v_2t_2}{t_1+t_2}$ բանաձևը, որից ստանում ենք $v_{միջ} = \frac{(v_1+v_2)}{2}$ բանաձևը, երկրորդում՝իրար հավասար ճանապարհները նշանակելով s_0, ստանում ենք. $v_{միջ} = \frac{s}{t} = \frac{2s_0}{\frac{s_0}{v_1}+\frac{s_0}{v_2}} = \frac{2}{\frac{1}{v_1}+\frac{1}{v_2}}$,:

Այսպիսով, 1-ին խնդրում $v_{միջ} = \frac{(v_1+v_2)}{2} = \frac{(60+90)}{2}$=75 կմ/ժ, 2-րդում՝ $v_{միջ} = \frac{2v_1v_2}{(v_1+v_2)} = \frac{2\,.60\,.90}{(60+90)}$=72 կմ/ժ:

Քննարկենք շարժման վերաբերյալ մեկ այլ խնդիր, որի լուծման եղանակների արդյունավետության հիմնավորումը ըստ էության մանկավարժական քննարկման առանձին հարց է:

Ավտոբուսը ժամը 9^{30} -ին դուրս էր եկել A վայրից և նախատեսել էր 14^{30}-ին հասնել A-ից 250 կմ հեռավորության վրա գտնվող B վայրը:

1. Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է ընթանա ավտոբուսը՝ ժամանակին B հասնելու համար:
2. A վայրից քանի՞ կմ հեռավորության վրա կգտնվի ավտոբուսը ժամը 11^{00}-ին:
3. Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո ավտոբուսը կգտնվի A-ից 80 կմ հեռավորության վրա:
4. Եթե ժամը 11^{30}-ին ավտոբուսը կես ժամ կանգ առներ, ապա քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարունակեր ճանապարհը, որպեսզի ժամանակին հասներ B վայրը:

Այս խնդրի պահանջներից յուրաքանչյուրի պատասխանն աշակերտներն ստանում են որոշակի հաշվարկների կատարման արդյունքում, ինչը ժամանակատար է: Սակայն խնդրի լուծման գրա-ֆիկական եղանակից օգտվելը լուծումը դարձնում է առավել արդյու-նավետ և մե-թոդապես նպատակահարման:

Յանկալի է խնդիրը գրաֆիկորեն պատկերել այսպես. շարժման ժամանակը, և հետևաբար, ճանապարհը բաժանելով 10 հավասար մա-սերի, ստանում ենք յուրաքանչյուր կես ժամում անցած ճանապարհը:



Խնդրի լուծման նման ներկայացումը նպաստում է և՛ աշակերտի կողմից առաջադրանքի լուծման այլ տարբերակների որոնմանը, և՛ նրա մաթեմատիկական ու տրամաբանական մտածողության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միքայելյան Հ.Ս., Հանրահաշվի ուսուցումը 6-8-րդ դասարաններում: Մե-թոդական ուղեցույց : Եր., Հայ Էդիթ.-2000թ., 292 էջ:
2. Далингер В.А. Обучение учащихся ре- шению текстовых задач методом состав-ления уравнений: Пособие для учителей. – Омск: Изд-во ОИУУ, 1991. – 50 с.
3. Саранцев Г.И. Методика обучения математике в средней школе.-Москва: Изд-во Просвящение, 2002.-224 с.

TEACHING THE IMVESTIGATION OF FUNCTION WITH INFORMATION TECHNOLOGY

Ghushchyan A. Kh.

Summary

In article the questions concerning a technique of the training of pupils in the solution of text tasks are considered, the concept of a text task, their role and a place of training in mathematics is analyzed, various classifications and methods of the solution of text tasks are given, stages of the solution of text tasks are noted, methodical recommendati-ons about realization of each stage are made, various ways, the special attention is paid to a question of verification of the solution of text tasks, errors made by pupils which take place in the solution of text tasks are specified.

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎ - ՀԱՋՈՐԴԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ղուշչյան Ա.Խ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ. գ.թ., պրոֆեսոր

Քոչարյան Ս.Դ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

Մեր հասարակության զգալի մասն արդեն երկար տարիներ առաջնորդվում է մասնագիտություն ընտրելու միևնույն չափանիշով: Բարձրագույն կրթության առկայությունը ներկայումս դիտարկվում է որպես որոշակի պարտադիր պայման, անհրաժեշտություն: Այնուհետև, աշակերտի ապագա մասնագիտությունը(մեծ մասամբ) ընտրում են ծնողները երեխայի՝ դպրոցական վերջին մեկ-երկու տարիների ընթացքում: Ինչպես վկայում են ՀՀ –ում իրականացված մի շարք հետազոտություններ, այդ թվում նաև ԵՈՒԻ[1] կողմից իրականացված «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» հետազոտության արդյունքները, երիտասարդների համար մասնագիտության ընտրության հարցում առաջնային գործոն է հետագայում բարձր աշխատավարձ ստանալու ակնկալիքը: Առաջնայնությամբ հաջորդ գործոնն է կարիերային աճի հնարավորությունը, ինչը իր հերթին ֆինանսական բարեկեցության գրավական է հանդիսանում: Մեր կարծիքով, մասնագիտության ընտրության նման մոտեցումն անթույլատրելի է: Հատկապես մանկավարժի պաշտոնում «պատահական» մարդկանց ներկայությունը կարող է կործանարար ազդեցություն ունենալ կրթական ամբողջ համակարգի վրա:Հիմնվելով ԵՈՒԻ և ՀՌԿԿ[2] հրապարակած հետազոտությունների վրա [2], [3]՝ Մեր կողմից նախաձեռնվեց սեփական հետազոտություն, որին ներգրավվեցին մանկավարժի որակավորում ստացած մոտ 200 անձ: Առցանց հարցման արդյունքները հաստատեցին խնդրի առկայությունը. ինքնուրույն և գիտակցաբար իրենց մասնագիտությունն ընտրել էին հարցվածների միայն 20%: Վերընշված բոլոր հանգամանքները պատճառ հանդիսացան, որպեսզի Մեր կողմից նախաձեռնվի մասնագիտակողմնորոշիչ կայքի նախագծում, որի հիմնական առաքելությունն է աշակերտների կողմնորոշումը դեպի մաթեմատիկայի ուսուցիչ մասնագիտությունը:

Կայքի նախագծման հիմքում է հաջորդելիության սկզբունքը, ինչով էլ պայմանավորված է կայքի անվանումը՝ Succession as a success, (ըստ էության՝ հաջորդելի ճանապարհ դեպի հաջողություն) և կայքի կառուցվածքը: Կայքը կազմված է 7 հիմնական պատուհաններից: 2-6 պատուհանները կապ են հաստատում ուսուցման նախորդ և հաջորդ փուլերի միջև:

Բացի հիմնական մասնագիտակողմնորոշիչ գործառույթից, կայքի գործառույթներն են.

1. Բարձրացնել սովորողների մաթեմատիկական պատրաստվածության մակարդակը:
2. Նպաստել ծնող-մանկավարժ համագործակցության սերտացմանը:
3. Բարձրացնել ուսուցման տարբեր փուլերում դասավանդող մաթեմատիկայի ուսուցիչների համագործակցության մակարդակը:
4. Զինել ծնողներին համապատասխան գիտելիքներով, որպեսզի վերջիններս կարողանան օգնել երեխային սահուն անցնել ուսուցման մի փուլից մյուսին:
5. Մանկավարժի մասնագիտության քարոզչություն ընդհանրապես և մաթեմատիկայի ուսուցչի՝մասնավորապես:

Տարբեր մասնագետներ տարակարծիք են այն հարցի շուրջը, թե երբ է պետք սկսել երեխայի մասնագիտական կողմնորոշումը: Մենք կարծում ենք, որ տարրական դասարաններում այդ հարցը պետք է հանգի միայն բազմաբնույթ տեղեկությունների հաղորդմանը: Իսկ դա կարելի է իրականացնել նախ և առաջ խաղի միջոցով: Ինչպես Հ. Թումանյանն է գրել. «Ամեն ինչ կյանքում խաղ է ու հաճույք, և կյանքում ամենալուրջ բանին էլ պիտի նայել որպես խաղի. էն ժամանակ մարդիկ մի բան կսովորեն, մի բան կստեղծեն հաճույքով» [1]: Տարբեր մասնագիտություններին ծանոթացնելու և մաթեմատիկական գիտելիքների պաշարը ավելացնելու միջոց է նաև հեքիաթը:

«Նախադպրոցականն ու առաջին դասարանցին պատկանում են միևնույն դարաշրջանին», - ասել է Սուխոմլինսկին: Այդ կարծիքով ենք առաջնորդվել կազմելով կայքի 3-րդ պատուհանի բովանդակությունը:

Սովորողների մասնագիտական կողմնորոշումը՝ որպես խնդիր, անհրաժեշտ է դիտարկել արդեն միջին դպրոցում և լուծել նախ և առաջ դպրոց - ծնող համագործակցության շնորհիվ՝ սովորողի իրական կարողությունների բացահայտման ճանապարհով: Ուսուցման այս փուլում մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրները լուծել ենք Ուզում եմ դառնալ և Օգտակար է իմանալ բազմաբովանդակ պատուհանների պարունակության միջոցով:

Ավագ դպրոցում տեղի է ունենում մասնագիտական նախնական կողմնորոշում, քանի որ սովորողները բաժանվում են հոսքերի, ոմանք ընդունվում են միջին մասնագիտական հաստատություններ: Դրանով է պայմանավորված Մասնագիտական կողմնորոշում և Ակումբային ուսուցում ենթապատուհանների առկայությունը, որոնց միջոցով լուծել ենք մասնագիտության ընտրության հետ առնչվող մի շարք խնդիրներ:

Մասնագիտական կողմնորոշում էջում հստակ ներկայացվում են կոնկրետ մասնագիտությունների գործառույթները, դրական կողմերը և խնդիրները, բուհերի ընդունելության կարգը, իրավական ակտերը: Էջը հնարավորություն է ընձեռում ծնողներին և դիմորդներին իրականացնել կարծիքների փոխանակում այս կամ այն բուհի վերաբերյալ, ծանոթանալ բուհերի բաց դռների օրացուցակին:

ԵՎ, վերջապես Արժեքային համակարգ էջը, որի առկայությունը պարտադիր պայման ենք համարել մասնագիտական կողմնորոշում ունեցող կայքում:

Արժեքային ճիշտ համակարգ ձևավորելու դեպքում միայն լավ ուսուցիչ կունենանք: Այս էջում շեշտը դրել ենք, հատկապես հայրենասիրական արժեքի վրա, քանզի ինչպես հպարտությունից են ծնվում մնացած այլ մեղքերը, այդպես էլ, մեր խորին համոզմամբ, հայրենասիրության պակասից խեղաթյուրվում են մնացած բոլոր արժեքները:

Այսպիսով, դպրոցում աշակերտներին մասնագիտորեն ճիշտ կողմնորոշելու դեպքում միայն մանկավարժական բուհը կունենա որակյալ կադրեր, իսկ հայ ժողովուրդը՝ լավ ուսուցիչներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բացառիկ լրագիր, Հովհաննես Թումանյանի թանգարան, 01 հունիսի 2014, № 7 . 4 էջ:
2. Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն.գործատու-երիտասարդ - ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական կայք/http://www.minsportyouth.am/:
3. Ապագային միտված մասնագիտական որակավորումների զարգացման պայմանները Հայաստանում, http://www.crrc.am/:

SUCCESSION AS A SUCCESS

Ghushchyan A.Kh., Kocharyan S.D.

Summary

The article presents new career guidance website developed by the authors. The basis of development of the site put the principle of succession, which is reflected in the choice of site and page title. The process of career guidance training is split into stages, each of which studied the problem is solved in accordance with the requirements of pupils at this stage.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՆՐԱՀԱՇՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մարգարյան Ն.Բ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

Ազգային արժեքները յուրաքանչյուր ազգի սոցիալհոգեբանական ինքնատիպության արտահայտություններն են: Յուրաքանչյուր ազգ ունի իրեն հատուկ բնավորություն, մտածողություն և աշխարհընկալում: Ազգային արժեքների ճանաչման միջոցով ենթադրվում է հայրենասիրության, մարդու և հասարակության հանդեպ հարգանքի ձևավորումը:

Ելնելով վերոնշյալ հանգամանքից միանգամայն կարևորվում է ազգային արժեքների ձևավորումը հատկապես դպրոցական ուսումնական առարկաների ուսուցման գործընթացում: Ինչպես յուրաքանչյուր ուսումնական առարկայի, այնպես էլ հանրահաշվի ուսուցման ընթացքում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ազգային արժեքնեի ձևավորմանը:

Ազգային արժեքների ձևավորման գործում մեծ է դասագրքերի դերը: Թվում է, թե երբ ՀՀ կրթական համակարգում ներմուծենք աշխարհի տարբեր երկրներում հաջողություն գրանցած դասագրքերը թարգմանված տարբերակով, ապա մենք էլ հաջողության կհասնենք: Սակայն յուրաքանչյուր ազգ ունի իրեն բնորոշ լեզվամտածողություն: Հենց դա է պատճառը, որ ցանկացած ուսումնական նյութ սովորողի կողմից ավելի դյուրըմբռնելի է, երբ դա մատուցվում է սեփական լեզվով և հենված է իր տվյալ ազգի ազգային արժեքների վրա: Ուստի չպետք է մոռանանք, որ լեզուն կարևորագույն ազգային արժեք է, առանց որի չկա ազգ: Լեզուն էթնիկական գործառույթներով աչքի ընկնող ամենացայ-տուն արժեքն է և ազգի էթնիկական ընդհանրության ամենամեծ ցուցանիշը: Այդ ընդհանրությունը մեծապես պայմանավորված է ազգային լեզվի հանդեպ ժողովրդի, հատկապես՝ մտավորականների վերաբերմունքով: Օտար լեզուն ազգայինից գերադասողն ու նրանով խոսողը վստահաբար չի նպաստում ազգային միասնությանը, ընդհակառակը՝ կազմալուծում է ազգային ընդհանրության գաղափարը: Այս երևույթը մեծապես տարա-ծում ուներ խորհրդային կարգերի ժամանակ, սակայն դժբախտաբար նկատվում է նաև հիմա:

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական առարկա, այնպես էլ հանրահաշիվը պետք է ներկայացված լինեն աշակերտներին միայն մաքրամաքուր հայերենով: Որպես օրինակ կարելի է ներկայացնել Հ. Ս. Միքայելյանի հանրահաշվի դասագրքերը: Օրինակ՝ 7-րդ դասարանի դասագրքի առաջին էջին գրված է՝

«Իմ կրտսեր բարեկամ, այսօր դու ստանում ես հանրահաշվի քո Այբբենարանը: Այն իր մեջ ամփոփում է մտածողության, կամքի և ոգու կոման անփոխարինելի խորհուրդներ: Նրա լեզուն հասանելի է բոլորին, բայց տիրապետում են միայն ուժեղները: Իմացիր այդ լեզուն և դու էլ նույնպես կլինես ուժեղ»:

Այս տողերում հայոց լեզվի միջոցով աշակերտներին է ներկայացվում հանրահաշվի ներուժն ու գեղեցկությունը, նրա լեզուն:

Անչափ կարևորվում է այն հանգամանքը, որ ուսումնական նյութը կառուցելիս և մատուցելիս պետք է հաշվի առնել միջին դպրոցում սովորող աշակերտների հոգեբանական առանձնահատկությունները: Վերջիններս հատուկ են՝ ինքնագիտակցության ընդվզումը, պատանեկան ռադիկալիզմը, զգացմունքայնությունը, միայնակության և շրջապատի կողմից չհասկացվածության զգացումը և այլն: Եվ մենք տեսնում ենք, որ ավագ դպրոցի սկիզբը չի համընկնում 12-14 տարեկանների այդ հոգեֆիզիոլոգիական գործընթացների ավարտին, այլ տեղի է ունենում երկու երեք տարի անց՝ մոտ 16-17 տարեկանում: Միջին դպրոցի ահա այդ մի քանի տարիները սկզբունքային նշանակություն ունեն: Տվյալ փուլում անհրաժեշտ է խորացնել մտավոր – ճանաչողական գործընթացները՝ չկորցնելով հանդերձ հոգեկան կյանքի այլ ոլորտների զարգացման հետ կապը, ուսուցման ծանրության կենտրոնը փոխադրել մտավոր ոլորտ: Հենց այդ ժամանակ է առավելապես անհրաժեշտ աշակերտներին կապել ազգային արժեքների հետ, այլապես ազգայինի բացակայության պարագայում նրանց հոգեկան աշխարհում կարող են տեղ գտնել ավելի հրապուրիչ թվացող այլ արժեքներ:

Միջին դպրոցի համար նախատեսված [2] դասագրքում, օրինակ, խոսվում է Տիգրան Մեծի, Տիգրան Պետրոսյանի, Անանիա Շիրակացու, ուսուցչի, զինվորականի, եկեղեցի կառուցելու, քրիստոնեության ընդունման, պարսիկների դեմ հայերի ապստամբության և բազում այլ ազգային արժեք հանդիսացող մարդկանց, երևույթների և իրողությունների մասին: Անշուշտ, աշակերտների մոտ այդ կերպ առաջանում է հետաքրքրություն ուսումնական նյութի մեջ առկա ազգային արժեքներ հանդեպ և դրանք դրոշմվում են նրանց ենթագիտակցության մեջ:

Ուսումնական նյութի գրավչականության տեսանկյունից ճիշտ եմ համարում դասագրքերի պատկերազարդումը հայկական ճարտարապետական կոթողների, խաչքարերի և այլ ազգային արժեքների նկարներով:

Բազմաթիվ տեքստային առաջադրանքներում պետք է օգտագործվեն առավելապես հայկական անվանումներ՝ մարդկանց, քաղաքների, լեռների, լճերի և այլ պարագաներում:

Սակայն պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ազգային արժեքները մատուցվեն տեղին և ճիշտ: Այլապես դրանք կկորցնեն իրենց գրավչականությունն ու կարող են դիտվել որպես ոչ կարևոր և թվալ անհետաքրքիր:

Պետք է նշել նաև, որ տարբեր ազգերի ազգային արժեքները հաճախ փոխազդում են միմյանց վրա: Այդ փոխազդեցության հետևանքով մի ազգի ազգային արժեհամակարգ կարող են ներթափանցել ինչպես դրական այնպես էլ բացասական արժեքներ: Ուստի ազգային արժեքները մատաղ սերնդին սերմանելիս պետք է հստակ բացատրել մեր ազգային արժեքների դերն ու նշանակությունը: Պետք է նպատակաուղղված կերպով հասնել նրան, որ ունենանք կայուն արժեմակարագ ունեցող երիտասարդություն, որնք հետագայում առնչվելով այս կամ այն արատավոր երևույթների ու բարքերի հետ կարողական հստակ մերժել դրանք ու մնալ հավատարիմ սեփական ազգի արժեքներին, սկզբունքներին ու շահերին: Իսկ այլ ազգերից վերցնել միայն այն արժեքները որոնք համատեղելի են մեր ազգային արժեքների հետ:

Այդ պատճառով Հայաստանի հանրապետության բնակչության ազգային արժեքային կողմնորոշումն ունի կարևորագույն նշանակություն և դրանով պայմանավորվում է մեր երկրի կայունությունը: Գոյություն ունեն այնպիսի ազգային արժեքներ, որոնց շնորհիվ համախմբվում է ազգը: դրանք են՝ լեզուն, սովորույթները, ավանդույթները, մշակույթը, ծնողները, երեխաները, ընտանիքը, երկրի տարածքը, մարդու անցյալը, ժողովրդի պատմությունը, ազգային մտավորականությունը, ազգային արժանապատվությունը, հայրենիքը և այլն:

Գարեգին Նժդեհի բազմաթիվ պատգամներից մեկը ասում է՝ «ուզու՞մ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդությանը: … Վաղը ազգովին պետք է հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական ամսագիր N4 2012թ. էջ 36:
2. Հ. Ս. Միքայելյան «Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք»:
3. Հ. Ս. Միքայելյան «Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք»:
4. Հ. Ս. Միքայելյան «Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք»:

THE FORMATION OF NATIONAL VALUES IN MIDDLE SCHOOL DURING THE CLASS OF ALGEBRA
Margaryan N. G.

Summary

The presence of National values helps pupils to understand the given material better, to get better idea of reality, develop spatial orientation and increase the interest towards other subjects. Thus we can assure that by doing that we will have society with strong value system and national thinking.

ԿՈԼԵԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԿԱՑՄԱՆ ԲԵՐՈՂ ՔԱՐՏԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մարգարյան Ն.Հ.
Խ. Աբովյանի ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, մագիստրատուրա

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ընդհանուր մեթոդիկաները

Կոլեկտիվ ուսուցման գործընթացը իրականացվում է ուսումնական խմբի անդամների համընդհանուր համագործակցության վրա հիմնված ուսումնական պարապմունքների միջոցով: Այլ կերպ ասած՝ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնակա խնդիրներն ու նպատակները իրագործում է խմբի մյուս անդամների օգնությամբ, միաժամանակ ինքն էլ օգնում է մյուսներին՝ լուծելու իրենց ուսումնական հարցերը:

Գործնականում օգտագործում են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների տարբեր մեթոդիկաներ: Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ ձևը, այսինքն՝ փոփոխական կազմով զույգերով աշխատանք-ը, այս մեթոդիկաներում համակարգաստեղծ, վճռորոշ է: Բայց չի կարելի մեթոդիկան վերածել միայն զույգերով փոխազդեցության ինչ-որ հնարքի: Յուրաքանչյուր մեթոդիկա ընդգրկում է ուսուցման տարբեր կազմակերպչական ձևեր, ալգորիթմներ և զույգերով աշխատելու հնարքներ: Յուրաքանչյուր մեթոդիկա ծառայում է որոշակի ուսումնական խնդրի լուծման: Այստեղ մենք անդրադարձել ենք մաթեմատիկա ուսումնական առարկայի ուսուցմանը, հասկացման բերող քարտերի մեթոդիկայով, կազմակերպելիս:

Հասկացման բերող քարտերի մեթոդիկան

Հասկացման բերող քարտը՝ հարցերի և առաջադրանքների համախումբ է, որը կատարելով աշակերտի մոտ տեղի է ունենում հասկացումը: Այս քարտերի առանձնահատկությունն այն է, որ օգտագործվում են ոչ թե աշակերտների կողմից թեմայի յուրացման մակարդակը ստուգելու համար, այլ այդ թեմայի ըմբռնումն ապահովելու համար:

Հասկացման բերող քարտերը բաղկացած են այնպիսի հարցերից ու առաջադրանքներից, որոնք աշակերտին հանգեցնում են թեմայի ըմբռմանը: Պատասխանելով հարցերին և կատարելով առաջադրանքները՝ աշակերտը ճիշտ է ընկալում իր թեման: Այլ խոսքով՝ հասկացման բերող քարտերի միջոցով կազմակերպվում է հասկացման գործընթացը և այսպես կառավարվում է աշակերտի մտածողությունը: Սրանից, մասնավորապես, հետևում է, որ հարցերն ու առաջադրանքները պիտի լինեն այնպիսին, որ աշակերտը կարողանա դրանք կատարել ոչ թե թեման ըմբռնելուց հետո, այլ հակառակը՝ առաջադրանքների կատարման գործընթացը և պատասխանները պիտի հանգեցնեն թեմայի ըմբռնմանը [2]:

<Բազմանկյան անկյունների գումարը> թեմայով հասկացման բերող քարտի օրինակ.

Թեորեմ. <Ուռուցիկ բազմանկյան n- անկյան անկյունների գումարը (n-2)•180° է>:[3]

1. Գծենք անկյուն:
2. Գծենք ուռուցիկ բազմանկյուն:
3. Գծենք վեցանկյուն բազմանկյուն:
4. Որո՞նք են ուռուցիկ վեցանկյան գագաթները:
5. Որո՞նք են ուռուցիկ վեցանկյան անկյունները:
6. Գտնել n-2, եթե n=6:
7. Ուռուցիկ բազմանկյան անկյունների քանակը՝ n=6, ինչի՞ է հավասար n-2:
8. Ինչի՞ է հավասար (n-2)•180°,եթե n=6:
9. Գտնել n-2, եթե n=3:

10. Ուռուցիկ բազմանկյան անկյունների քանակը՝ n=3, ինչի՞ է հավասար n-3

11. n=3, ինչի՞ է հավասար (n-2)•180°:

12. Կարդալ թեորեմը:

13. Ինչի՞ է հավասար հնգանկյան անկյունների քանակը:

14. Եթե n=5, ինչի՞ է հավասար n-2:

15. Հնգանկյուն ուռուցիկ բազմանկյան անկյունների քանակը՝ n=5:

16. Ինչի՞ է հավասար (n-2)•180°:

17. Կարդալ թեորեմը:

18. Ինչի՞ է հավասար հնգանկյան անկյունների գումարը:

19. Ուռուցիկ յոթանկյուն բազմանկյան անկյունների քանակը ինչի՞ է հավասար:

20. Ինչի՞ է հավասար ուռուցիկ յոթանկյուն բազմանկյան անկյունների գումարը:

21. Ուռուցիկ բազմանկյան անկյունների գումարը (3-2)•180° է, քանի՞ անկյուն ունի բազմանկյունը:

22. Ուռուցիկ բազմանկյան անկյունների գումարը (6-2)•180° է, քանի՞ անկյուն ունի բազմանկյունը:

23. Որքա՞ն է ուռուցիկ բազմանկյան անկյունների գումարը, եթե անկյունների քանակը n է:

Բերված օրինակում առաջին հինգ հարցերը,այն խմբի հարցերն են, որոնք ձևակերպված են այնպես, որպեսզի ստուգվի անցած նյութը, և մյուս կողմից էլ աշակերտի ուշադրությունը կենտրոնացվի նոր նյութի վրա:

Հաջորդ խմբում հարցերն և առաջադրանքները աշակերտի ուշադրությունը հրավիրում են տարբեր արտահայտությունների վրա: Դրանք են՝ $(n = 6)$, (6-րդ,7-րդ,8-րդ հարցերում), $(n = 3)$ (9-րդ, 10- րդ,11-րդ հարցերում), n=5 (14-րդ,15-րդ հարցերում), որոնք գագաթի հետ կապված հարցերն են: (n-2) արտահայտությունը (6-րդ, 7-րդ, 10-րդ, 14-րդ, հարցերում), $\ll (n-2) \bullet 180° \gg$, անկյունների գումարի քանակի մասին (8-րդ, 11-րդ, 16-րդ հարցերում): Երրորդ խմբի հարցերը վերաբերում են ուսումնասիրվող նյութի իմաստին, որոնք էլ ապահովում են ուսումնասիրվող նյութի ըմբռնումը (18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ հարցերում):

Հատուկ նշանակություն ունի հարցերի ու առաջադրանքների ներքին կապը: Ոչ մի կետ պատահական չի ընտրվում, օրինակ պատահական չի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի 6 թիվը, որը ցույց է տալիս անկյունների քանակը, այսինքն գործ ունենք վեցանկյուն ուռուցիկ բազմանկյան հետ: Կամ 9-րդ, 10-րդ 11-րդ, կետերի 3 թիվը, այսինքն գործ ունենք եռանկյան հետ: 8-րդ, 11-րդ, 16-րդ կետերի (n-2)•180° արտահայտությունը, որը ցույց է տալիս ուռուցիկ բազմանկյան անկյունների գումարը:

Համահավաք խմբի աշխատանքի կազմակերպումը

Հասկացման բերող քարտերը օգտագործվում են խմբային, անհատական և կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ տարբեր աշակերտների տրվում են տարբեր թեմաներով հասկացման բերող քարտեր: Սկզբում աշակերտը հասկացման բերող քարտով ինքնուրույն ուսումնասիրում է որևէ թեմա, այնուհետև ուսուցիչը նրան ստուգում է:

Հետո կազմվում են զույգեր: Նոր քարտն աշակերտն ուսումնասիրում է զուգընկերոջ օգնությամբ, որն այն գիտի: Այս դեպքում երկրորդ աշակերտը կատարում է ստուգող ուսուցչի դեր: Այնուհետև զուգընկերները փոխում են դերերը՝ երկրորդ աշակերտը ուսումնասիրում է առաջին աշակերտի յուրացրած քարտերից մեկը, իսկ առաջինը կատարում է օգնական ստուգող ուսուցչի դեր: Այնուհետև զուգընկերները փոխում են դերերը՝ երկրորդ աշակերտըուսումնասիրում է առաջին աշակերտի յուրացրած քարտերից մեկը, իսկ առաջինը կատարում է օգնականի և ստուգող ուսուցչի դերը:

Դրանից հետո այդ զուգընկերները բաժանվում են: Նրանցից ամեն մեկը փնտրում է նոր ընկեր նոր թեմաների ուսումնասիրման համար: Եվ այսպես շարունակ, մինչև յուրաքանչյուր աշակերտ կուսումնասիրի բոլոր քարտերը: Այսպիսի աշխատանքը համակարգելու համար անհրաժեշտ է կազմել հաշվառման աղյուսակ՝ հետևյալ ձևով.

Աշակերտներ	Քարտեր			
	1	2	3	4
Աշակերտ 1	+	●	+	
Աշակերտ 1		●	+	
Աշակերտ 1	●	+	+	+
Աշակերտ 1			●	+

Այստեղ (+) նշանով նշված են յուրացված քարտերը, իսկ (●) նշանով՝ որ աշակերտն ուսումնասիրում է այդ քարտը:[2]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտչյան Մ.Ա., Ալեքսանյան Տ.Տ., Ամիրխանյան Ա.Կ., Պողոսյան Ն.Բ., «Պրոգրեսիաներ» Բաժնի ուսումնասիրությունը 9-րդ դասարանում// Երևան 2015; էջ 6-7:
2. Մկրտչյան Մ., Ուսուցման Կոլեկտիվ Եղանակի Իրականացման Մեթոդաբանական, Տեսական և Գործնական հարցերը//Երևան 2001; էջ 112-115:
3. Աթանասյան Լ.Ս., Բուտուզով Վ.Ֆ., Կադոմցև Ս.Բ., Պոզնյակ Է.Հ., Յուդինա Ի.Ի., Երկրաչափություն 8 // Երևան «Զանգակ» 2012:

THE POSSIBILITY OF USING CARDS METHOD WHICH HELPS TO BRING UNDERSTANDING IN THE COLLECTIVE TRAINING DURING TEACHING PROCESS OF MATHEMATICS

Margaryan Sh. H.

Summary

In the 21st century, in parallel with the application of new technologies, it is the shrewdness of teaching practice innovators and creative teachers that give the opportunity to go beyond the classic mode of school and student and, based on collaborative relations, to implement and fulfill the curriculum. The best expression of this is the application of the general methodology during collective learning lessons. By working in accordance the method of collaborative cards leading to understanding teachers have the possibility to conduct teaching with more individual approach.

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մինասյան Ա.Ի.

Խ. Աբովյանի ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Դպրոցական կրթության բովանդակության և կառուցվածքի արդիականացման խնդիրներից մեկը մաթեմատիկական կրթության որակի կատարելագործումն է: Ժամանակակից կրթական հայեցակարգերում ընդգծվում է կրթության բովանդակության մեջ ստոխաստիկական (կոմբինատորիկայի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի միավորումն անվանում են ստոխաստիկա) բաղադրիչի ընդլայնման կարևորությունը: Այդպիսի մոտեցման համար հիմք է ծառայում այն վիթխարի ներուժը, որ ունի ստոխաստիկան՝ որպես ճանաչողական և կիրառական լայն գործառույթներ ունեցող գիտության:

Ներկայումս հավանականային-վիճակագրական պատկերացումները դարձել են աշխարհի պատկերի համընդանուր բնութագիրը, առանց որոնց անհնար է բնական և հասարակական գիտությունների ընկալումը ժամանակակից մակարդակում: Ստոխաստիկական համապատասխան գիտելիքներն ու պատկերացումներն անհրաժեշտ են ժամանակակից մարդուն կյանքի տարբեր ոլորտներում և իրավիճակներում:

Դիմելով ընթերցողների լայն շրջանակին՝ Բ.Վ. Գնեդենկոն գրել է. «Վաղուց արդեն հասունացել է և չի հանդուրժում հետաձգումներ մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հավանականային-վիճակագրական գծի ներառման հարցը: Խիստ դետերմինիզմի օրենքները, որոնց ուսուցմանն է ամբողջովին ուղղված մեր դպրոցական կրթությունը, միայն միակողմանի է բացահայտում շրջակա աշխարհի էությունը: Իրականության բազմաթիվ երևույթների պատահական բնույթը մեր դպրոցականների ուշադրությունից դուրս է մնում: Դրա արդյունքում, բազմաթիվ բնական և հասարակական գործընթացների բնույթի մասին նրանց պատկերացումները կրում են միակողմանի բնույթ և չեն համապատասխանում ժամանակակից գիտությանը» [2]:

Չնայած, որ զարգացած երկրներում ստոխաստիկայի տարրերը իրենց կայուն տեղն են գրավել դպրոցական ծրագրերում՝ սկսած անցյալ դարի կեսերից (մաթեմատիկայի ծրագրերի ընդհանուր բովանդակության 10-30%-ը)՝ ՀՀ դպրոցական պրակտիկայում ստոխաստիկայի տարրերը մաթեմատիկայի դպրոցական ծրագրերում որոշակի համամասնությամբ ներառվեցին միայն վերջին տարիներին: Սակայն այդ ներառումն իր հետ բերեց օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների համար: Կարելի է ասել, որ այդ ներառումը եղավ միայն անվանապես: Նման դիրքորոշման հիմնական պատճառը նրա հարաբերական նորույթն է ավանդական մաթեմատիկական կրթության պրակտիկայում, դասավանդման մեթոդիկայի ավանդույթի բացակայությունը, այն կիրառական այլ ոչ թէ զուտ մաթեմատիկական կողմից ներկայացնելու ուսուցիչների պատրաստվածության բացակայությունը:

Մի շարք հեղինակների հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ստոխաստիկական հիմնական հասկացությունները, ինչպես «միջին» մարդու, այնպես էլ տարբեր ոլորտների մասնագետների ընկալման ու գիտակցման համար առավել բարդ են, քան ընդհանուր ավանդական մաթեմատիկական կրթության մեջ մտնող հիմնական հասկացությունները, որ նույնիսկ մաթեմատիկայի այլ բաժինների լավ իմացությունը չի ապահովում հավանականային մտածողության զարգացումը [1]:

Պատահական երևույթների օրինաչափությունների ուսուցումը ուսուցիչներից պահանջում է առանձնահատուկ մեթոդիկայի տիրապետում՝ ուղղված ոչ դետերմինացված պատկերացումների ձևավորմանը և հատուկ տիպի մտածողության զարգացմանը:

Վերոհիշյալ հարցադրումների տեսանկյուններից հատուկ նշանակություն է ստանում կրթական ոլորտում ստոխաստիկայի դասավանդման հիմնախնդիրը: Պահանջվում են ուսումնական գործընթացի կառուցման, ստոխաստիկայի ուսուցման բարձր արդյունավետություն ապահովող նորովի և առանձնահատուկ մոտեցումներ, որոնք ստոխաստիկական գիծը հասանելի կդարձնեն բոլոր աշակերտների համար («մաթեմատիկան բոլորի համար» հայեցակարգի պայմաններում դա հատկապես կարևոր է): Կապահովեն աշակերտների մոտ մեզ շրջապատող իրականության երևույթների ստոխաստիկական բնույթի մասին պատկերացումների ձևավորումը, զարգացումն ու համակարգումը:

Այդ հարցում առանձնահատուկ դեր ունի ստոխաստիկայի տարրերի դասավանդման մեթոդական առանձնահատկությունների բացահայտումն ու հաշվառումը:

Ստոխաստիկական գծի առանձնահատկություններից մեկը դրա հասկացությունների և կառույցների սերտ կապն է շրջապատող աշխարհի հետ: Ստոխաստիկայի տարրերը դասավանդելիս՝ անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել այս գիտության կիրառական բնույթը: Այն միտված է հարստացնելու մաթեմատիկայի դպրոցական դասընթացի գործնական ուղղվածությունը և ծառայելու որպես մաթեմատիկական գիտելիքների ակտիվ օգտագործման ու գործնական կիրառության դաշտ:

Վերջինիս սոցիալական և գործնական նշանակությունը կարող է հանդես գալ այն դեպքերում, երբ ցույց տրվի ստոխաստիկական գիտելիքների անհրաժեշտությունն այնպիսի իրավիճակներում, որոնք մոտ կլինեն սովորողների կյանքի փորձին: Այդ իրավիճակների բովանդակությունը կարող է վերաբերել ցանկացած ժամանակակից երևույթի. արվեստի ու արտադրության, գիտության ու տեխնիկայի նորագույն ձեռքբերումներին: Դա թույլ կտա մի կողմից հաշվի առնել սովորողների հետաքրքրությունները, ինչը կնպաստի ստոխաստիկայի նկատմամբ վերաբերմունքի բարելավմանը, իսկ մյուս կողմից կընդլայնի ձեռք բերած գիտելիքները կիրառելու հնարավորությունները: Սովորողների կողմից դասընթացի կիրառական կողմի ըմբռնումը նպաստում է դրա ուսուցման շարժառիթի բարձրացմանը:

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի այս գիծը լայնամասշտաբ կապեր ունի դպրոցական այլ դասընթացների հետ: Միջառարկայական կապերի ապահովումը մեծ հնարավորություններ է ստեղծում ցույց տալու համար մաթեմատիկայի նշանակությունը կիրառական խնդիրների լուծման մեջ:

Ավանդական մաթեմատիկայի հետ նրա համաձայնեցմանը խանգարող հիմնական խնդիրներից մեկը ներառարկայական կապերի ոչ բավարար չափով զարգացումն է: Ստոխաստիկական հասկացությունների և օրենքների կիրառումը նպաստում է մաթեմատիկայի ավանդական թեմաների, ուսուցանվող նյութի ամրապնդմանը: Հարկ է նշել, որ վիճակագրության ուսուցման գործընթացում ներգրավելով ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական բնույթի իրական վիճակագրական տվյալներ՝ լայն հնարավորություններ են ստեղծվում միջառարկայական կապերի ապահովման համար, ընդ որում, նյութերը և խնդիրները պետք է համաձայնեցնել կենսաբանության, ֆիզիկայի, երկրաչափության, հումանիտար գիտությունների դասընթացների հետ:

Դասընթացի շրջանակներում սովորողներին ցույց տալով, որ մաթեմատիկան միասնական է՝ անհրաժեշտ է վերացնել ավանդական մաթեմատիկայում ստոխաստիկայի «օտարականի» կարգավիճակը: Մաթեմատիկայի դասընթացում ստոխաստիկական գիծը ներկայացնելով ոչ թե մեկուսի, այլ օրգանապես ինտեգրելով ընդհանուր դասընթացին՝ կապահովենք մաթեմատիկայի այլ բաժիններից ստոխաստիկայի արհեստական մեկուսացման հաղթահարումը:

Այս գիտության ճանաչման ամենակարճ և արդյունավետ ճանապարհը տարաբընույթ իրավիճակների դիտարկումն է: Դասավանդման գործընթացն ամբողջությամբ կառուցելով կյանքի տարբեր իրավիճակներ նկարագրող նյութի հիման վրա՝ ապահովում ենք սովորողների առօրյա կյանքում մաթեմատիկայի նշանակության գիտակցումը: Դրա համար ուսուցիչը սովորեցնում է գտնել հավանականությունը՝ պատահական փորձերի անցկացման օգնությամբ: Համապատասխան հարցերի դասավանդումն իրականացվում է հետազոտության տեսքով: Երեխան փոքր տարիքից կարող է պատասխանել իրեն շրջապատող աշխարհի մասին իր մոտ ծագած հարցերին՝ հավաքելով և վերլուծելով տեղեկատվությունը: Ստոխաստիկայի մեթոդներն ու օբյեկտները կարող են ճիշտ ընկալվել, գիտակցված ուսումնասիրվել, եթե դրանք սովորողներին ներկայացվեն ոչ թե որպես պատրաստի արդյունք, այլ որպես ձևավորման գործընթաց (սովորողները պետք է մասնակցեն գիտելիքների բացահայտման գործընթացին):

Ողջ ուսուցման ընթացքում պահանջված են դառնում ուսուցման տարբեր մեթոդների և հնարների, ուսումնական գործունեության տարբեր տեսակների համադրումը, նոր մեթոդական-տեխնոլոգիական ապահովվածության օգտագործումը: Մասնավորաբար, աշակերտների տարիքային հետաքրքրություններին համապատասխան ուսուցման ինքնատիպ ձևերը, ինտերակտիվ մեթոդները, դիդակտիկ խաղերն ու իրական տվյալներով էքսպերիմենտները, այդ թվում նաև նպատակային գործունեությանը միտված կենդանի դիտարկումները, իրական բովանդակությամբ, ինչպես նաև միջառարկայական կապեր իրականացնող գործնական ու կիրառական խնդիրները:

Նոր գծի առանձնահատկությունների թվին կարելի է դասել նաև այն, որ նրանում առկա բազմաթիվ փորձարկումների և փաստարկների հետ մեկտեղ քիչ են բանաձևերի քանակը, բացակայում են խրթին հաշվարկները, ինչը լայն շրջանակ է բացում աշակերտների ստեղծագործական գործունեության համար:

Այսպիսով, ստոխաստիկական նյութի առանձնահատկություններից ելնելով՝ պահանջվում են հանրակրթական դպրոցներում ստոխաստիկայի տարրերի դասավանդման նորովի և առանձնահատուկ մոտեցումներ, որոնք հնարավորություն կընձեռեն աշակերտների մոտ զարգացնել այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք հիմք կհանդիսանան ոչ միայն ստոխաստիկայի, այլև մաթեմատիկական մյուս տեսությունները խորությամբ ընկալելու և հիմնավոր ուսումնասիրելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бунимович Е.А. Вероятностно-статистическая линия в базовом школьном курсе математики/ Математика в школе// -2002.-№4.-С.52- 58
2. Гнеденко Б.В. Политехнические аспекты преподавания математики в средней школе / Б.В. Гнеденко // На путях обновления школьного курса математики. – М., 1978:

SPECIFICS TO TEACH THE ELEMENTS OF THE THEORY OF PROBABILITY AND MATHEMATICAL STATISTICS IN GENERAL EDUCATION SCHOOLS

Minasyan A. I.

Summary

The article discusses the problem of the teaching the elements of probability theory and mathematical statistics in general education schools. Special attention was paid to the identification and consideration of methodological features of teaching stochastic component in the school course of mathematics. Specific recommendations were made for the teachers, teaching a course in probability theory and mathematical statistics.

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՐԺԵՔԱՀԵՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միքայելյան Հ.Ա.

Մ. գ. դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Հիմնախնդիրը: Ֆուտբոլը մարզական այն ոլորտներից է, որ լավագույն ձևով ցույց է տալիս այս աշխարհի հզոր երկրների էքսպանսիան թույլերի նկատմամբ: Իսկապես, եվրոպական ֆուտբոլային հզոր երկրները ողջ աշխարհից տանում են լավագույն խաղացողներին՝ վճարելով հսկայական գումարներ: Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի ավագ Հենրիխ Մխիթարյանի տրանսվերի արժեքը, օրինակ, 2016-ին կազմում էր 42 միլիոն եվրո: Տնտեսության, գիտության, բժշկության և այլ բնագավառներում մասնագետների տրանսվերային արժեքներ գոյություն չունեն: Մինչդեռ հեղափոխությունների, արդիականացման, գլոբալիզացիայի և այլ ուղիներով այս աշխարհի հզորները թույլ ու աղքատ երկրներից տանում են մարդկային ներուժը՝ ներկա և ապագա լավագույն մասնագետներին՝ ստանալով տնտեսական հսկայական օգուտներ և զարգացման մեծ հեռանկարներ: Բավական է ասել, որ հանրակրթական դպրոցի մեկ շրջանավարտի վրա ԱՄՆ-ը ծախսում է մոտ 100 հազար դոլար: Այսինքն՝ երբ նման մեկ անձ ունեցող ընտանիքը ներգաղթում է ԱՄՆ, այդ երկրին միանվագ տալիս է 100 հազար դոլարի օգուտ: Մենք էլ զարմանում ենք, որ նույն ընտանիքի երկու թոշակառուներին այդ երկիրը հատկացնում է տարեկան մի 20 հազար դոլար: Իսկ ինչքա՞ն օգուտ է ստանում երկիրը ապագայում այդ նույն աշակերտից, որը կարող է և համալսարանի շրջանավարտ լինել և որպես մասնագետ շատ ավելի մեծ օգուտ տալ, և ինչպիսի՞ վնասներ է կրում, օրինակ, Հայաստանի Հանրապետությունը, որն իր սուղ միջոցներից մեկ շրջանավարտ հատկացնելով 2-3 հազար դոլար, դրանցից լավագույններին անվճար տալիս է ԱՄՆ-ին, Ռուսաստանին, Գերմանիային, ...: Կա՞ հաշվարկ, թե, օրինակ, միայն ԱՄՆ համալսարաններում մեր երկրի քանի շրջանավարտ է աշխատում: Մի անգամ իմ նախկին ուսանողներից մեկն ասաց, որ իր ժամանակի համալսարանական ֆիզիկոս շրջանավարտներից մոտ քսանը ամերիկյան համալսարանների պրոֆեսորներ են: Այո, ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, ծրագրավորողներ, կարևորագույն այլ մասնագիտություններ ստացած մեր հրաշք երկտասարդները, որ պետք է հզորացնեին մեր երկիրը, գնում են ծառայելու այլ երկրների…

Հիմա նոր կառավարության ծրագրի կրթության բաժնում նախատեսվում է մաթեմատիկային հատկացվող ժամերի ավելացում: Իսկ ինչու՞: Որպեսզի մեր մաթեմատիկայի ուսուցիչները ռուսական դասագրքերով կամ անգլիական ծրագրերով մաթեմատիկա սովորեցնեն դասարանի՝ այդ առարկայից ընդունակ մի քանի աշակերտի, որոնք մեծ հավանականությամբ դառնալու են օտարերկրյա համալսարանների ուսանողներ կամ լքելու են մեր երկիրը մեր համալսարաններն ավարտելուց հետո: Իսկ դասարանի «խլամը՞»: Այդ «խլամը» կազմող աշակերտներին մաթեմը ոչ միայն օգուտ չի տալիս: Ավելին, նման աշակերտի մոտ ձևավորվում է թերաժեքության բարդույթ իր մտավոր կարողությունների սահմանափակության վերաբերյալ /որովհետև հանրության մեջ կա այն թույր կարծիքը, թե խելոք կարող են լինել միայն մաթեմի խնդիրներ լուծող աշակերտները/ և մաթեմից հիշվող մեկ-երկու կցկտուր տեղեկություններն ու փաստերը հետագայումշատ արագ մոռացվում են, իսկ հոգեբանական այդ արատը մնում է ամբողջ կյանքում: Ո՞րն է ելքը:

Մաթեմատիկական կրթությունը հումանիստական կամ արժեքահեն հարացույցի պայմաններում: Ժամանակակից կրթական երկու հիմնական հարացույցերից մեկը հենվում է կրթական ավտորիտար մոտեցումների վրա, որտեղ առաջին պլան է մղվում գիտելիքահեն կրթությունը: Այս համակարգում աշակերտը կրթության օբյեկտ է, ապագա քաղաքացի, որին անհրաժեշտ են գիտելիքներ և կարողություններ առաջին հերթին պետության առջև ծառացած խնդիրները լուծելու համար /իրականում աղքատ երկրում նման հարացույցի պայմաններում սովորած աշակերտը լուծում է այլ երկրի առջև ծագած խնդիրներ/: Կրթական հումանիստական հարացույցում աշակերտը դիտվում է որպես սուբյեկտ, մարդ, որն ունի իր ներաշխարհը, և կրթության նպատակը այդ ներաշխարհի ձևավորումն է այն հաշվով, որ մարդը, աշակերտը երջանիկ ապրի իր կյանքի լավագույն՝ մանկության և պատանեկության տարիները, կարողանա ներկա և ապագա կյանքում լավագույնս կողմնորոշվել իր առջև ծագած խնդիրների մեջ, լուծել դրանք: Այստեղ առաջնայինը արժեքներն են՝ արժեքային մոտեցումը, սովորողի արժեհաակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորումը:

Հումանիստական հարացույցի կամ արժեքային մոտեցման կարևոր սկզբունքներից մեկը կրթությունը նպատակաուղղել դեպի մարդը (լատիներեն humanus նշանակում է մարդկային), նրա պահանջմունքները: Իսկ ինչպիսի՞ պահանջմունքներ ունի մարդը, ինչո՞վ է զբաղվում նա իր մասնագիտական գործունեությունից դուրս: Արդյո՞ք հանրակրթությունը ապահովում է կամ տալիս է այն հիմքերը, որոնք հնարավորություն կտան մարդուն ապրել լիարժեք կյանքով: Այս հարցերի պատասխանը ստանալու համար բավական է նշել, որ մարդու «ազատ ժամանակը» լցվում է ոչ թե դպրոցում ուսումնասիրվող ուսումնական հիմնական առարկաների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի կամ այլ ուսումնական առարկաների ուսուցման ընթացքում սերտած նյութի, դրանց վերաբերյալ գիտելիքների շուրջ, այլ արվեստով՝ կինո, թատրոն, երաժշտություն և այլն: Իսկ ինչպիսի՞ նախապատրաստություն է ստացել մարդը հանրակրթությունում արվեստական իր այդ կյանքի համար. ասենք՝ ի՞նչ երաժշտություն պետք է լսի նա, ինչպե՞ս զանազանի երաժշտական տարբեր կատարումները: Սրանք կարևորագույն հարցեր են, որոնք դուրս են մնում հանրակրթության ուշադրությունից: Մենք ոժգոհում ենք ռաբիզը նախընտրող մարդուց, բայց մոռանում ենք, որ նրա գեղագիտական ճաշակը ձևավորելու համար որևէ քայլ չենք իրականացրել: Նույնը վերաբերում է նաև բարոյական ոլորտին. մարդու բարոյական մոտեցումները, մարդկային փոխհարաբերություններում ամենուրեք դրսևորվող բարոյական արժեքները և նորմերը դարձյալ անտեսված են հանրակրթության կողմից:

Ահա կրթության հումանիզացիան, արժեքահեն կրթությունը կոչված է կարգավորելու հանրակրթական ուսումնական բնագավառների, առարկաների չափաբաժինը, գիտության և արվեստի, գիտելիքի և արժեքի փոխհարաբերությունը, վերացնելու գիտության, գիտելիքի անվերապահ գերակայությունը արվեստի, գեղեցիկի, բարու և ընդհանրապես արժեքների հանդեպ:

Եվ եթե հանրակրթության մեջ արվեստը, արժեքները գրավեն իրենց արժանի տեղը, եթե հանրակրթության ուսումնական պլաններում արվեստի բնագավառը չավարտվի միջին դպրոցի ցածր դասարաններում կցկտուր ներկայությամբ, ապա և մաթեմատիկան կարող է նորովի ներկայանալ արվեստի զանազան բնագավառներում իր բազմապիսի կիրառություններով, գեղագիտական, բարոյական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորման մեծ ներուժով:

Հումանիզացիան մաթեմատիկական կրթության պարագայում իրականացվում է ուսուցման անհատականացման և տարբերակման սկզբունքների կիրառմամբ, զանազան տիպի դպրոցներում և դասարաններում մաթեմատիկայի շերտավորված ուսուցմամբ, ուսուցման նպատակների, բովանդակության, ձևերի, մեթոդների և միջոցների արդիականացմամբ: Կարևորվում են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, արժեքները, առանձնապես՝ գեղագիտական արժեքները, որոնք դառնում են մաթեմատիկայի ուսուցման նպատակ: Մաթեմատիկական կրթությունը դիտվում է որպես բարիք, որի իրավունքը ունի յուրաքանչյուր մարդկային էակ (տես [3]):

Կրթական հումանիստական հարացույցում պակաս կարևոր չէ կրթության մեջ ազատության սկզբունքի պահպանումը (տես [2]): Այլընտրանքային ուսումնական առարկաները, ծրագրերը, դասագրքերը պետք է ելնեն աշակերտի նախասիրություններից, հնարավորություն տան ուսուցչին՝ իրականացնելու իր կրթական մոտեցումները, ընտրության իրավունքը, միաժամանակ ստեղծեն կրթության զարգացման համար առողջ մրցակցային միջավայր: Սակայն ավտորիտար մոտեցումը դարձյալ թույլ չի տալիս իրականացնելու այս մոտեցումները: Գաղտնիք չէ, որ մաթեմատիկայի ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կենտրոնացնում է մաթեմատիկական հակումներ ունեցող սովորողների վրա, և սովորողների ճնշող մեծամասնությունը դուրս է մնում այդ գործընթացից, իսկ ավագ դպրոցում հումանիտար հոսքերի աշակերտները, ըստ էության, անտեսում են մաթեմատիկա առարկան: Այս երևույթների վնասակար հետևանքները արդարության բարոյական արժեքի ձևավորման տեսակետից և երկրի ու հասարակության համար, մենք վերլուծել ենք [1] աշխատանքում: Սխալի արմատները ուսուցիչների և ծնողների կողմից մաթեմատիկայի ուսուցման նպատակների սխալ պատկերացումն է այն մասին, որ մաթեմատիկայի դասավանդման նպատակը մաթեմատիկա սովորեցնելն է: Իսկ հաղթահարման հիմնական ճանապարհը մաթեմատիկայի ուսուցման գործընթացը դեպի արժեքների ձևավորումը նպատակաուղղելն է:

Կրթության հումանիստական հարացույցում ենթադրվում է մաթեմատիկական կրթության հումանիտարացումը՝ հասարակական կյանքում նրա դերի վերաիմաստավորումը, վերաարժևորումը, նրանում մարդասիրական բաղադրիչի մեծացումը: Հանրահայտ է մաթեմատիկայի դերը այլ գիտությունների, տեխնիկայի, արտադրության, կառավարման, հոգևոր մշակույթի մեջ, ինչը պետք է իր արտահայտությունը գտնի նրա ուսուցման հումանիստական մոտեցումներում: Միևնույն ժամանակ, դրանցում առանցքային նշանակություն է ստանում ոչ միայն մտածողության զարգացման գործում մաթեմատիկական կրթության դերի, այլև հոգեկան այլ երևույթների, բարոյական, գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորման, հումանիստական աշխարհայացքի ձևավորման գործում մաթեմատիկայի կրթական ներուժի բացահայտումը:

Հումանիստական կրթության իրականացման ճանապարհին անհրաժեշտ է մաթեմատիկայի դասընթացը զերծ պահել տեխնիկավարժանքային բնույթի բարդ առաջադրանքներից, հաշվարկներից և ապացուցումներից, պետք է այն նպատակաուղղել դեպի կիրառություն, գտնել հումանիտար բնագավառի ուսումնական առարկաների հետ առնչությունների դրսևորումներ, օգտագործել արվեստի զանազան բնագավառներում մաթեմատիկայի բազմապիսի կիրառությունները: Անհրաժեշտ է արմատապես փոխել հումանիտար հոսքերում մաթեմատիկական կրթության բովանդակությունը, մեթոդները, միջոցները՝ տալով դրանց հումանիտար ուսումնական առարկաներին հատուկ երանգ:

Արժեքահեն կրթության իրականացման գործընթացում հատուկ նշանակություն է ստանում մաթեմատիկայի կապը գեղեցիկի հետ: Այն հնարավորություն է տալիս տեսնելու առարկաների և երևույթների համաչափությունը, գեղեցիկ համեմատությունները, ռիթմը և ներդաշնակությունը, ինչը լայնորեն արտահայտվում է նաև մտածողության մաթեմատիկական ձևերի մեջ: Այդ պատճառով մաթեմատիկայի միջոցով իրականացվող հումանիստական կրթությունը նպատակաուղղվում և մեծապես նպաստում է սովորողի գեղագիտական ճաշակի, հույզերի, զգացմունքների և գեղագիտական այլ որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Արժեքահեն կրթության պայմաններում ուսուցումը /այդ թվում նաև մաթեմատիկայի ուսուցումը/ չի կենտրոնանում դասարանի մի քանի աշակերտների վրա, այլ ներառում է ***բոլոր*** աշակերտներին: Հարկ է նկատել, որ պետությունը նույնպես հանրակրթությանը հատկացվող ծախսերը կատարում է ելնելով աշակերտների թվից: Հետևաբար, աշակերտների մի մասին կրթությունից դուրս թողնող ուսուցիչները բացի արդարության բարոյական սկզբունքից /այդ մասին տես [1]/, ուղղակիորեն խախտում են նաև պետական պահանջը:

Այսպիսով, կրթական ավտորիտար սկզբունքներին հետևող մաթեմատիկայի մեր ուսուցիչները, չկատարելով իրենց պետական և բարոյական պարտավորությունները, աշակերտության զգալի հատվածին դուրս են թողնում կրթական գործընթացից՝ կրթությանը հատկացվող սուղ միջոցները նպատակաուղղելով այլ երկրների համար որակյալ կադրերի պատրաստմանը: Այս արատավոր երևույթի դեմ կարելի է առնել միայն մաթեմատիկայի դասավանդումը իրականացնելով հումանիստական կամ արժեքահեն կրթության սկզբունքներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը, Էդիթ պրինտ, 2011, 186 էջ:
2. Միքայելյան Հ. Ս., Գեղեցիկը, մաթեմատիկան և կրթությունը, հ. 2, Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթական ներուժը, Երևան, Էդիտ պրինտ, 2015, 440 էջ:
3. Тихомиров В.М., О значении математики и целей математического образования //Математика в школе, 2007, №4.

SOME CONSIDERATIONS ABOUT MATHEMATICAL EDUCATION FOCUSED ON VALUE

Mikaelian H. S.

Summary

In this paper, we indicate that in terms of political freedoms following the principles of an authoritarian educational paradigm and violation of humanitarian principles, values, educational approaches to teaching mathematics seriously, leads to negative consequences for poor countries, what is the RA.

ՀԱՆՐԱՀԱՇՎԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մկրտչյան Ա.Տ.

մ. գ. թ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ՀՊՄՀ-ի մաթեմատիկա մասնագիտությամբ սովորողների կողմից բարձրագույն մաթեմատիկայի տարբեր բաժինների յուրացման ընթացքում նկատվում են դժվարություններ: Մասնավորաբար բավականին դժվարություններ են առաջանում բարձրագույն հանրահաշվի յուրացման ընթացքում: Դժվարությամբ են հաղթահարվում այդ դասընթացի շրջանակներում ներկայացվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների անգամ նվազագույն և միջին պահանջները: Նկատվում է դպրոցական հանրահաշվի և բարձրագույն հանրահաշվի դասընթացների բովանդակությունների միջև կապերի աստիճանական թուլացում:

Այդ ամենի մեջ կարելի է տեսնել մի շարք պատճառներ: Փորձենք անդրադառնալ մի քանիսին:

1. Առաջին պատճառը կարող է հանդիսանալ ավագ դպրոցի հոսքային ուսուցումը: Ուսումնասիրելով ավագ դպրոցի մաթեմատիկայի առարկայական չափորոշիչն ու ծրագիրը, տեսնում ենք, որ մաթեմատիկայի ծրագրային և ժամային բաշխումն ըստ հոսքերի կատարվում է հետևյալ կերպ. տարբերակված հանրակրթական ուղղվածության համար մաթեմատիկայից շաբաթական հատկացվում է 3 ժամ (տարեկան ժամաքանակի բաշխումն ըստ առարկաների կատարվում է հետևյալ կերպ. հարահաշիվ և մաթանալիզ 61 ժամ, երկրաչափություն՝ 41 ժամ): Իսկ խորացված ուսուցման ուղղվածության համար շաբաթական հատկացվում է 7(8) ժամ (տարեկան ժամաքանակը՝ հանրահաշիվ և մաթանալիզից նախատեսվում է 136(170) ժամ, երկրաչափությունից՝ 102 ժամ):

Այս տարբերությունը մեծ է ու չի կարող չանդրադառնալ այն փաստի վրա, որ առաջին կուրսում ընդունված սովորողների մոտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակների բավականին մեծ տարբերություն կնկատվի:

2. Սովորողների գիտելիքների մակարդակների տարբերություն է նկատվում նաև այն պատճառով, որ միևնույն կուրսում սովորում են նաև արտերկրի ուսանողներ, մասնավորաբար ուսանողներ Ջավախքից: Իսկ ուսումնասիրելով Վրաստանի հանրակարթական դպրոցի մաթեմատիկայի առարկայական չափորոշիչները՝ նկատում ենք, որ էական տարբերություններ են նկատվում ՀՀ-ի և Վրաստանի մաթեմատիկայի առարկայական չափորոշիչների միջև թե՛ հանրահաշվական նյութի բովանդակային, թե՛ կառուցվածքային առումով: Մասնավորաբար այնտեղ անհամեմատ շատ են տրամաբանության տարրերին վերաբերող գիծը, սակայն հանրահաշվական նյութի բովանդակությունը զիջում է ՀՀ հանրակարթական դպրոցի հանրահաշվական նյութի բավանդակությանը:

3. Հաջորդ պատճառը կարելի է տեսնել ընդունելության քննությունների անցկացման միասնական ձևի մեջ: Երբ սովորողները, կամա թե ակամա, ստիպված են դպրոցական վերջին տարիները նվիրել այդ քննություններին պատրաստվելուն, և բաց են թողնում հետագայում բուհում սովորելու համար անհրաժեշտ գիտելիքների ձեռք բերումը: Իսկ քննությունների պատրաստման վարժողական բնույթը նպաստում է սովորողների լեզվատրամաբանական մտածողությունը ոչ պատշաճ զարգացմանը: Մինչդեռ ըստ հանրակրթության պետական չափորոշչի *ավագ դպրոցի ծրագրի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝ 1) սովորողների կողմից որպես գիտության համընդհանուր լեզու և երևույթների ու պրոցեսների մոդելավորման միջոց մաթեմատիկայի դերի, հասարակության զարգացման մեջ մաթեմատիկայի պատմական դերի և նշանակության արժևորմանը. 2) սովորողների տրամաբանական մտածողության և տարածական պատկերացման զարգացմանը, ալգորիթմական և քննական մտածողության ձևավորմանը, տարաբնույթ խնդիրներ մոդելավորելու և վերլուծություններ կատարելու, տվյալների հետ աշխատելու, հետագա կրթության և մասնագիտական գործունեության համար կարողությունների զարգացմանը:* Սակայն տվյալ պահանջների իրականացումը բնականաբար լիարժեք չի կատարվում՝ ընդունելության քննություններում հաջողություններ գրանցելու պատճառով:

4. Հաջորդ պատճառներից կարելի է առանձնացնել այն, որ ժամանակի ընթացքում մոռացության են մատնվում միջին դպրոցի և ավագ դպրոցի որոշ գիտելիքներ, որոնց իմացությունն անհրաժեշտ է բարձրագույն հանրահաշվի դասընթացի յուրացման համար:

5. Բուհում սովորողների մոտ քննությունների ընթացքի դժվարությունների պատճառներից մեկը պայմանավորված է նաև մի հանգամանքով, որ մինչ այդ սովորողները քննություն հանձնելիս և դասի ընթացքում սահմանումները, թեորեմները ձևակերպել են միայն բանավոր կերպով, թեորեմների ապացույցները կատարել են ուսուցչի օգնությամբ: Քննություններին և ստուգողական գրավորներին լուծել են վարժություններ և խնդիրներ: Իսկ համալսարանում յուրաքայչյուր առարկայից, այդ թվում և բարձրագույն հանրահաշվից գրում են երկու գրավոր մի-

ջանկյալ քննություններ, ստիպված են շատ արագ գրել բարդ, իրենց ծանոթ հանրահաշվական նյութից բովանդակությամբ բավականին հեռու, հանրահաշվական անծանոթ թեորեմներ, սահմանումներ: Խորթ է նաև այդ թեորեմների ապացուցման մեթոդները, և ընդհանրապես դժվարանում են ապացուցումներ կատարել:

Առաջացած վիճակի բարելավման նպատակով կառուցվեց հանրահաշվի՝ անսպես կոչված՝ վերականգնողական դասընթաց, որը կոչվում է «Տարրական հանրահաշիվ և մաթեմատիկական ներածություն»: Այդ դասընթացը ուսուցանվում է ՀՊՄՀ-ի մաթեմատիկա մասնագիտության առաջին կուրսի առաջին կիսամյակում: Առաջին կուրսի երկրորդ կիսամյակից նոր միայն նախատեսվում է բարձրագույն հանրահաշվի ուսուցումը: Այդ առարկայի բովանդակության շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել հետևյալ թեմաները, որոնց իմացությունը պարտադիր է բարձրագույն հանրահաշվի ծրագիրը յուրացնելու համար.

Հանրահաշվի լեզուն: Գումարումը հանրահաշվում: Հանումը հանրահաշվում: Բազմապատկումը հանրահավում: Բաժանումը հանրահաշվում: Ամբողջ և կոտորակային ցուցիչով աստիճան: Տրամաբանության հանրահաշիվը: Պատկերների հանրահաշիվը: Մեկ փոփոխականով բազմանդամներ: Քառակուսի եռանդամ: Մի քանի անհայտով գծային հավասարումներ և հավասարումների համակարգեր: Ֆունկցիաներ: Եռանկյունաչափության տարրեր: Աստիճանային, ցուցչային և լոգարիթմական ֆունկցիաներ: Վիճակագրության, միացությունների տեսության և հավանականությունների տեսության տարրեր:

Պետք է նշել, որ գործնական պարապմունքների ժամանակ նշված առարկայի դասավանդման շրջանակներում նախատեսվում է ոչ թե լուծել կոնկրետ հանրահաշվական խնդիրներ (դրանք կուսուցանվեն «Տարրական մաթեմատիկա և խնդիրների լուծման պրակտիկում» առարկայի շրջանակներում), այլ ստուգել սովորողների տեսական գիտելիքները նշված առարկայից, ուսանողների կողմից ինտերակտիվ ուսուցման միջոցով կատարել դասախության ժամանակ հաղորդված տեսական նյութում ընդգրկված թեորեմների ապացույցները: Անչափ կարևոր է ուշադրություն դարձնել սովորողների ապացուցողական, փաստարկման կարողությունների ձևավորմանը, ապացուցման տարբեր մեթոդների տիրապետմանը: Ուսուցիչների տրամաբանական պատրաստվածության մակարդակի բարձրացման խնդրի տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ստանում ուսուցման մեթոդների ընտրության հարցը: Այդ նպատակով հարկավոր է կիրառել ժամանակակից այն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնց կիրառությունը արդյունավետ է սովորողների տրամաբանական և լեզվական կարողությունների խթանման ու զարգացման առումով: Ավելին, այդ մեթոդների հմտորեն գործածության շնորհիվ ուսուցման գործընթացը սովորողների համար կդառնա մատչելի, հետաքրքիր և գրավիչ:

Պետք է կարևորել նաև հանրահաշվական նյութի դեդուկտիվ շարադրանքը, ինչը նույնպես կնպաստի սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

Այսպիսով այս առարկայի նպատակներն են միջին և ավագ դպրոցների հանրահաշվի դասընթացից ստացած գիտելիքների համակարգումը և խորացումը, ապացուցման տարբեր կարողությունների և հմտությունների զարգացումը և նպաստումը ԲՈՒՀ-ում սովորելուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելուն, ապացուցման, փաստարկման, խոսքի կուլտուրայի ձևավորումն ու զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, Դասագիրք հանրակրթ. դպր. 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարանի (բնագիտամաթեմատիկական հոսքի համար), Եր., Տիգրան Մեծ, 2009 թ., 2010 թ., 2011 թ.:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ /www. aniedu.am/:
3. Միքայելյան Հ. Ս., Հանրահաշիվ 7, 8, 9., Դասագիրք հանրակրթ. դպր. 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարանի, Եր., Էդիտ Պրինտ, 2006 թ., 2007 թ., 2008 թ.:
4. Միքայելյան Հ. Ս., Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Եր., Էդիթ Պրինտ, 2003 թ.:

ABOUT SOME PECULIARITIES OF CONSTRUCTING REHABILITATION COURSE OF ALGEBRA

Mkrtchyan A.T.

Summary

In the paper the main reasons, which are prevent the proper appropriation of higher algebra course in the university by learners are discussed. That’s way there is introduced a rehabilitation course, which main goals are: combination and expansion of knowledge from the algebra course in the middle and higher school, formation and development of proof, argumentation, speech culture, promotion of studying in the higher education institutions and doing independent researches.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մ.գ.դ. Մկրտչյան Մ.Ա.

Նախաբան

Մաթեմատիկայի իմաստի ու նշանակության մասին կան բազմաթիվ տարատեսակ պատկերացումներ: Այս հարցով բազմիցս արտահայտվել են ինչպես խոշորագույն մաթեմատիկոսները, այնպես էլ այլ բնագավառի հայտնի ներկայացուցիչները (տես, օրինակ, [1]-[8]): Առանձնացնենք դրանցից որոշ մոտեցումներ, որոնք մեր կարծիքով կարևոր են մաթեմատիկական առարկաների հանրակրթական իմաստի ու նշանակության սահմանման, ինչպես նաև մաթեմատիկական կրթության կազմակերպման հարցերում:

Մաթեմատիկայի էության մասին

Հայտնի մաթեմատիկոս Գ.Գ.Հարդին (Г.Г.Харди) գրում է. «Под *физической реальностью* я понимаю материальный мир дня и ночи, землетрясений, мир, который пытается описать физическая наука. …Для меня, и думаю, для большинства математикож существует другая реальность, которую я буду называть «математической реальностью», и среди математиков и философов нет единого мнения относительно природы математической реальности». ([7],стр.94)

Շատ յուրօրինակ մեկնաբանություն է տալիս հայտնի չեխ մաթեմատիկոս Պ.Վոպենկան (П.Вопенка). «Математика есть преодоление непосредственного горизонта человеческого опыта. Мы используем математику, чтобы выразить мысли предваряющие наше знание, которые часто в дальнейшем нельзя проверить». [8],стр.15)

Պատմականորեն մաթեմատիկան ձևավորվեց, զարգացավ և արդյունքում դրսևորվեց որպես ֆիզիկական աշխարհի մաթեմատիկա: Այդ տեսակետից սոցիալական իրողության ուսումնասիրություններում ու կանխատեսումներում մաթեմատիկական ապարատի օգտագործման փորձերը ոչ միշտ են արդյունավետ: Սակայն առջևում դեռ սպասվում է սոցիալական աշխարհի մաթեմատիկայի կայացման ու դրսևորման երկարատև ու դժվարին գործընթաց: Առայժմ նշմարելի է մաթեմատիկական մտածելակերպի արդյունավետությունը հումանիտար ոլորտի խնդիրների լուծման հարցերում: Այդ երևույթը արդեն շատերն են մատնանշում: Օրինակ, Լ.Ե.Սադովսկին և Ա.Լ.Խադովցկին գրում են. «Оказалось, что не только конкретные математические результаты, но и сам строй математического мышления приносит неоценимую пользу в самых разных областях науки, техники, экономики, всей человеческой деятельности. Наступает качественно новый период развития математики» ([11]).

Իհարկե, այստեղ հատուկ ուսումնասիրությունների կարիք կա բացահայտելու մաթեմատիկական մտածելակերպի առանձնահատկությունները:

Վերջաբան

Մի շարք գործոններ հարկադրում են վերանայելու մաթեմատիկական կրթության բովանդակության կառուցվածքը:

Նախ, գնալով ավելի ու ավելի է հասարակությունը իր ապագան կառուցում նպատակաուղղված ու հաշվենկատ: Այստեղ իհարկե անհնար է արդյունավետ գործել առանց յուրահատուկ մաթեմատիկական մոտեցման ու մաթեմատիկական միջոցների:

Բացի դա, մաթեմատիկան իր հանրակրթական նշանակությունը ձեռք է բերում ոչ այնքան մաթեմատիկական գիտելիքների, որքան մաթեմատիկական մոտեցման, մաթեմատիկական մեթոդների ու մաթեմատիկական մտածելակերպի շնորհիվ:

Փաստորեն մաթեմատիկական կրթության ներկայիս բովանդակության ու ձևերի պահպանումը ավելի կխոչնդոտի հանրակրթական ծրագրերում մաթեմատիկական առարկաների դերի ու նշանակության ճիշտ ընկալմանը և ավելի կնպաստի աշակերտների կողմից մաթեմատիկական առարկաների նկատմամբ անտարբերության ուժեղացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Клайн М. Математика. Утрата определенности: Пер. с англ. / Под ред., с предисл. и примеч. И. М. Яглома //М., Мир, 1984. – 434 с.
2. Колмогоров А. Н. Математика – наука и профессия // М., Наука. гл. ред. физ.-мат. лит., 1988 г. – 288 с.
3. Коломогоров А. Н. Математика в ее историческом развитии // М.: издательство ЛКИ, 2007. – 224 с.
4. Гнеденко Б. В. Введение в специальность математика // М.: Наука, гл.ред. физ.-мат. лит., 1991 г. – 240 с.
5. Кудрявцев Л. Д. Современная математика и ее преподавание.// М., «Наука», 1980.
6. Арнольд В. И. Математика и математическое образование в современном мире // в кн. Арнольд В. И. “Жесткие” и “мягкие” математические модели. – 3-е изд., стериотип. – М.: МЦНМО, 2011. – 32 с., (стр. 26 – 31).
7. Харди Г. Г. Апология математика: пер. с англ. Изд. 2-е. – М.: Едиториал УРСС, 2005 г. – 128 с.
8. Вопенка П. Математика в альтернативной теории множеств: перевод с английского // М., Мир, 1983 г. – 152 с.
9. Давид Анахт. Сочинения. Сост., пер. с древнеарм., вступительная статья и примечания Аревшатяна // М. «Мысль», 1975 г.
10. Кац М., Улам С. Математика и логика. Ретроспектива и перспективы // Издательство «Мир», Москва, 1971 г. – 252 с.
11. Л. Е. Садовский, А. Л. Садовский: «Математика и спорт»; библиотека «квант», выпуск 44- М. «Наука», 1985.
12. Мкртчян М. А. Проблема реализации общеобразовательных целей учебных предметов // Избранные труды международной научной конференции, 26 – 30 сентября, 20011года, Ереван 2012 г., стр. 48-52.

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐԻ

Բաղոյան Ն.Ա., Մկրտչյան Վ.Ջ.

«Բյուրակն» կրթահամալիր

Սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառումը ժամանակակից մանկավարժության կարևորագույն պահանջներից մեկն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասդասարանային համակարգը սկզբունքորեն թույլ չի տալիս բավարարելու տվյալ պահանջը [2]: Ներկայումս, նորարար մանկավարժները ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով առաջ են քաշում տարբեր գաղափարներ, առաջարկում են ուսուցման կազմակերպման այլընտ-րանքային տարբերակներ: Վերջիններս որոշակիորեն հնարավորություն են ընձեռում հաշվի առնել սովորողների ոչ միայն տարիքային, այլև անհատական առանձնահատկությունները: Ստորև ներկայացնում ենք, թե ինչպես կարելի է կազմակերպել չորրորդ դասարանի մաթեմատիկայի ուսուցման գործընթացը՝ ըստ սովորողների անհատական աշխատանքային պլանների:

Անհատական աշխատանքային պլանը ներառում է աշակերտի՝ առաջիկա շաբաթվա համար նախատեսված կոնկրետ թեմայի կամ բաժնի յուրացման ոչ միայն բովանդակային մասը, այլև աշխատանքային ձևերը: Վերջիններս բխում են Վ. Դյաչենկոյի կողմից մշակված ուսուցման կազմակերպչական չորս հիմնական ձևերից.

1. ուսուցման կազմակերպման անհատական ձև,
2. ուսուցման կազմակերպման զույգային ձև,
3. ուսուցման կազմակերպման խմբային ձև,
4. ուսուցման կազմակերպման կոլեկտիվ ձև: [1,34]

1.  **2.**  **3.**  **4.** 

Աշխատանքային պլանի հիմքում ընկած է Մ.Մկրտչյանի կողմից մշակված թեմաների փոխհաղորդման մեթոդիկայի կիրառման ընթացքում օգտագործվող աղյուսակը: [1,100]

Ստորև ներկայացված է «Բազմանիշ թվեր» բաժնի ուսումնասիրման ընթացքում կիրառվող անհատական աշխատանքային պլանի օրինակ.

Ալբերտ
Բազմանիշ թվեր
17.10.16 թ.-21.10.16 թ.

Աշխատանք ուսուցչի հետ	Անհատական աշխատանք		Զույգային աշխատանք		Բանավոր (հանձնել ուսուցչին)		Փոխվարժանք	Լրացուցիչ անհատական աշխատանք
285	148	432	Տաթև	Նարե	156	319	Քարտ 2	318
			327	150				
286	289	439			336	353	Քարտ 5	351
			334	345				
287	316	354			369	370	Քարտ 7	386

Անհատական աշխատանքային պլանը աշակերտին տրվում է շաբաթվա սկզբում: Քարտի առաջադրանքների կատարման համար նախատեսվում է առավելագույնը մեկ շաբաթ: Աշակերտը հնարավորություն ունի աշխատանքային շաբաթվա ընթացքում ինքնուրույն որոշել նշված առաջադրանքների կատարման հաջորդականությունը: Սակայն, կան առաջադրանքներ, որոնց պետք է անդրադառնալ կոնկրետ աշխատանք անելուց հետո: Օրինակ՝ Ալբերտի պլանում առաջին սյունը վարդագույն է, ինչն աշակերտին հուշում է, որ նա 285,286 և 287 առաջադրանքները կարող է կատարել միայն ուսուցչի հետ հանդիպելուց հետո: Յուրաքանչյուր աշխատանքային պլանում կան լրացուցիչ առաջադրանքներ: Վերջիններս աշակերտը կատարում է այն ժամանակ, երբ մնացած բոլոր առաջադրանքները արված են կամ մնացել են միայն այնպիսիները, որոնք տվյալ պահին կատարել հնարավոր չէ :

Յուրաքանչյուր անհատական աշխատանքային պլան թույլ է տալիս հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները: Այն կազմվում է տվյալ աշակերտի գիտելիքների, հնարավորությունների և կարողությունների հիման վրա: Արդյունքում, միևնույն ուսումնական խմբի անդամները միևնույն ժամանակահատվածում կարող են ուսումնասիրել չորրորդ դասարանի մաթեմատիկա առարկայի տարբեր հատվածներ: Վերջինս կարող է պայմանավորված լինել ոչ միայն աշակերտների առանձնահատկություններով /աշխատանքային արագություն, ընդունակություններ և այլն/, այլև կազմված հնարավոր երթուղիներով: Անհատական աշխատանքային պլաններով ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր առավելություններց մեկը ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ուսումնական նյութի որակյալ յուրացումն է: Աշակերտը չի անցնում հաջորդ փուլ, եթե լիարժեք չի յուրացրել տվյալ նյութը: Նշենք, որ գիտելիքների յուրացման վերահսկողությունը ևս անհատականացված է: Աշակերտը կոնկրետ բաժին կամ թեմա ավարտելուց հետո պետք է հանձնի բանավոր կամ գրավոր քննություն: Արդյունքներից ելնելով որոշվում է աշակերտի հետագա անելիքը:

1. Անհատական աշխատանքային պլանների կիրառման արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում են ինքնուրույն աշխատելու, ինքնակազմակերպման, համագործակցային և այլ կարողություններ:

Փորձը ցույց է տալիս, որ չորրորդ դասարանի աշակերտները հստակ կարողանում են ինքնուրույն հաղթահարել ստեղծված խոչընդոտները, համագործակցել և պայմանավորվել ուսուցչի, ինչպես նաև ուսումնական խմբի այն անդամների հետ, ում հետ նրանք պետք է համատեղ աշխատեն: Աշակերտները հասկանում են, որ իրենց աշխատանքային պլանի կատարման արդյունավետությունը էապես կախված է նաև խմբի այլ անդամներից, քանի որ զույգային կամ խմբային աշխատանքները հնարավոր է անել միայն համապատասխան անդամների ներկայության դեպքում, իսկ տվյալ հանգամանքը դրդում է համագործակցության: Աշակերտները սկսում են հաշվի նստել խմբի համապատասխան անդամների քայլերի հաջորդականության հետ, պայմանավորվում են, որից հետո միայն կազմում են սեփական քայլաշարը: Ուսուցման կազմակերպչական բոլոր ձևերով աշխատելու շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են համապատասխանաբար ինքնուրույն, զույգային, խմբային և կոլեկտիվ ձևերով աշխատելու մի շարք կարողություններ:

Անհատական աշխատանքային պլանների կիրառմամբ ուսումնական գործընթացը կազմակերպելիս կարող են առաջ գալ որոշ խոչընդոտներ.

- համապատասխան պայմանների բացակայություն,
- աշակերտների ոչ բավարար քանակ,
- աշակերտների տարիքային առանձնահատկություններ:

Նշված ձևով ուսումնական գործընթացի կազմակերպումը հնարավոր է, եթե կան համապատասխան պայմաններ.

a. աշակերտների կողմից պետական ծրագրով նախատեսված ուսումնական նյութի յուրացումը տարբեր հաջորդականություններով /երթուղիներով[1,41]/, b. յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների ստուգումն՝ ըստ իր անցած նյութի, c. ուսումնական նյութի յուրացման ժամանակահատվածի որոշումն՝ ըստ յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունների, d. ուսումնական խմբի անդամների կողմից միևնույն նյութի յուրացումը՝ տարբեր ձևերով և միջոցներով, e. համապատասխան դիդակտիկ նյութերի, մշակումների առկայություն:

Հայտնի է, որ ուսուցման կազմակերպման ավանդական դաս-դասարանային համակարգում կազմակերպվող ուսումնական պարապմունքները /խմբային պարապմունքներ[1,41]/ չեն բավարարում նշված պայմանները: Թերևս կոլեկտիվ ուսուցման եղանակում կազմակերպվող ուսումնական պարապմունքները /կոլեկտիվ պարապմունքներ [1,41]/ ընձեռում են անհատական աշխատանքային պլանների կիրառման բոլոր հնարավորությունները:

Աշակերտների ոչ բավարար քանակը մասամբ կարող է խոչընդոտել խմբում ուսուցման կազմակերպչական ձևերի կիրառման արդյունավետությանը: Քանի որ անհատական աշխատանքային պլանների կիրառման արդյունքում, ուսումնական խմբում բնականորեն (ելնելով ուսուցման կազմակերպչական վերոնշյալ ձևերից) ձևավորվում են հարափոփոխ /ժամանակավոր/ խմբեր, ուստի, որքան շատ լինեն աշակերտները, այնքան հարափոփոխ խմբերի կազմման հնարավորությունները կմեծանան: Վերջինս կապահովի սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման ձևերի բազմազանությունը:

Աշակերտների տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ ուսուցիչը պետք է վերահսկի աշակերտների ինքնակազմակերպման գործընթացը, հետևի զույգային և այլ կազմակերպչական ձևերով աշխատանքների հստակ կատարմանը և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Հեղ. Հրատ.,Երևան, 2011թ.- 148էջ:
2. Մկրտչյան Վ., Սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառման անհնարինությունը դասարան-դաս համակարգում, ՀՊՄՀ ուսանողական գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Էդիթ Պրինտ» hր., Երևան 2015թ., 66-71 էջեր:

TEACHING MATHEMATICS IN FOURTH GRADE, ACCORDING TO STUDENTS' INDIVIDUAL WORK PLANS.

Baghoyan N. A., Mkrtchyan V. J.

Summary

The article is about how to organize the process of teaching mathematics in fourth grade, according to students' individual work plans. Individual student's work plan includes not only the content of the specific subject, but working forms for department utilization for the coming week. The organization of this form of learning allows students to take into account individual circumstances, ensure the quality of student learning material, as well as contributes to a variety of capacities for cooperation, communication, self-organization, self-employment and other development.

САМОСТОЯТЕЛЬНАЯ РАБОТА УЧАЩИХСЯ НА УРОКЕ МАТЕМАТИКИ

Шестакова Л.Г.

Соликамский государственный педагогический институт (филиал) ФГБОУ ВО «Пермский государственный национальный исследовательский университет», г. Соликамск, Россия

В настоящее время число школ с маленьким количеством учеников растет. Особенно усиливается эта тенденция в сельской местности.

Работа учителя в малокомплектной школе (МКШ) связана с необходимостью организации обучения в разновозрастных группах (как правило, совмещаются уроки в двух классах). В современной педагогике имеется описание некоторых приемов, средств, методов организации обучения в таких условиях. К ним можно отнести: коллективный способ обучения и его различные варианты; идеи программированного обучения; использование приемов и методов организации самостоятельной работы школьников; использование информационных технологий и дистанционного обучения и др.

Обучение в разновозрастных группах требует правильного педагогического обеспечения. Наиболее целесообразным и общедоступным в настоящее время видится рациональное использование в учебном процессе самостоятельной индивидуальной, групповой и парной работы учащихся.

Структура урока в МКШ имеет ряд особенностей. Обязательным является проведение самостоятельной работы учащихся. Урок в МКШ состоит из тщательно продуманного и спланированного чередования двух компонентов: работы учащихся под руководством учителя и самостоятельной работы. Рассмотрим организацию самостоятельной работы на разных этапах урока.

Этап подготовки к усвоению нового учебного материала. Учитель разъясняет учащимся цели задания и приемы его выполнения. По окончанию работы школьников учитель обобщает результаты наблюдений. Таким образом, деятельность учителя распадается на два этапа (введение и обобщение, подведение итогов), связанных одной целью (подготовить учеников к восприятию нового материала), между которыми включается самостоятельная работа.

Самостоятельная работа учащихся может проводиться в парах, группах или индивидуально и включать: выполнение заданий (в том числе и по учебнику); участие в игре, соревновании; взаимопроверку выполненного домашнего задания, теста, математического диктанта.

Этап изучения нового материала. Новый материал часто учитель объясняет ученикам сам. В случае организации самостоятельной работы учащихся на этом этапе можно применять:

– изучение нового учебного материала по учебнику, специально составленному тексту, информационной карточке или другим источникам информации;

– заучивание определений, свойств, правил, теорем, формул;

– ответы на заранее поставленные вопросы, придумывание вопросов, подбор примеров (контрпримеров);

– составление и заполнение таблиц, схем;

– составление плана и пересказ прочитанного.

Этап закрепления нового материала. Учитель часто вынужден после объяснения приемов использования новых знаний предлагать самостоятельную работу. Нужно выбрать такие приемы и формы работы, чтобы они не мешали работе учителя с другим классом. Функцию руководства в этом случае могут выполнять карточки или таблицы четких предписаний, указывающих пути получения нужных результатов. Этап закрепления обязательно завершается коллективной проверкой результатов самостоятельной работы и коррекцией результатов. Для организации самостоятельной работы на этом этапе можно использовать:

– поиск ответов на вопросы по учебнику, другим источникам информации;

– выполнение заданий по дидактическим материалам или учебнику, в том числе заданий с пропусками, с использованием тетрадей с печатной основой и карточек с дифференцированной помощью, образцов решения и др.;

–составление вопросов к изученному материалу.

Этап корректировки полученных знаний. В основном проводится непосредственно учителем. Самостоятельная работа учащихся может включать:

– обсуждение в парах или группах изученного материала, выполненных заданий;

– письменные ответы на вопросы;

– проверку (или взаимопроверку) ответов учащихся с использованием образцов ответов;

– составление вопросов учителю и одноклассникам;

– проверку (взаимопроверку) выполненных заданий и тестов с использованием образцов.

Одним из направлений реформирования системы образования является информатизация, основанная на внедрении в учебно-воспитательный процесс информационных и телекоммуникационных технологий. Это внедрение открывает широкие перспективы повышения эффективности обучения и интенсификации педагогической деятельности.

В условиях малокомплектной школы могут быть использованы следующие программные средства учебного назначения: обучающие программы; электронные учебники; средства компьютерного контроля знаний учащихся; возможности сети Интернет. Перечисленные средства могут использоваться на разных этапах урока для организации самостоятельной работы.

Использование новых средств обучения приведет к изменению всех компонентов системы образования, начиная от содержания обучения и заканчивая системными изменениями в технологии учебного процесса. При этом не следует исключать, что применение Интернет-технологий в учебном процессе может быть связано как с целенаправленной и сознательной деятельностью, творчеством, так и сводиться к формальным процессуальным сторонам мышления.

Подводя итог, отметим, что организация процесса обучения математике в условиях МКШ с объединенными классами требует, с одной стороны, от учителя более тщательной подготовки к уроку (распределения времени, отбора дидактических материалов, средств обучения и др.). С другой стороны, высвечивает задачу целенаправленной разработки и тиражирования материалов для организации работы школьников (индивидуальной, в парах, группах) без непосредственного руководства учителя.

ЛИТЕРАТУРА

1. Валеева Г.Р. Организация индивидуальной самостоятельной работы учащихся начальных классов сельской малокомплектной школы // Среднее профессиональное образование. – 2011. – № 3. – С. 26-28.
2. Организация учебно-воспитательной работы в малокомплектной сельской школе: методические рекомендации / Под ред. Н.В. Федосеенкова. – Петропавловск-Камчатский: Изд-во КИПКПК, 2009. – 163 с.

INDEPENDENT WORK OF PUPILS ON A LESSON OF MATHEMATICS

Shestakova L. G.

Summary

Independent work of students in the classroom in small schools is mandatory. The article discusses the possibility of using independent work at different stages of the lesson. Independent work can be spent in pairs or groups.

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ոսկանյան Վ.Կ.

ֆ. մ. գ. թ., դոցենտ

Յանկացած գիտություն կազմավորվում է իր ելակետային հասկացություններից և դրանց զարգացումից: Այդպիսին է նաև երկրաչափությունը: Երկրաչափական շատ հասկացությունների ծագման հիմքում ընկած են իրական աշխարհի այն առարկաները, որոնք ունեն երկրաչափական պատկերների տեսք: Այսինքն՝ այդ հասկացությունները ոչ թե զուտ մարդկային մտքի ստեղծագործության արդյունք են, այլ առնված են մարդուն շրջապատող իրական աշխարհից, ունեն նյութական ծագում և ձևավորվել են երկրաչափական պատկերների տեսք ունեցող օբյեկտների վերացարկումներից:

Երկրաչափության ցանկացած թեորեմ՝ որպես ընդհանրացված տեսական արդյունք, նկատվել և բացահայտվել է մարդկանց պրակտիկ-առարկայական գործունեության ընթացքում, որի արդյունքները մոդելավորվել են գծագրերում և տրվել բառային ձևակերպումները: Նույն ճանապարհին են անցել նաև երկրաչափական պնդումները, հաշվման և ապացուցման խնդիրը: Շատ դեպքերում դրանք առաջացել են հենց մոդելների հետ իրականացվող գործողություններից՝ այդ մոդելների նյութական նախատիպերի պատրաստման ընթացքում, ինչը հիմք է տալիս պնդելու, որ երկրաչափական գիտության հիմքում ընկած են կառուցման խնդիրները:

Մարդու մտածողությունը՝ որպես երևույթների միջև եղած կապերի բացահայտման, նորի որոնման ու հայտնագործման հոգեկան գործընթաց, ծագելով զգայական իմացությունից, հասկացությունների և դատողությունների միջոցով հանգեցնում է իրականության արտացոլման ([4]): Երկրաչափության մեջ մտածողության անմիջական առարկան իդեալականացված պատկերն է: Բայց մտածել չի նշանակում վերարտադրել հասկացությունների զգայական հատկությունները: Մտածել նշանակում է հետազոտել ելակետային իրադրությունը, վերլուծությունների ու համադրությունների միջոցով բացահայտել իրադրության ներսում առկա կապերն ու հարաբերությունները և գործունեության նպատակով պայմանավորված՝ փոխակերպել իրադրությունը:

Բազմաթիվ հոգեբանամանկավարժական հետազոտություններ վկայում են, որ պրակտիկ-առարկայական գործունեությունից դուրս հասկացությունների յուրացումը տեղի է ունենում ձևականորեն ([5]-[7]): Միայն զգայական ընկալումների և սահմանումների միջոցով հնարավոր չէ բացահայտել հասկացությունների էությունը և նրանց տարրերի միջև առկա կապերն ու հարաբերությունները: Պատահական չէ, որ ուսուցման ժամանակակից համակարգերում արժևորվում են ուսուցման այնպիսի մեթոդները, որոնք նպաստում են գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և սովորողների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացներին ([1]-[3], [8]-[9]):

Նշվեց, որ երկրաչափական պատկերի տեսք ունեցող որևէ առարկայի պատրաստման և այդ պատկերի գծագրի կառուցման հիմքում ընկած են միևնույն գործողությունները: Տարբերությունն այն է, որ առարկայի պատրաստումն իրականացվում է նյութականացված, իսկ գծագրի կառուցումը՝ իդեալականացված ձևով: Ուստի երկրաչափական պատկերների գծագրերի (որպես մոդելների) ինքնուրույն կառուցելու կարողության ձևավորումը պետք է դիտել որպես ուսումնաիմացական գործունեության տեսակ, որպես աշակերտների մտածողությունը զարգացնող միջոց: Բոլոր այն դեպքերում, երբ աշակերտը կատարում է երկրաչափական որևէ խնդրի կամ թեորեմի պայմաններին համապատասխան գծագրի կառուցում, նա իրականացնում է նաև խնդրով պայմանավորված երկրաչափական պատկերներին համապատասխանող առարկաների պատրաստման գործողություններ: Հետևաբար, աշակերտի մեջ մտածողության այս կամ այն տեսակի ձևավորումը պայմանավորված է ոչ միայն գիտելիքի տեսակով և գիտելիքի մատուցման ձևով, այլև նրանով, թե հասկացությունների յուրացման ընթացքում ինչ գործողություններ է նա իրականացնում: Գործողություններով պայմանավորված՝ նրա մեջ կարող է ձևավորվել վերարտադրողական կամ տեսական մտածողություն: Տեսական մտածողության ձևավորման ու զարգացման գործում կարևոր դերակատարություն կարող են ունենալ հատկապես երկրաչափական կառուցումները, քանի որ կառուցման գործընթացը ենթադրում է ոչ թե պատկերների գծագրերի պատճենահանում, այլ պատկերների կազմավորման հիմքում ընկած գործողությունների կատարում, առանց որի հնարավոր չէ բացահայտել երկրաչափական շատ հասկացությունների բովանդակությունը: Կառուցման գործընթացը նպաստում է նաև աշակերտների հետազոտական կարողությունների, մտահանգման, տրամաբանական բխեցման և ապացուցողական ունակությունների զարգացմանը, հետևաբար նրանց մեջ տրամաբանական հնարների (վերլուծություն, համադրում, համեմատում, կոնկրետացում, վերացարկում, ընդհանրացում) ձևավորմանը:

Գիտական հետազոտության ցանկացած գործընթաց իր մեջ ներառում է որոշակի փուլեր. տեղեկատվության (տվյալների) կուտակում և վերլուծություն, վերլուծության արդյունքների համադրում, հետազոտության նպատակի հիմնավորում, հետազոտության իրականացում, ստացված արդյունքների ամփոփում: Կառուցման խնդիրների լուծման կամ, ինչպես ընդունված է ասել, երկրաչափական կառուցումների գործընթացի հիմնական փուլերն են վերլուծությունը, կառուցումը, ապացուցումը (կամ կառուցման հիմնավորումը), հետազոտումը: Համեմատելով գիտական հետազոտության և երկրաչափական կառուցումների փուլերը՝ դժվար չէ եզրակացնել, թե աշակերտների հետազոտական կարողությունների և մտածողության զարգացման գործընթացում որքան կարևոր նշանակություն կարող է ունենալ երկրաչափության կառուցման խնդիրների ուսուցումը, քանի որ կառուցման խնդիրներ լուծելիս աշակերտները հարկադրված են կրկնել գիտական հետազոտության գործընթացի փուլերը, այդ թվում՝ վերլուծության փուլը:

Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական համակարգում երկրաչափական խնդիրներ լուծելիս կամ թեորեմներ ապացուցելիս առավելապես կիրառվում է դատողությունների ոչ թե վերլուծական այլ համադրական եղանակը, համաձայն որի՝ խնդրի լուծումը կամ թեորեմի ապացույցը սկսվում է պայմանից: Ելակետային դրույթը, որից պետք է սկսել խնդրի լուծումը և հաջորդական անցումներ իրականացնելով՝ հասնել պահանջի բավարարմանը, հաճախ չի հիմնավորվում և ներմուծվում է արհեստականորեն, ինչի հետևանքով դատողության մի փուլից մյուսին անցումներն իրականացվում են ոչ գիտակցված ձևով: Շատ աշակերտներ, հստակորեն չպատկերացնելով խնդրի (թեորեմի) պահանջը, չեն կարողանում կապել այն պայմանի հետ և պայմանն ու եզրակացությունը մտցնել դատողությունների միասնական շղթայի մեջ: Այդ իսկ պատճառով էլ խնդիրն ինքնուրույն լուծելու համար նրանք ստիպված են լինում կամ հիշել խնդիրների որոշակի տիպի լուծումներ, կամ առաջնորդվել «փորձի և սխալի» մեթոդով: Արդյունքում՝ նրանց մեջ ձևավորվում է մտածողության ոչ թե տեսական, այլ վերարտադրողական տեսակը:

Սակայն պետք է նշեմ՝ միշտ չէ, որ ՏՀՏ-ների ընձեռած հնարավորություններն ուսուցիչների կողմից օգտագործվում են տեղին՝ ըստ անհրաժեշտության և նպատակի: Ուստի, խոսենք մի քանի սկզբունքների մասին, որոնք մաթեմատիկայի ուսուցիչը պետք է նկատի ունենա ցուցադրում պատրաստելիս:

1. Երբ ուսուցիչը որոշում է տվյալ թեման ուսուցանել ցուցադրման միջոցով, պետք է հեռանկարում տեսնի ուսումնական նյութը նման ձևով ներկայացնելու **ակնհայտ առավելությունները,** քան դա կարվեր գրատախտակին կավիճով: Այսինքն՝ պետք չէ տարվել դասը համակարգչային տեխնիկայի կիրառմամբ անցկացնելու ցանկությամբ, այլ պետք է այնպես անել, որ ցուցադրման կիրառումը լինի **առավելագույնս արդարացված:**

2. Ցուցադրումներն այնպես պատրաստել, որ դրանց կիրառմամբ անցկացվող դասի ժամանակ հնարավոր լինի **դասարանը ներգրավել դասապրոցեսի մեջ՝** աշակերտները լինեն ոչ թե պասիվ դիտողի դերում, այլ դառնան ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցներ: Նման մոտեցման շնորհիվ խթանվում է սովորողների տրամաբանական մտածողությունը, և նրանց հնարավորություն է ընձեռվում կատարել համապատասխան հետևություններ և եզրահանգումներ: Իսկ ուսուցիչը, ձերբազատվելով պատրաստի գիտելիք հաղորդողի դերից, ստանձնում է դասապրոցեսը կազմակերպողի և վերահսկողի դերը:

3. Ցուցադման մեջ կարելի է ընդգրկել տվյալ թեմային վերաբերվող այնպիսի **լրացուցիչ տեղեկատվական, ցուցադրական կամ հետաքրքրաշարժ նյութ,** ինչը սովորական դասերի ժամանակ ցուցադրելու հնարավորությունները սահմանափակ են: Ցուցադրումներում այդպիսի նյութերի ընդգրկումը դասապրոցեսը դարձնում է գրավիչ, բովանդակալից ու հետաքրքիր, խթանում է աշակերտների սովորելու ցանկությունը, նպաստում նրանց մտահորիզոնի ընդլայնմանն ու արժեհամակարգի ձևավորմանը:

4. Երբ ուսուցիչը ստանձնում է ուսումնական նյութը էլեկտրոնային մշակմամբ ներկայացնելու պատասխանատու գործը, պետք է լինի չափազանց ուշադիր և հետևողական, որպեսզի **չհեռանա գիտականությունից.** ներկայացված փաստերը պետք է լինեն հիմնավորված,

մաթեմատիկական հասկացությունները՝ հստակ ձևակերպված, դատողությունները՝ որոշակի և կոնկրետ ([3], էջ 15):

5. Ցուցադրումներում ընդգրկել այնպիսի առաջադրանքներ, որոնք բացահայտում են մաթեմատիկական գիտելիքի **գործնական, կիրառական նշանակությունը:**

6. Ցուցադրումներում **տեքստերը պետք է լինեն հակիրճ, իսկ առաջնային հասկացությունները՝ ընդգծված:** Բանաձևերի, գրաֆիկների, գծապատկերների և մաթեմատիկայում գործածվող պայմանանշանների օգտագործումը, օբյեկտների հայտնվելու, թարթելու, տեղափոխվելու կամ անհայտանալու անիմացիոն էֆեկտների ճիշտ կիրառումը հնարավորություն կտան առանց ծավալուն տեքստերով սահիկները ծանրաբեռնելու մատուցվող նյութը դարձնել դիտողական և ընբռնելի:

7. Ցուցադրումներ պատրաստելիս պետք է լուրջ ուշադրություն դարձնել դրանց **գեղագիտական կողմի վրա.** գույները, պատկերները, նկարները պետք է այնպես համադրել, որպեսզի դրանք նպաստեն աշակերտների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Իհարկե, այստեղ կոնկրետ ցուցումներ տալը դժվար է: Սակայն, ուսումնական նյութի համակարգչային ձևավորման ժամանակ մի քանի պարզ կանոնների, այնուամենայնիվ, կարելի է հետևել.

1. սահիկները «չլցնել» այնպիսի պատկերներով ու նկարներով, որոնք կապ չունեն մատուցվող նյութի հետ,

2. խուսափել սահիկներում օբյեկտների և անիմացիոն էֆեկտների անհարկի օգտագործումից, ինչը կարող է շեղել աշակերտի ուշադրությունը բուն նյութից,

3. նյութի ներկայացման ձևերը, գրաֆիկական պատկերները, նկարները, սահիկների ֆոներն ու դրանց գույներն ընտրելիս հաշվի առնել աշակերտների **տարիքային առանձնահատկությունները:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ (փոփոխված 04.07.2012թ) http://www.aniedu.am/index.php/chaphophoshichner-ev-tcragrer/ (էջ 8, 9, 13, 14):
2. Մաթեմատիկա: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Անտարես, Երևան, 2006:

3. Միքայելյան Հ.Ս., Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Էդիթ Պրինտ, Երևան, 2003:
4. Մկրտչյան Հ.Հ., Սահակյան Օ.Վ., Հանրահաշվի դպրոցական դասընթացի դիդակտիկական սկզբունքների վերլուծություն, Մաթեմատիկան դպրոցում, № 5-6, 2000:

SOME CONSIDERATIONS ON CREATION OF ELECTRONIC TRAINING MATERIALS

Simonyan G. M.

Summary

In the article there are presented some considerations, which should be taken into account while preparing presentations. Their use must assist on the organization of the active educational process. The presentation may contain additional informational-demonstrative content to broaden the learners' horizon and tasks, which reveal the meaning of the practical, applicable importance of mathematical knowledge.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Սիրականյան Ն.Հ.
մ.գ.թ., Կրթության ազգային ինստիտուտ

Մաթեմատիկան ունի առանձնահատուկ դեր մարդկության զարգացման ու ժամանակակից քաղաքակրթության ձևավորման գործում: ՏՀՏ-ի զարգացումը, տարածության և ժամանակի լավ ըմբռնումը, բնության մեջ գոյություն ունեցող բազում օրինաչափությունների հայտնաբերումն ու նկարագրումը ցայտուն կերպով ընդգծում են մաթեմատիկայի գիտական և մշակութային արժեքը: Իսկ ամենակարևորն այն է, որ մաթեմատիկան նպաստում է մարդու մտավոր կարողությունների զարգացմանը:

Վրաստանի Ազգային ուսումնական պլանը (կրթակարգ) մի փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչպիսի սերունդների դաստիարակությանը պետք է նպաստի Վրաստանի ընդհանուր կրթական համակարգը, նպատակն է ազգային նպատակներին հասնելու համար ստեղծել նպաստավոր կրթական մթնոլորտ ու միջոցներ [2]: Դրանում ընդգրկված են նաև առարկայական ծրագրերը: Մաթեմատիկայի առարկայական ծրագրում ներկայացվում են առարկայի դասավանդման **նպատակներն ու խնդիրները, հիմնական կարողությունները և հմտությունները**, որոնց մշակմանը նպաստում է մաթեմատիկայի դպրոցական դասընթացը, **դասընթացի ուղղությունները**, ըստ այդ ուղղությունների **մաթեմատիկայի ուսուցումը տարբեր աստիճաններում**, **առարկայի ուսուցման կազմակերպումը,** տարբեր դասարանների համար **առարկայական չափորոշիչը, ծրագրի բովանդակությունն ու գնահատման չափանիշները**:

Հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման հիմնական նպատակներն ուղղված են սովորողների մտավոր կարողության, դեդուկցիոն և ինդուկցիոն մտահանգումներ անելու, տեսակետեր հիմնավորելու, երևույթները և փաստերը վերլուծելու ունակության զարգացմանը, մաթեմատիկայի, որպես աշխարհի նկարագրման և գիտության բազմակողմանի լեզվի յուրացմանը, որպես համամարդկային մշակույթի բաղկացուցիչ մասի ընկալմանը, ուսումնառության հետագա փուլի նախապատրաստմանը, կենսական խնդիրների լուծման համար անհրաժեշտ գիտելիքների հաղորդմանը և այդ գիտելիքները կիրառելու կարողության զարգացմանը [1]: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացը նպաստում է մի շարք կոմպետենցիաների ձևավորմանը, որոնցից առանցքային են համարվում դատողություն-հիմնավորումը, հաղորդակցությունը, մոդելավորումը, հիմնախնդիրների լուծումը և վերաբերմունքը [1]:

Վրաստանի և ՀՀ հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի առարկայական ծրագրերն էապես տարբերվում են միմյանցից, որի ավելի ցայտուն օրինակը 7-12-րդ դասարաններում Հանրահաշիվ, Երկրաչափություն, Մաթեմատիկական անալիզի տարրեր առարկաների ինտեգրված ուսուցանումն է՝ որպես «Մաթեմատիկա» առարկա, իսկ երկրաչափության մեջ հարթաչափության և տարածաչափության տարանջատում կատարված չէ:

Մաթեմատիկայի առարկայական ծրագիրը բաժանված է չորս ուղղության.

1. Թվեր և գործողություններ - այս ուղղության հիմնական նպատակներն են՝ զարգացնել «թիվը զգալու» ունակություն, յուրացնել հաշվարկման սկզբունքները, ուսումնասիրել թվաբանական գործողությունները և դրանց յուրահատկությունները, յուրացնել հաշվելու միջոցները և գնահատել արդյունքները, ուսումնասիրել գրառման դիրքային համակարգերը, համեմատել դրանք և գործածել թվաբանական գործնդություններ կատարելիս ու գործնական խնդիրներ լուծելիս, ուսումնասիրել թվային համակարգերը:

2. Երկրաչափություն և տարածության ընկալում - այս ուղղության հիմնական նպատակն է ուսումնասիրել երկրաչափական մարմինները և դրանց հատկությունները, չափումները, երկրաչափական ձևափոխությունները և հանրահաշվական մեթոդները երկրաչափության մեջ կիրառելը:

3. Օրինաչափություններ և հանրահաշիվ - այս ուղղության հիմնական նպատակն է աշակերտի մեջ զարգացնել օրինաչափության ձևավորման, հանրահաշվական ուղղությունների և ֆունկցիոնալ կախվածության ճանաչման և նկարագրման, ինչպես նաև դրանց միջոցով երևույթների մոդելավորման և հիմնախնդիրները լուծելու կարողություններ:

4. **Տվյալների վերլուծություն, վիճակագրություն և հավանականություն** - հանրակրթական դպրոցում վիճակագրական հասկացություններ ներմուծելու նպատակն է կարգավորել տվյալների մասին աշակերտների կռահողական պատկերացումները, զարգացնել տվյալները որպես կառուցվածք ձևավորելու ենթադրական-վիճակագրական եղանակները կիրառելու և կռահողության կարողությունը [1]:

Նշված ուղղությունները սերտորեն առնչված են միմյանց և ընդգրկում են այն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնց պետք է տիրապետի աշակերտը հանրակրթական դպրոցում: Ծրագիրն ունի ցիկլային կառուցվածք ըստ նշված ուղղությունների, իսկ սովորողներին ներկայացվող պահանջները չափորոշիչում ներկայացված են ոչ թե ըստ մակարդակների (նվազագույն, Ա խումբ, Բ խումբ), ինչպես ՀՀ հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի ծրագրում [3], այլ ըստ նշված ուղղությունների: Ծրագրում մեծ տեղ է հատկացված տվյալների վերլուծությանը, հավանականությանը և վիճակագրությանը: Վերջինս կազմում է ծրագրի գրեթե 30 %-ը: Միայն առաջին դասարանի ծրագրում այս ուղղությունը ընդգրկված չէ:

Հանրակրթական դպրոցը բաժանված է երեք աստիճանների՝ տարրական (I–VI դասարաններ), բազային (VII–IX դասարաններ) և միջնակարգ (X–XII դասարաններ), որոնցից յուրաքանչյուրում մաթեմատիկայի ուսուցումն ունի հստակ ձևավորված նպատակներ: Բոլոր դասարաններում մաթեմատիկան սովորում են որպես պարտադիր առարկա հետևյալ ժամաքանակով.

	Դասարան											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ժամա-քանակը	4/5	5	5	5	4	4	4 +2	4 +2	4 +2	5 +2	5 +2	5 + 1 (աբիտուրի ժամ) +2 *խորացված ուսուցում*

«Աբիտուրի ժամը» նախատեսված է XII դասարանում այն առարկաների համար, որոնցից անցկացվում են դպրոցի ավարտական քննությունները [1]:

Դասագրքերում ընդգրկված առաջադրանքներում շեշտը դրված է հիմնականում տրամաբանություն պահանջող խնդիրների վրա: Ընդգրկված են նաև առանձին թեմաների առնչվող նախագծեր, խմբային աշխատանքներ, էլեկտրոնային հասցեներ, լրացուցիչ գրականություն, որոնցում տրված են տվյալ թեմայի հետ կապված լրացուցիչ նյութեր: Նախագծերը բովանդակում են այնպիսի հարցեր, որոնք ուղղված են սովորողների գործնական գիտելիքների ձեռք բերմանը, ամրապնդմանը և ապահովում են միջառարկայական կապերը (քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, ինֆորմատիկա և այլն): Խնդիրները բովանդակում են նաև այնպիսի հարցեր, որոնք ընդգծում են մաթեմատիկայի դաստիարակչական նշանակությունը «ազգայինի» ուղղվածությամբ:

Վրաստանի հանրակրթական համակարգում կիրառվող գնահատման հիմնական տեսակներն են՝ որոշող ու զարգացնող: Որոշող գնահատումը վերահսկում է ուսուցման որակը, որոշում է աշակերտների առաջադիմության մակարդակը Ազգային ուսումնական պլանով սահմանված նպատակների համաձայն, որի ժամանակ գրվում է միավոր: Իսկ զարգացնող գնահատումը ստուգում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում է ուսուցման որակի բարելավմանը, որի ժամանակ կիրառվում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են **բանավոր մեկնաբանությունը, խորհուրդ-խրատը, դիտարկման թերթիկը, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման գծապատկերները և այլն** [1]: Ուսուցման գործընթացում կարևորվում է գնահատման այս երկու ձևերի մշտական կիրառումը: Այն նման է ՀՀ կրթական համակարգում կիրառվող միավորային և ուսուցանող գնահատումներին [3]:

I-IV, նոր կրթակարգով նաև V դասարանի առաջին կիսամյակում կիրառվում է զարգացնող գնահատում, իսկ միավորային գնահատումը կիրառվում է սկսած V դասարանի երկրորդ կիսամյակից 10 միավորային համակարգով [2]:

Կիսամյակի ընթացքում աշակերտները գնահատվում են երեք՝ **տնային դասարանական և ամփոփիչ առաջադրանք** բաղադրամասերով, որոնք ունեն միանման կշիռ: Տնային և դասարանական առաջադրանքների բաղադրամասերում կիրառվում է ինչպես որոշող, այնպես էլ զարգացնող գնահատումը, իսկ ամփոփիչ առաջադրանքի բաղադրամասում պարտադիր է որոշող գնահատման կիրառումը:

Մաթեմատիկա առարկայից գնահատվում են ոչ միայն սովորողների մաթեմատիկական գիտելիք-կարողություն-հմտություններն, այլև այնպիսի կենսական կարողություններ ու հմտություններ, ինչպիսիք են՝ ստեղծագործականությունը, համագործակցությունը և ակտիվությունը զույգի հետ աշխատելիս և խմբում:

Այսպիսով, ելնելով շարադրվածից, ամփոփ ներկայացնենք Վրաստանի հանրակրթական դպրոցներում մաթեմատիկայի ուսուցման մի քանի առանձնահատկություններ.

1. Ծրագիրը ներկայացված է ինտեգրված ձևով:
2. Սովորողներին ներկայացվող պահանջները չափորոշիչում ներկայացված են ըստ «Թվեր և գործողություններ», «Օրինաչափություն և հանրահաշիվ», «Երկրաչափություն և տարածության ընկալում», «Տվյալների վերլուծություն, հավանականություն և վճակագրություն» ուղղությունների: Ծրագիրն ունի ցիկլային կառուցվածք ըստ նշված ուղղությունների:
3. Դասագրքերում տրված են առանձին թեմաների առնչվող նախագծեր, խմբային աշխատանքներ, էլեկտրոնային հասցեներ, լրացուցիչ գրականություն, որոնք ուղղված են սովորողների գործնական գիտելիքների ձեռք բերմանը, ամրապնդմանը և ապահովում են միջառարկայական կապերը:
4. Ծրագրում մեծ տեղ է հատկացված տվյալների վերլուծությանը, հավանականությանը և վիճակագրությանը:
5. Մաթեմատիկայի խնդիրներում շեշտը դրված է ոչ այնքան հաշվողական, որքան տրամաբանություն պահանջող առաջադրանքների վրա:

6. Մաթեմատիկայի ծրագրում շեշտը դրված է նաև առարկայի դաստիարակչական նշանակությանը, մասնավորապես՝ ազգային:

7. Ծրագրում շատ թեմաներ ուսումնասիրվում է խորացված ուսուցման խմբերում, ինչը թույլ է տալիս ասելու, որ Վրաստանում Մաթեմատիկա առարկայի ծրագիրը ծանրաբեռնված չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://ncp.ge/ge/curriculum/satesto-seqtsia/mimdinare-esg-2011-2016(Գործող Ազգային ուսումնական պլան 2011-2016 թթ.)-վրացերեն
2. www.ge/ge/cirriculum/satesto-seqtsia/akhali-sastsavlo-gegmebi-2017-2023(Նոր Ազգային ուսումնական պլան 2017-2023 թթ.)-վրացերեն
3. www.aniedu.am (Կրթության ազգային ինստիտուտ)

THE PECULIARITIES OF TEACHING MATHEMATICS AT GEORGIAN SCHOOLS

Sirakanyan N.H.

Summary

The article presents the curriculum plan of the Mathematics subject, learning objectives of the subject and content directions in public schools of Georgia. Courses of the Mathematics subject, organization of learning process, subject criterians and assessment are the main points whics contributes for the development of the curriculum plan.

ОСОБЕННОСТИ РЕШЕНИЯ ТЕКСТОВЫХ ЗАДАЧ ЛОГИЧЕСКИМ СПОСОБОМ

Воложанинова А.Н.

Соликамский государственный педагогический институт (филиал) ФГБОУ ВО «Пермский государственный национальный исследовательский университет

Задачи в школьном курсе математики традиционно занимают значительное место. Они решаются различными способами: алгебраическим, арифметическим, геометрическим, практическим, логическим [2, с. 31]. В данной статье рассмотрим логический, который в школьном курсе математики часто мало распространён, но он хорошо способствует развитию логического мышления.

При решении математических задач выделяют четыре основных этапа: ознакомление с условием задачи; изучение условия задачи; поиск способа решения задачи; оформление решения.

Решая задачу логическим способом, особое внимание уделяется второму [3] и четвертому этапу.

Т.Е. Демидова, А.П. Тонких выделяют семь видов задач, решаемых логическим способом [1, с. 14]. Это задачи на переливания, на взвешивания, на переправы, на разъезды, на дележи, на движение и задачи, решаемые с помощью логических уравнений. Решая задачу логическим способом, обычно не делают никаких вычислений, все основывается на логических рассуждениях. Решение задачи оформляется алгоритмом, представленным в виде блок-схемы, таблицы или словесно.

Рассмотрим задачу на переливание.

Пример 1. Имеются два сосуда объемом 3 л и 5 л. Как при помощи этих сосудов налить 4 л воды из водопроводного крана? [1, с. 257]

Решение задачи будем осуществлять по четырем основным этапам, выделенным ранее.

1. Ознакомление с условием задачи.

На данном этапе учитель может задавать учащимся следующие вопросы:

Что неизвестно? (Каким способом налить 4 л воды)

Что дано? (Два сосуда в 3 и 5 литра)

В чем состоит условие? (Налить 4 л воды, используя данные сосуды)

Данные вопросы помогут понять смысл задачи.

2. Изучение условия задачи.

Данный этап важен при решении текстовых задач логическим способом, поэтому на него стоит обратить максимум внимания. Учитель может задать учащимся следующие наводящие вопросы.

Что дано? (Сосуды объемом в 3 и 5 литров).

Что можно найти? (Как с помощью этих сосудов налить 4 литра воды).

Что следует? Найденный результат будет ответом? (Да).

Отвечая на наводящие вопросы учителя, учащиеся подробно разбирают условия задачи. Как получить 4 л воды? (Для того чтобы получить 4 литра воды необходимо из 5-литрового сосуда отлить 1 литр воды. Это возможно сделать если в 3-литровом сосуде будет 2 литра воды. Это количество воды можно получить отлив из 5-литрового сосуда 3 литра воды).

3. Поиск способа решения задачи.

Обычно, при решении текстовой задачи задач логическим способом, никаких больших арифметических операций не выполняют. Задачи решаются по давно выстроенному алгоритму. Поэтому этап поиска решения задачи не вызывает особых затруднений у учащихся.

Для того чтобы научить детей пошагово находить решение задачи, учитель может задавать учащимся следующие вопросы.

Как будем решать задачу? (Будем переливать воду и записывать результат в таблицу).

Затем можно приступить к выполнению намеченного плана решения.

4. Оформление решения обычно делают в виде таблицы. Данную задачу можно решить двумя способами.

Способ 1.

Таблица 1

Процесс переливания воды (а)

Переливание	**5 л**	**3 л**
1-е –	5	0
2-е –	*2*	3
3-е –	2	0
4-е –	0	2
5-е –	5	2
6-е –	4	3

Получилось, что задача решается в шесть переливаний, но можно и по-другому решить данную задачу.

Способ 2

Таблица 2

Процесс переливания воды (б)

Переливание	**5 л**	**3 л**
1-е –	0	3
2-е –	3	0
3-е –	3	3
4-е –	5	1
5-е –	0	1
6-е –	1	0
7-е –	1	3
8-е –	4	0

Во втором способе решения задачи получилось восемь переливаний, но оба способа уместны. Можно отметить, что при решении текстовых задач логическим способом важно поэтапно выполнять действия. Сложность данного способа заключается в его низкой алгоритмичности (по сравнению с алгебраическим способом).

Описанный материал был внедрен в процесс обучения учащихся 6 «б» класса в МАОУ «СОШ № 17» г. Соликамска на кружковых занятиях. Проведенная работа показала, что логический способ решения задач положительно влияет на формирование универсальных логических действий, которые являются важной составляющей познавательных УУД. Они обеспечивают построение самостоятельного процесса поиска, обработки и систематизации информации.

ЛИТЕРАТУРА

1. Демидова, Т.Е., Тонких А.П. Теория и практика решения текстовых задач: учебное пособие для студентов высших пед. учеб. заведений. – М.: Издательский центр «Академия», 2002. – 288 с.
2. Шестакова, Л.Г. Методика обучения школьников работать с математической задачей: учебное пособие для студентов. – Соликамск: СГПИ, 2013. – 106 с.
3. Шестакова, Л.Г. Основные пути поиска способа решения задачи в процессе обучения математике // Научные труды SWorld. – 2013. – Т. 13. – № 1. – С. 58-62.

SOLUTIONS TO WORD PROBLEMS LOGICAL WAY

Volozhaninova A. N.

Summary

A logical method of solving word problems is rarely seen in the school course of mathematics, but this method is fruitful influence on the development of logical thinking of students, which directly positively affects their academic performance.

МАТЕМАТИКА И ЭСТЕТИКА: ОТ ПИФАГОРА ДО МАНДЕЛЬБРОТА

Волошинов А.В.

д. ф. н., профессор, Саратов

Математика и эстетика – высшие выразители языка науки и философии искусства – традиционно относят к разным полюсам духовной активности человека. Между тем единство математики и эстетики заявило о себе задолго до появления и математики, и эстетики. Безупречная *математическая* симметрия неолитических орнаментов, равно как и их чарующая *эстетическая* привлекательность не оставляют сомнений в том, что математика и эстетика шли рука об руку с доисторических времен.

Историю математики как самостоятельной науки и историю имплицитного периода эстетики как философии красоты математики и эстетики единодушно начинают с VI в. до н.э., со школы Пифагора. И с самого начала своего пути математика и эстетика заявили о своем единстве. Два открытия Пифагора и его школы свидетельствуют об этом единстве. Первое – это открытие *закона консонансов,* второе – *нахождение золотых пропорций в пентаграмме.* Закон консонансов впервые указывал на существование числовых закономерностей в природе и впервые устанавливал, что гармония и красота определяются числом. Это был одновременно закон математической физики и эстетики. Есть основания полагать, что от пифагорейцев золотые пропорции пентаграммы перешли в греческое искусство.

Однако величие Пифагора состояло не только в том, что он открыл закон консонансов, но и сумел оценить его подлинное мировоззренческое значение. Не только «земная» музыка есть гармония и число, но и все мироздание имеет прекрасное, простое и ясное математическое устройство, весь мир есть гармония и число, во всей Вселенной звучит божественная *музыка небесных сфер.*

Идеи Пифагора вскоре были подхвачены Платоном и сформулированы им в виде важнейшего методологического принципа науки – *принципа математизации науки.* Не менее значимой является и эстетическая сторона идей Пифагора о гармонии мироздания. Мысль о красоте, простоте и гармонии мироздания проходит путеводной нитью по всей истории науки. После Пифагора и Платона, развившего тезис Пифагора о гармоничном и математическом устройстве мироздания, эксплицитное единство математики и эстетики прослеживается настолько четко, что кажется странным, почему сегодня упоминание об этом единстве вызывает удивление. Аристотель, утверждавший, что математика говорит также и о прекрасном и благом, Августин, считавший, что число лежит в основе всякого восприятия красоты, Фома Аквинат, Альберти, Леонардо, Пачоли, Дюрер.

Единственным обстоятельством, которое омрачало союз математики и эстетики, была нестыковка между целочисленными пропорциями музыкальных отношений и иррациональной пропорцией золотого сечения. С точки зрения математики эти пропорции отличаются принципиально, хотя с точки зрения эстетики они должны совпадать. Но и это принципиальное различие в двух типах эстетически значимых пропорций было преодолено в трудах Фибоначчи в самом начале XIII в. Как оказалось, иррациональное отношение золотого сечения есть предел рациональных отношений двух соседних чисел Фибоначчи, а отношение первых чисел Фибоначчи есть известные пифагорейские консонансы.

Еще через 300 лет в 1509 г. францисканский монах Лука Пачоли в трактате «Divina Proportione» назвал известное со времен Евклида деление отрезка в крайнем и среднем отношении *Sectio divina – божественной пропорцией*. Пачоли рассмотрел тринадцать свойств божественной пропорции, называя их эпитетами самых превосходных степеней, и по существу провозгласил божественную пропорцию непререкаемым каноном красоты. Друг Пачоли Леонардо сделал 60 рисунков к трактату, что в немалой степени способствовало успеху трактата, хотя сам Леонардо предпочитал называть пифагорейскую пропорцию *Sectio aurea – золотое сечение.* Но Леонардо, безусловно, разделял взгляды Пачоли на выдающуюся роль золотого сечения в эстетике и математике.

И еще через 300 лет, в середине XIX в., с выходом в свет труда А. Цейзинга «Новое учение о пропорциях человеческого тела», золотое сечение предстало как основной морфологический закон природы и искусства. Эстетико-математическая система Цейзинга может быть сведена к трем основным положениям: золотое сечение господствует в искусстве; золотое сечение господствует в природе; золотое сечение господствует в искусстве именно потому, что оно господствует в природе. Так по прошествии двух тысячелетий вновь зазвучал Аристотелев тезис о подражании искусства природе.

Минувший XX век принес немало доказательств союза математики и эстетики. К числу фундаментальных принципов, на которых строится этот союз, следует отнести *принцип симметрии.* Именно в XX в. стало отчетливо понятно, что принцип симметрии фактически лежит в основе всего мироздания. В 1918 г. Эмми Нётер доказала знаменитую теорему о соответствии каждому виду симметрии своего закона сохранения. В середине XX в. американские физики Цзундао Ли и Чжень-нин Янг (1958), а затем Юджин Вигнер (1963) получили Нобелевские премии за открытие фундаментальных законов симметрии атомного ядра. В это же время Джеймс Уотсон, Фрэнсис Крик и Морис Уилкинсон (1962) получили Нобелевскую премию за установление молекулярной структуры нуклеиновых кислот – открытие знаменитой симметричной структуры двойной спирали молекулы ДНК. И в это же время с помощью мощных телескопов были открыты спиральные галактики, так что спиральная симметрия стала известна повсюду – от микро- до макрокосмоса.

Конец XX в. знаменовался взлетом новой *трансдисциплинарной* науки, названной *синергетикой.* Синергетика как *теория сложных самоорганизующихся систем,* имеющая своим математическим аппаратом нелинейные уравнения, привнесла и целый спектр новых особенностей, ранее неизвестных или недоступных естествознанию – это необратимость, альтернативность, непредсказуемость, спонтанность и др. Эти принципиально новые положения составили основу *нелинейного мышления*. Но эти же признаки исконно считались неотъемлемыми чертами искусства и творчества, т.е. неотъемлемым предметом изучения эстетики. Итак, в синергетике происходит стирание границы между наукой и искусством, между естественными и гуманитарными науками, между поведением человека и природы. Именно *синергетика открывает новый союз математики и эстетики.*

Синергетика не только разрабатывает новые математические методы изучения хаоса, но и позволяет дать новую эстетическую оценку креативной роли хаоса в мироздании. Синергетическая парадигма открывает новое видение красоты как неустойчивого балансирования на границе космоса и хаоса. Ярким примером балансирования красоты на границе космоса и хаоса стали открытые в конце XX в. американским математиком Бенуа Мандельбротом *фрактальные структуры.* Не только сами фракталы стали объектом пристального внимания синергетики, но и красота фракталов явилась предметом самых заинтересованных обсуждений. Множество Мандельброта, таящее в себе бесконечное разнообразие фрактальных структур, стало не только символом новой фрактальной геометрии конца XX в., но и символом неисчерпаемой красоты математики.

Вообще после эпохи Ренессанса, времени Пачоли и Леонардо, XX в. можно назвать веком *постнеклассического ренессанса золотого сечения.* В XX в. закон золотого сечения получает огромное число поразительных эмпирических доказательств и приложений в самых различных областях знания.

В 1974 г. оксфордский астрофизик и математик Роджер Пенроуз изобрел способ квазипериодического покрытия плоскости с помощью двух типов ромбов, имеющих пропорции золотого сечения: «толстого» ромба со сторонами 1 и большой диагональю Φ и «тонкого» ромба со сторонами 1 и малой диагональю φ. Покрытие Пенроуза образует изящную квазипериодическую структуру, тяготеющую к пентагональной симметрии. При больших площадях покрытия отношение «толстых» и «тонких» ромбов стремится к числу Φ. Разумеется, и «толстые» и «тонкие» ромбы как фигуры с пропорциями золотого сечения содержатся в пифагорейской пентаграмме.

В 1976 г. Роберт Амманн обобщил двумерную задачу Пенроуза на трехмерный случай и нашел трехмерные квазипериодические покрытия пространства «толстыми» и «тонкими» ромбоэдрами. Однако и двумерные, и трехмерные квазипериодические покрытия, по признанию самого астрофизика Пенроуза, оставались не более чем математическими развлечениями, изящной игрой эстетствующего ума математиков.

Каково же было изумление и Пенроуза, и Амманна, и всей научной общественности, когда через 10 лет, в 1984 г., израильский материаловед Дан Шехтман открыл квазипериодические структуры очень похожие на решетки Пенроуза-Амманна в аллюминиево-марганцевом сплаве. Эти структуры, названные *квазикристаллами,* представляют собой непериодические структуры, основанные на пентагональной и икосаэдрической симметрии, и в силу этого они пронизаны пропорциями золотого сечения по всем направлениям и обладают чарующей эстетической привлекательностью.

Открытие Шехтмана буквально перевернуло современную кристаллографию, ибо всегда считалось, что симметрия пятого порядка может встречаться только в живой природе и в мире кристаллов в принципе невозможна. В 2011 г. за открытие квазикрасталлов Шехтману была присуждена Нобелевская премия по химии. Пентагональные симметрии квазикристаллов являются самым последним доказательством единства математики и эстетики.

MATHEMATICS AND AESTHETICS:FROM PYTHAGORAS TO MANDELBROT

Voloshinov A., Ignatova M.

Summary

It has been shown that mathematics and aesthetics are connected by the deep inherent unity which may be tracked back to their whole history since Pythagoras' school in the 6th century B.C. Special attention is paid to the modern scientific theories consolidating the unity of mathematics and aesthetics: structural and symmetrology analysis, synergic paradigm, fractal geometry. Thus the unity of mathematics and aesthetics is not gone with the syncretism epoch but on the contrary is gaining strength.

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վարդապետյան Վ.Վ.

Մ.գ.թ. ,դոցենտ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Հանրակրթական դպրոցում ուսուցման գլխավոր նպատակը աշակերտներիի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն և անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեության կազմակերպման արդյունավետ պայմանների ստեղծումն է:

Ժամանակակից կրթական համակարգերում կարևորվում են այնպիսի մոդելների, տեխնոլոգիաների օգտագործումը, որում ուսուցման էությունը չի հանգեցվի ո՛չ սովորողներին պատրաստի գիտելիքների հաղորդմանը, ո՛չ դժվարությունների ինքնուրույն հաղթահարմանը, ո՛չ էլ սովորողների սեփական հայտնագործություններին՝ կարևորելով դպրոցականի սեփական նախաձեռնությանն, ինքնուրույնությանն և ակտիվությանը: Ահա այսպիսի որակների ձեռքբերմանն էլ նպաստում են ինտերակտիվ տեխնոլոգիաները:

Ուսումնամեթոդական գրականության մեջ ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ, ակտիվ, ինտրերակտիվ:

Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դա նշանակում է, որ աշակերտները յուրացնում են նյութը ուսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք :

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելն իբրև նախապայման ունի ստեղծագործական առաջադրանքների (ավելի հաճախ՝ տնային) առկայությունը և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցչի հետ:

Ինտերակտիվ մոդելն ի առջև նպատակ է դնում ստեղծել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են:

Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն՝ հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր:

Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցման համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցչի կարևորագույն խնդիրը տեղեկությունների փոխանակման գործընթացի ուղղորդումն և օգնությունն է, որպեսզի սովորողները բացահայտեն տեսակետների բազմազանությունը, օգտա-գործեն և հարստացնեն իրենց անձնական փորձը, տեսությունը և պրակտիկան միավորեն, ավելի դյուրին դարձնելով նրանց ընկալումը, յուրացումը և փոխըմբռնումը:

Ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում է ուսումնական տեղեկությունն իր միջով անցկացնող «զտիչի» դեր, ինտերակտիվի ժամանակ՝ աշխատանքում օգնականի դեր, ով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը:

Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը: Կազմակերպչի դերի թերություններից է նախապատրաստության ժամանակ ուսուցչի գործի աշխատատարությունը, արդյունքների ճշգրիտ պլանավորման բարդությունը: Ինտերակտիվ ռեժիմի ժամանակ արգելքների աղբյուր կարող է լինել աշակերտների ընկալման տարբերությունը:

Ծանոթանանք մի քանի ինտերակտիվ տեխնոլոգիաների և մեթոդների, որոնց միջոցով կարելի է ուսուցման ինտերակտիվ մոդելը ներդնել մաթեմատիկայի դասերին.

- Աշխատանք փոքր խմբերում:

Առաջադրանքների ծառ տեխնոլոգիա. էությունը հետևյալն է՝ աշակերտները բաժանվում են հավասար քանակությամբ խմբերի: Յուրաքանչյուր խումբ քննարկում է հարցը և գրառումներ կատարում «իր ծառի» վրա, հետո խմբերը, տեղափոխվելով «հարևան ծառ», ներկայացնում են իրենց կարծիքները:

- Կարուսել: Տեխնոլոգիայի էությունը կայանում է նրանում, որ դասարանում ձևավորվում են երկու՝ ներքին և արտաքին օղակներ: Ներքին օղակը անշարժ սովորողներն են, իսկ արտաքինը՝ որոշակի ժամանակից փոխվում են շրջանով: Այդ օղակներին առաջարկվում է մի քանի քարտեր, որոնք պարունակում են հարցեր, առաջադրանքներ կամ խնդիրներ ինչ-որ թեմայից : Ներքին օղակի սովորողները ստանում է առաջին քարտը և բացատրում խնդիրի լուծման իր տեսակետը արտաքին օղակի իր ընդիմախոսին և լսում է նրա տեսակետը: Այնուհետև արտաքին օղակի սովորողը ստանում է նոր խնդիր: Փոխվելուց հետո բոլոր սովորողները ստանում են նոր քարտ՝ նմանատիպ առաջինին և նույն գործընթացը կրկնվում է: Այդ ձևով նրանք հասցնում են հաշված րոպեների ընթացքում խոսել ուսուցչի կողմից առաջարկված թեմաների, խնդիրների մասին՝ փորձելով զրուցակցին ապացուցել պատասխանի ճիշտ տարբերակը: Բացի խնդիրներից նման քննարկումների կարելի է կազմակերպել հետևյալ թեմաներով՝ «Խնդիրը և նրա գեղագիտական գրավչությունը», «Մաթեմատիկական կրթությունն ու գեղագիտական ճաշակը» և այն, ինչը ակտիվացնում և ավելի հետաքրքիր է դարձնում ուսումնական գործընթացը:

- Դասախոսություն՝ հիմնախնդրային շարադրանքով (արդյունավետ է կիրառել ավագ դպրոցում կամ բուհերում)

- Քեյս: Տեխնոլոգիան բնութագրվում է կոնկրետ ուսումնական իրավիճակի վերլուծությամբ :

- Էվրիստիկական զրույցի մեթոդը: Է.Պոյան էվրիստիկան բնութագրում էր սկզբունքների և կանոնների համախումբ, որոնք տանում են դեպի գյուտերի և հայտնագործության: Խնդիրների լուծման համար նա առաջարկում է սովորողների պատասխանել կամ իրեն տալ հետևյալ հարցերն. Ինչն է անհայտ, ինչն է տրված, որն է պայմանը, արդյոք այս խնդիրը այլ ձևակերպումով ինձ չի հանդիպել, և արդյոք հնարավոր չէ օգտվել դրանից :

- Դաս-սեմինարներ (մտային գրոհի, բանավեճերի, մտքերի փոխանակության ձևաչափով)
- Մուլտիմեդիա միջոցների օգտագործում
- Գործարար և դերային խաղեր: Դերային և գործարար խաղերը օգնում են ձևավորել հաղորդակցական, փոքր խմբերում աշխատելու կարողություններ, մտածողության ինքնուրույնություն և այլն: Գործարար խաղերը ուղղված են պրակտիկ խնդիրների լուծմանը:

Օրինակ ակվարիումը դերային խաղ է, որին մասնակցում են մի քանի աշակերտներ և իրավիճակը խաղարկում են շրջանաձև, իսկ մյուսները, հետևելով իրավիճակին, կատարում են արդյունքների վերլուծություն: Ինչը սովորողներին հնարավորություն է տալիս տեսնել, թե իրենց ընկերները ինչպես են շփվում, ինչպես են արձագանքում ուրիշների մտքերին, ինչպես են փաստարկում իրենց մտքերը և այլն:

- նախագծերի մեթոդ (Նախագծերի մեթոդը որևէ հիմնախնդրի մանրամասն մշակմամբ ուսուցման նպատակներին հասնելու եղանակ է, մշակումը պետք է ավարտվի շոշափելի պրակտիկ արդյունքով: Այն որոշակի հաջորդականությամբ իրականացվող հնարների, գործողությունների համախումբ է, միտված դրված նպատակի իրականացմանը):

Բերենք դասի օրինակ, որի ժամանակ սովորողների փոխուսուցումն իրագործվում է «Մաթեմատիկական բանկիր» կոչվող խաղի ձևով: Դասարանը բաժանվում է երկու հոգանոց խմբերի, որոնք ներկայացնում են բանկ (բանկի կառավարիչ և տեղակալ): Սեղանին դրված են առաջադրանքներ պարունակող քարտեր՝ շրջված տեսքով, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 10-ից մինչև 100 պայմանական միավոր է՝ կախված առաջադրանքի բարդությունից: Դրանք հնարավոր ներդրումներն, ավանդներն են և այլն: Յանկացած բանկի կապիտալը 1000 միավոր է: Ընտրելով քարտը և լուծելով առաջադրանքը բանկը ավելացնում է իր կապիտալ տրված գումարով, եթե խնդիրը լուծված է ճիշտ, հակառակ դեպքում կորցնում է նույնքան: Խաղը ընթանում է մեկ կամ երկու դասի ժամանակ, իսկ վերջում ամփոփվում են արդյունքները՝ ըստ բանկի կապիտալի:

Իմ կողմից անցկացրած մի քանի դասերի վերլուծությունը ցույց են տվել, որ ուսուցման ինտերակտիվ մեթոդները ակտիվացնում են աշակերտներին՝ բոլորին ընդգրկելով ուսումնական գործընթացի մեջ, ապահովում են սովորողների գիտելիքների՝ ինքնուրույն ձեռքբերումը, սոցիալականացումը, ստեղծում են ստեղծագործական մթնոլորտ, ինչը և պահանջում է ժամանակակից մաթեմատիկայի դասը: Չնայած բազմաթիվ առավելություններին, ինչպես ուսուցման բոլոր մեթոդները, տեխնոլոգիաները, այնպես էլ ինտերակտիվ ուսուցումը ևս ունի որոշ թերություններ.

Ինտերակտիվ ուսուցման դրական և բացասական կողմերը	
+	-
Սովորողների դերը՝ ակտիվ. սովորողներն իրենք են հանդես գալիս որոշումներ կայացնողի դերում, ուսուցման գործընթացը հնարավորինս անհատականացվում է	Տեղեկատվության ծավալը. Ոչ մեծ ծավալով նյութի յուրացում
Մանկավարժի դերը. հանդես է գալիս որպես լիդեր, ուսուցման կազմակերպիչ	Ուսուցման գործընթացի վերահսկողությունը. Դասավանդողը քիչ վերահսկողություն ունի ժամանակի, ուսման ծավալի, խորության և ուսուցման մուտքի վրա: Սովորողների աշխատանքի արդյունքը քիչ կանխատեսելի է:
Ուսուցման մոտիվացիան. որպես կանոն՝ ներքին, մեծանում է մոտիվացիայի աստիճանը	Սովորողների պատրաստվածությունը. Նրանք մակերեսորեն են ընկալում նյութը, եթե նախօրոք բավարար պատրաստվածություն չունեն տվյալ թեմայից
ՈՒսուցման խորությունը և յուրացման գործընթացը՝ բարձր. սովորողները յուրացնում են ճանաչողության բոլոր մակարդակները, լայն հնարավորություն է տրվում ստեղծագործության	Ժամանակ. Բավականին ժամանակատար է, ինչը երբեմն խոչընդոտում է ծրագրի կատարմանը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնական շփման պայմաններում նկատվում է ընկալման ճշտության բարձրացում, մեծանում է հիշողության աշխատանքի արդյունավետությունը, ավելի ինտենսիվ են զարգանում անձի այնպիսի ինտելեկտուալ և հուզական բնութագրերը, ինչպիսինն են ուշադրության կայունությանը, նրա բաշխման կարողությունը, ընկերոջ գործունեությունը վերլուծելու ունակությունը: Կարելի է ասել, որ ինտերակտիվ ուսուցումը օգնում են սովորողին սովորել՝ ուսումնական գործընթացը դարձնելով բազմազան, հետաքրքիր, ստեղծագործական և հանդիսանում են մանկավարժության հեռանկարային ուղղություններից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Ս.Միքայելյան, Գեղեցիկը և մաթեմատիկական կրթության ներուժը, Ե-2015
2. Селевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М.: НИИ школьных технологий, 2005.
3. Панина, *Т. С.* Современные способы активизации обучения /Т.С. Пани -на, л.н.Вавилова;под ред. Т. С. Паниной. – Москва : академия,2007. – 176 с.

INTERACTIVE TECHNOLOGIES IN THE TEACHING PROCESS OF MATEMATICS

VARDAPETYAN V. V.

Summary

Modern school tends to do its developing and self-educating abilities in the process of teaching. Interactive technologies greatey help to formulate these abilities. The article reveals some interactive technologies and methods and their purposeful usage will increase the productivity of the maths lesson.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
14 – 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2016 ԹԻՎ
(նյութերի ժողովածու)

Mathematical Education
Proceedings of international conference
14-15 October, 2016

Математическое образозание
Сборник докладов международной конференции
14-15 октябрь, 2016

Ստորագրված է տպագրության՝ 12.12.2016
Թուղթը՝ «օֆսեթ»: Տպագրությունը՝ ռիզո, Ֆորմատ՝ (60×84) 1/16:
Շարվածքը՝ համակարգչային:
Տառատեսակը՝ Sylfaen: 12.125 տպ. մամ.:
Պատվեր՝ 650: Տպաքանակ՝ 100

Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի տպարան
Երևան, Տերյան 105
Հեռ.՝ 52-03-56

Типография Национального Политехнического Университета Армении
Ереван, ул. Теряна 105
Тел.: 52-03-56

Printing house of National Polytechnic University of Armenia
105 Teryan str. Yerevan,
Tel. 520 356